1950

Վ. Ի. Լենին

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՌԵՆԵԳԱՏ ԿԱՈՒՑԿԻՆ

3К2.3
П-94

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ
1 9 3 5

Պրոլետարնե՛ր բոլոր յերկիրների, միացե՛ք

Վ. Ի. Լենին

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՌԵՆԵԳԱՏ ԿԱՈՒՑԿԻՆ

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ
1935

3Կ23
Պ-94
01 JUN 2005
03 NOV 2009

11 SEP 2013

1950

Թարգմ. Ց. Խանզադյան
Պատ. խմբ. Դր. Սիմոնյան
Տեխն. խմբ. Տ. Խաչվանքյան
Սրբագրիչ Վ. Չիլեչյան
Կոնտր. սրբագրիչ Ա. Տ—Մկրտչյան

▲

Գլավլիտի լիազոր C—48
Հրատ. № 290, պատվ. № 222, տիրաժ 5000
Ինդեքս ПЛИ/НП

▲

Հայկուսհրատի տպարան, Երևան, Ալավերդյան № 27

Публ. Библиотека
ССР А
им. А. Мясникяна

4102
39

В. И. ЛЕНИН

ПРОЛЕТАРСКАЯ РЕВОЛЮЦИЯ И РЕНЕГАТ КАУТСКИЙ

Армпартиздат, Эривань 1935 г.

ԱՌԱՋԱԲԱՆ

*Կաուցկու նորերս Վիեննայում լույս տեսած «Պրոլետարիատի դիկտատուրան» բրոշյուրը (*Wien, 1918, Ignaz Brand, *եջ 63) ներկայացնում է* II *Ինտերնացիոնալի այն ամենալիակատար և ամենախայտառակ սնանկության ամենաակնառու օրինակը, վորի մասին վաղուց են խոսում բոլոր յերկիրների բոլոր ազնիվ սոցիալիստները: Պրոլետարական հեղափոխության հարցը այժմ գործնականորեն օրակարգի մեջ է դրվում մի ամբողջ շարք պետություններում: Ուստի անհրաժեշտ է Կաուցկու ռենեգատային սոֆիզմների և մարքսիզմից լիակատար կերպով հրաժարվելու իրողության քննությունը:*

Բայց նախ պետք է ընդգծել, վոր այս տողերը գրողը պատերազմի հենց սկզբից առիթ է ունեցել բազմիցս նշելու Կաուցկու կապի խզումը մարքսիզմի հետ: 1914—1915 թվականների մի շարք հոդվածներ՝ արտասահմանյան «Социал-Демократ»*-ում և* «Коммунист»*-ում նվիրված են դրան: Այդ հոդվածները ժողովված են Պետրոգրադի Խորհրդի հրատարակության մեջ.* Г. Зиновьев и Н. Ленин: «Против течения», Петроград 1918 г. *(Գ. Զինովյեվ ու Ն. Լենին. «Հոսանքի դեմ», Պետր., 1918 թ. (եջ 550): 1915 թվականին Ժընևում հրատարակված և հենց այն ժամանակ գերմաներեն ու ֆրան-*

ուրեն լեզուներով թարգմանված բրոշյուրում* չեն գրում եյի «կաուցկիականության» մասին.

«Կաուցկին, II Ինտերնացիոնալի ամենից մեծ հեղինակությունը, ներկայացնում է վերին աստիճանի տիպիկ և ցայտուն օրինակն այն բանի, թե ինչպես մարքսիզմի բառային ճանաչումը գործնականում տարավ դեպի նրա փոխարկումը «ստրուվիզմի» կամ «բրենտանիզմի» (այսինքն մի լիբերալ-բուրժուական ուսմունքի, որն ընդունում է պրոլետարիատի վոչ-հեղափոխական «դասակարգային» պայքարը, որպիսի ուսմունքն առանձնապես վառ կերպով արտահայտել են ռուս գրող Ստրուվեն և գերմանական տնտեսագետ Բրենտանոն)։ «Մենք այդ տեսնում ենք նաև Պլեխանովի օրինակից։ Մարքսիզմից ակնբախ սոփիզմներով վտարում են նրա հեղափոխական կենդանի հոգին, մարքսիզմի մեջ ընդունում են ամեն ինչ, բացի պայքարի հեղափոխական միջոցներից, նրանց քարոզից ու նախապատրաստումից, մասսաներին հենց այդ ուղղությամբ դաստիարակելուց։ Կաուցկին անսկզբունքորեն

* «Սոցիալիզմ և պատերազմ» բրոշյուրը Լենինը գրել է Զինովյեվի հետ միասին 1915 թ. օգոստոսին։ Բրոշյուրը նախապատրաստվում էր Ցիմմերվալդի կոնֆերենցիայից առաջ հրատարակելու նպատակով, բայց տեխնիկական հանգամանքների պատճառով նրա լույս տեսնելը խափանվեց, և բրոշյուրը հրատարակվեց Ցիմմերվալդից հետո միայն։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո այդ բրոշյուրը վերահրատարակվեց Ռուսաստանում 1918 թ. Պետրոգրադում և 1924 թ.՝ „Красная Новь„ հրատարակչության կողմից իմպերիալիստական պատերազմի 10-ամյակի առթիվ, Գ. Զինովյեվի առաջաբանով։ Այդ առաջաբանում Գ. Զինովյեվը նշում է, որ 1 գլուխն ու 3 և 4 գլուխների միջանի մասերը Լենինն է գրել։ Լենինին նմանապես պատկանում է բրոշյուրի ընդհանուր խմբագրությունը։ Խմբ։

«հաշտեցնում է» սոցիալ-շովինիզմի հիմնական միտքը, հայրենիքի պաշտպանության ճանաչումը տվյալ պատերազմում ձախերին արված դիվանագիտական, ցուցական զիջման հետ, որ արտահայտվում է վարկերը քվեարկելու ժամանակ ձեռնպահ մնալու, իր օպոզիցիոնությունը խոսքով ճանաչելու և այլնի մեջ։ Այն Կաուցկին, որ 1909 թվականին մի ամբողջ գիրք է գրել հեղափոխությունների դարաշրջանի մոտենալու և պատերազմի ու հեղափոխության կապի մասին,—Կաուցկին, որ 1912 թ. ստորագրել է Բազելի մանիֆեստը գալիք պատերազմը հեղափոխականորեն օգտագործելու մասին, այժմ բոլոր ձևերով արդարացնում և գեղազարդում է սոցիալ-շովինիզմը և, Պլեխանովի նման, միանում է բուրժուազիային՝ ծաղրելու համար ամեն մի մտածմունքը հեղափոխության մասին, անմիջական-հեղափոխական պայքարի ամեն մի քայլը։

Բանվոր դասակարգը չի կարող իրագործել իր համաշխարհային-հեղափոխական նպատակը, յեթե անխնա պատերազմ չմղի այդ ռենեգատության, կամազրկության, օպորտունիզմին սպասարկելու և մարքսիզմի թեորիական անօրինակ գռեհկացման դեմ։ Կաուցկիականությունը պատահականություն չէ, այլ II Ինտերնացիոնալի հակասությունների սոցիալական արդյունքը, մարքսիզմին խոսքով հավատարիմ մնալու և օպորտունիզմին գործով յենթարկվելու միացման արդյունքը» (Г. Зиновьев и Н. Ленин, «Социализм и война», Женева 1915, стр. 13—14)*.

*Տես Յերկերի XVIII հատորը (ռուսերեն), էջ 203. Խմբ։

Այնուհետև։ 1916 թ. գրված գրքում՝ «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի նորագույն էտապ» (լույս է տեսել Պետրոգրադում 1917 թվականին)*, յես մանրամասն քննել եմ Կաուցկու՝ իմպերիալիզմին նվիրված բոլոր դատողությունների թեորիական կեղծությունը։ Յես բերել եմ իմպերիալիզմի՝ Կաուցկու տված սահմանումը.

«Իմպերիալիզմը արդյունք է արդյունաբերական բարձր զարգացած կապիտալիզմի։ Նա յուրաքանչյուր արդյունաբերական կապիտալիստական ազգի ձգտումն է իրեն միացնելու կամ յենթարկելու ավելի ու ավելի մեծ քանակությամբ ագրարային (ընդգծումը Կաուցկունն է) մարզեր, անկախ նրանից, թե ինչ ազգեր են այնտեղ բնակվում»։

Յես ցույց եմ տվել այդ սահմանման կատարյալ անճշտությունը և «համակերպվածությունը» իմպերիալիզմի ամենախոր հակասությունները ստվերարկելու, իսկ այնուհետև օպորտունիզմի հետ հաշտվելու ուղղությամբ։ Յես բերել եմ իմպերիալիզմի իմ սահմանումը. «Իմպերիալիզմը կապիտալիզմն է զարգացման այն աստիճանին, յերբ ձևավորվեց մենաշնորհների և ֆինանսական կապիտալի տիրապետությունը, աչքի ընկնող նշանակություն ձեռք բերեց կապիտալի արտահանումը, սկսվեց աշխարհի բաժանումը միջազգային տրեստների կողմից և ավարտվեց յերկրագնդի ամբողջ տերիտորիայի բաժանումը կապիտալիստական խոշորագույն յերկրների միջև»։ Յես ցույց եմ տվել, վոր իմպերիալիզմի քննադատությունը Կաուցկու մոտ նույնիսկ ավելի ցածր է կանգնած, քան թե նրա բուրժուական, քաղքենիական քննադատությունը։

Վերջապես, 1917 թվականի օգոստոսին ու սեպտեմբերին, այսինքն մինչև պրոլետարական հեղափոխությունն Ռուսաստանում (1917 թվականի հոկտեմբերի 25-ը–նոյեմբերի 7-ը), յես գրել եմ՝ 1918 թ. սկզբում Պետրոգրադում լույս տեսած բրոշյուրը՝ «Պետություն և հեղափոխություն։ Մարքսիզմի ուսմունքը պետության մասին և պրոլետարիատի խնդիրները հեղափոխության մեջ»* ու այդտեղ, VI, «Մարքսիզմի գռեհկացումն օպորտունիստների կողմից» գլխում հատուկ ուշադրություն եմ նվիրել Կաուցկուն, ապացուցելով, վոր նա բոլորովին խեղաթյուրել է Մարքսի ուսմունքը, կեղծել այն օպորտունիզմի վոգով, «գործով հրաժարվում էր հեղափոխությունից, խոսքով ճանաչելով այն»։

* Տես Ընտիր յերկերի հայ. հրատ. III հ., եջ 3—113։ Խմբ.։

Պրոլետարիատի դիկտատուրային նվիրված նրա բրոշյուրի մեջ Կաուցկու հիմնական թեորիական սխալն իսկապես Մարքսի՝ պետության վերաբերող ուսմունքի հենց այն օպորտունիստական խեղաթյուրումներն են, վորոնք մանրամասնորեն դրսևորված են իմ «Պետություն և հեղափոխություն» բրոշյուրի մեջ։

Այս նախնական նկատողությունները անհրաժեշտ եյին, վորովհետև նրանք ապացուցում են, վոր Կաուցկին իմ կողմից բացահայտ կերպով մեղադրվել է ռենեգատության համար այն օրվանից շատ առաջ, յերբ բոլշևիկները վերցրին պետական իշխանությունն ու դրա համար դատապարտվեցին Կաուցկու կողմից։

*Տես Ընտիր յերկերի հայ. հրատ. IV հատորի եջ 3—111։ Խմբ.։

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՈՒՑԿԻՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԼԻԲԵՐԱԼ ԴԱՐՁՐԵՑ ՄԱՐՔՍԻՆ

Կաուցկու կողմից իր բրոշյուրում շոշափվող հարցը պրոլետարական հեղափոխության արմատական բովանդակության, այն է՝ պրոլետարիատի դիկտատուրայի հարցն է։ Սա մի հարց է, որ կարևորագույն նշանակություն ունի բոլոր յերկրների համար, առանձնապես առաջավորների, առանձնապես պատերազմողների համար, առանձնապես ներկայումս։ Կարելի յե առանց չափազանցման ասել, որ դա պրոլետարական ամբողջ դասակարգային պայքարի ամենագլխավոր հարցն է։ Ուստի անհրաժեշտ է նրա վրա ուշադիր կերպով կանգ առնել։

Կաուցկին հարցը դնում է այնպես, թե

«սոցիալիստական յերկու ուղղությունների (այսինքն բոլշևիկների և վոչ բոլշևիկների) հակադրությունը» և «հիմնովին տարբեր յերկու մեթոդ՝ դեմոկրատականի և դիկտատորականի հակադրությունը» (եջ 3)։

Նշենք միջանկյալ, վոր Ռուսաստանի վոչ-բոլշևիկներին, այսինքն՝ մենշևիկներին ու եսէռներին սոցիալիստներ անվանելիս Կաուցկին ղեկավարվում է նրանց անվանումով, այսինքն բառով, այլ վոչ թե այն իրական տեղով, *վոր նրանք բռնում են պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարում։ Մարքսիզմի հոյակապ ըմբռնում և կիրառում։ Բայց այս մասին ավելի մանրամասն ստորև։*

Այժմ պետք է վերցնել գլխավորը. Կաուցկու մեծ հայտնագործությունը «դեմոկրատական և դիկտատորական մեթոդների» «արմատական հակադրության» մասին։ Դա կարևորագույն հարցն է։ Դա յե Կաուցկու բրոշյուրի ամբողջ եյությունը։ Յեվ դա տեսական այնպիսի հրեշավոր խառնաշփոթություն է, այնպիսի լիակատար հրաժարում մարքսիզմից, վոր Կաուցկին, պետք է ընդունել, Բերնշտայնից շատ է առաջ անցել։

Պրոլետարիատի դիկտատուրայի հարցը պրոլետարական պետության և բուրժուական պետության, պրոլետարական դեմոկրատիայի և բուրժուական դեմոկրատիայի հարաբերության հարցն է։ Թվում է, թե դա պարզ է արևի լույսի պես։ Բայց Կաուցկին, գիմնազիայի մի վորևէ ուսուցչի նման, վոր չորացել է պատմության դասագրքեր կրկնելուց, համառորեն քամակը դարձնում է դեպի XX դարը, յերեսը դեպի XVIII-ը ու հարյուրերորդ անգամ աներևակայելի տաղտկալիորեն, մի ամբողջ շարք պարագրաֆներում, ծամում է ու վերածամում այն հնոտին, թե ինչպես է հարաբերում բուրժուական դեմոկրատիան աբսոլյուտիզմին ու միջնադարականությանը։

Ճշմարտապես, կարծես թե ճիլոպ է ծամում քնած ժամանակ։

Զե՞ վոր սա նշանակում է վճռականորեն չըմբռնել, թե ինչն ինչին է վերաբերում։ Զե՞ վոր միայն ժպիտ են հարուցանում Կաուցկու ճիգերը բանն այնպես ներկայացնելու, թե իբր կան մարդիկ, վորոնք քարոզում են «արհամարհանք դեպի դեմոկրատիան» (եջ 11) և այլն։ Այսպիսի դատարկ բաներով հարկադրված է

հարցը ստվերարկել խճճել Կաուցկին, վորովհետև նա հարցը դնում է լիբերալորեն, առհասարակ դեմոկրատիայի մասին և վոչ թե բուրժուական դեմոկրատիայի, նա նույնիսկ խուսափում է այդ ճշգրիտ, դասակարգային հասկացողությունից և ջանում է խոսել «նախասոցիալիստական» դեմոկրատիայի մասին։ Բրոշյուրի գրեթե յերրորդ մասը, 63 եջից 20-ը, մեր ջուր ծեծողը բռնել է մի շաղակրատանքով, վորը շատ հաճելի յե բուրժուազիայի համար, վորովհետև հավասար է բուրժուական դեմոկրատիայի գեղազարդման ու ստվերարկում է պրոլետարական հեղափոխության հարցը։

Բայց չէ՞ վոր Կաուցկու բրոշյուրի վերնագիրն է այնուամենայնիվ «Պրոլետարիատի դիկտատուրան»։ Վոր հենց այդ է կազմում Մարքսի ուսմունքի եյությունը, դա հանրահայտ է։ Յեվ Կաուցկին հարկադրված եր նյութին չվերաբերող ամբողջ շաղակրատանքից հետո բերել Մարքսի խոսքերը պրոլետարիատի դիկտատուրայի մասին։

Թե ինչպես այդ արեց «մարքսիստ» Կաուցկին, դա արդեն ուղղակի կոմեդիա յե։ Լսեցեք.

«Կարլ Մարքսի մի խոսքի վրա յե հենվում այն հայացքը» (վոր Կաուցկին անվանում է արհամարհանք դեպի դեմոկրատիան),—այդպես է բառացիորեն ասված 20-րդ եջում։ Իսկ 60-րդ եջում դա կրկնված է նույնիսկ այսպիսի ձևով, թե (բոլշևիկները) «ժամանակին մտաբերեցին այն բառիկը» (տառացիորեն այդպես է!! des Wörtchens) «պրոլետարիատի դիկտատուրայի մասին, վոր Մարքսը մի անգամ գործ է ածել նամակում 1875 թվականին»։

Ահա Մարքսի այդ «բառիկը».

«Կապիտալիստական և կոմունիստական հասարակության միջև ընկած է մի ժամանակաշրջան, յերբ առաջինը պետք է հեղափոխական ճանապարհով փոխարկվի յերկրորդին։ Այդ ժամանակաշրջանին համապատասխանում է և քաղաքական անցման շրջան, և այդ շրջանի պետությունը չի կարող լինել վոչ այլ ինչ, բայց յեթե պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրա»*։

---

* Մեջբերումը վերցված է Կ. Մարքսի այսպես կոչված «Գոթայի ծրագրի քննադատությունից»—նամակից, վոր հասցեագրված է Բրակեյին 1875 թ. մայիսի 5-ին և ուղղված է նաև Բեբելին, Լիբկնեխտին, Հեյբին ու Աուերին և գրված է «լասսալականների» ու «եյզենախականների» միավորիչ գալիք համագումարի առթիվ։ Մարքսն ու Էնգելսը ջերմ հակառակորդներ եյին միավորման ու համագումարի համար մշակված ծրագրի նախագծին։ Եյզենախյան կուսակցության ղեկավար խմբից նրանց տեսակետը պաշտպանում եր միայն Բրակեն։ Գերմանական բանվորների մեջ գերակշռող տրամադրությունը հօգուտ միավորման հայտնի յեր Մարքսին, բայց նա, ինչպես գրում եր նամակում, այնուամենայնիվ համարում է «իր պարտքը դիվանագիտական լռությամբ ցույց չտալ», թե ինքը նա ընդունում է մի ծրագիր, վորը, նրա համոզմունքով, «ծայրահեղորեն այլանդակ է և կուսակցությունը քայքայող»։ Այս նամակը կարևոր է նաև նրանով, վոր նրա մեջ առաջին անգամ շարադրված է Մարքսի վերաբերմունքը դեպի Լասսալը։ Էնգելսի (1875 թ. մարտի 28-ին) Բեբելին գրած նամակի հետ միասին Մարքսի նամակը գիտական կոմունիզմի կարևորագույն յերկերից մեկն է հանդիսանում։ Էնգելսն առաջին անգամ, գերմանական ս.-դ. առաջնորդների ուժեղ դիմադրությունը հաղթահարելով, հրապարակեց այն «Նկատողություններ գերմանական բանվորական կուսակցության ծրագրի շուրջը» անունով Էրֆուրտի համագումարից առաջ, վորը պետք է նոր ծրագիր ընդուներ։ Սակայն, Մարքսի հիմնական մտքերը լիովին չընդունվեցին գերմանական սոցիալ—դեմոկրատիայի կողմից վոչ միայն 1875 թ., այլ և 1891 թ. անգամ ու իրենց լիակատար ճանաչումը գտան միմիայն ՀամԿԿ-ի Կոմինտերնի ծրագրում։ Խմբ։

Նախ, Մարքսի այս հռչակավոր դատողությունը, որ նրա ամբողջ հեղափոխական ուսմունքի հանրագումարն է տալիս, անվանել «մի խոսք» կամ նույնիսկ «բառիկ»,—նշանակում է ծաղրել մարքսիզմը, նշանակում է լիովին հրաժարվել նրանից։ Չի կարելի մոռանալ, որ Կաուցկին գրեթե անգիր գիտե Մարքսին, որ, Կաուցկու բոլոր գրությունների հիման վրա դատելով, նրա գրասեղանի մեջ կամ գլխում տեղավորված են մի շարք փայտե արկղիկներ, որոնցում մեջբերման համար ամենակարևոր և հարմարագույն կերպով դարսված է այն ամենը, ինչ որ գրել է Մարքսը։ Կաուցկին չի կարող չգիտենալ, որ թե Մարքսը, թե Ենգելսը նամակներում և տպագիր երկերում բազմիցս խոսել են պրոլետարիատի դիկտատուրայի մասին, մանավանդ Կոմունայից և՛ առաջ, և՛* հետո։ Կաուցկին չի կարող չգիտենալ, որ «պրոլետարիատի դիկտատուրա» փորմուլան միայն ավելի պատմականորեն-կոնկրետ և գիտականորեն-ճշգրիտ շարադրանքն է բուրժուական պետական մեքենան «ջարդելու»՝ պրոլետարիատի այն խնդրի, որի մասին Մարքսն ու Ենգելսը խոսում են 1852 թվականից մինչև 1891 թվականը, քառասուն տարվա ընթացքում, հաշվառելով 1848 թվականի և էլ ավելի 1871-ի հեղափոխությունների փորձը։

Ի՞նչպես բացատրենք մարքսիզմի այս հրեշավոր աղավաղումը մարքսիզմի ախոյան Կաուցկու կողմից։ Յեթե տվյալ յերևույթի փիլիսոփայական հիմքերի մասին խոսելու լինենք, ապա բանը կհանգի դիալեկտիկան էկլեկտիզմով ու սոֆիստիկայով նենգափո-

* Ձեռագրում բացակայում են «և՛ առաջ, և՛» բառերը։ Խմբ։

խելուն։ Կաուցկին այդպիսի նենգափոխման մեծ վարպետ է։ Յեթե խոսելու լինենք գործնականորեն-քաղաքականորեն, ապա բանը կհանգի օպորտունիստների առաջ, այսինքն վերջիվերջո բուրժուազիայի առաջ լաքեյություն անելուն։ Պատերազմի սկզբից, ավելի ու ավելի արագ հառաջադիմելով, Կաուցկին վիրտուոզության է հասել խոսքով մարքսիստ, գործով բուրժուազիայի լաքեյ լինելու այդ արվեստի մեջ։

Ե՛լ ավելի յես համոզվում դրան, յերբ քննարկում ես, թե ինչ յերևելի կերպով է Կաուցկին «մեկնաբանել» Մարքսի «բառիկը» պրոլետարիատի դիկտատուրայի մասին։ Լսեցե՛ք.

«Մարքսը, ցավոք պետք է ասել, թերացել է ավելի մանրամասն նշել, թե ինչպես է պատկերացնում այդ դիկտատուրան...»։ (Ռենեգատի թափնթափ ստահոդ ֆրազ, որովհետև Մարքսն ու Ենգելսը տվել են հատկապես մի շարք մանրամասնագույն ցուցումներ, որոնք դիտավորյալ կերպով մի կողմ է թողնում մարքսիզմի ախոյան Կաուցկին)։ «... Դիկտատուրա բառը տառացի նշանակում է դեմոկրատիայի ոչնչացում։ Բայց, հարկավ, տառացիորեն վերցրած այդ բառը նշանակում է նաև որևէ օրենքով չկաշկանդված առանձին մեկ անձի մենիշխանություն։ Մենիշխանություն, որը բռնակալությունից տարբերվում է նրանով, որ մտածվում է ոչ որպես մշտական պետական հաստատություն, այլ որպես ծայրահեղության փոխանցիկ միջոց։

«Պրոլետարիատի դիկտատուրա» արտահայտությունը, հետևաբար, ոչ թե մեկ անձի դիկտատուրա, այլ մեկ դասակարգի՝ արդեն բացառում է այն միտքը, թե ընդամին Մարքսը նկատի է ունեցել դիկտատուրան բառի տառացի իմաստով։

Նա այստեղ խոսում էր ոչ թե կառավարման ձևի մասին, այլ այն կացության, որ անհրաժեշտաբար պետք է ստեղծվեր ամենուրեք, որտեղ պրոլետարիատը նվաճել է քաղաքական իշխանությունը։ Որ Մարքսն այստեղ նկատի չի ունեցել կառավարման ձևը, դա արդեն նրանով է ապացուցվում, որ, նրա կարծիքով, Անգլիայում և Ամերիկայում անցումը կարող է կատարվել խաղաղ կերպով, հետևապես, դեմոկրատական ճանապարհով» (էջ 20)։

Մենք դիտմամբ բերինք լիովին այս ամբողջ դատողությունը, վորպեսզի ընթերցողը կարողանա պարզ տեսնել, թե վորպիսի հնարներ ե գործածում «տեսաբան» Կաուցկին։

Կաուցկին ցանկացել ե հարցին այնպես մոտենալ, վոր սկսի դիկտատուրա «բառի» սահմանումից։

Հիանալի։ Յուրաքանչյուրի սրբազան իրավունքն ե հարցին ցանկացած կերպ մոտենալը։ Միայն պետք ե տարբերել հարցին լուրջ ու ազնիվ մոտենալը անազնիվ մոտենալուց։ Ով վոր կամենար լուրջ վերաբերվել գործին հարցին մոտենալու տվյալ յեղանակի պարագայում, նա պետք ե վոր տար «բառի» իր սահմանումը։ Այն ժամանակ հարցը դրված կլիներ պարզ և ուղղակի։ Կաուցկին այդ չի անում։

«Դիկտատուրա բառը,—գրում ե նա,—տառացի նշանակում ե դեմոկրատիայի վոչնչացում»։

Նախ, սա սահմանում չե։ Յեթե Կաուցկուն հաճելի յե շեղվել դիկտատուրա հասկացողության սահմանում տալուց, ինչ հարկ կար ընտրելու տվյալ մոտեցումը հարցին։

Յերկրորդ, դա ակներևորեն սխալ ե։ Լիբերալի համար բնական ե խոսել առհասարակ «դեմոկրատիայի» մասին։ Մարքսիստը յերբեք չի մոռանա հարց դնել. «Վո՞ր դասակարգի համար»։ Ամեն-վոք գիտե, որինակ,— և «պատմաբան» Կաուցկին նույնպես գիտե այդ,— վոր հնում ստրուկների ապստամբությունները կամ նույնիսկ ուժեղ խռովությունները մեկեն բացահայտում եյին անտիկ պետության եյությունը, վորպես ստրկատերերի դիկտատուրայի։ Արդյոք այդ դիկտատուրան վոչնչացնում եր ստրկատերերի մեջ, նրանց համար դեմոկրատիան։ Բոլորին հայտնի յե, վոր վոչ։

«Մարքսիստ» Կաուցկին հրեշավոր անհեթեթություն և ստություն ասաց, վորովհետև «մոռացավ» դասակարգային պայքարի մասին...

Վորպեսզի Կաուցկու տված լիբերալ և ստահոդ պնդումը փոխարկենք մարքսիստական ու ճշմարիտ պնդման, պետք ե ասենք. դիկտատուրան անպատճառ չի նշանակում դեմոկրատիայի վոչնչացում այն դասակարգի համար, վորն իրագործում ե այդ դիկտատուրան մյուս դասակարգերի նկատմամբ, բայց նա անպատճառ նշանակում ե դեմոկրատիայի վոչնչացում (կամ եյականագույն սահմանափակում, վոր նույնպես վոչնչացման տեսակներից մեկն ե) այն դասակարգի համար, վորի վերաբերմամբ կամ վորի դեմ իրագործվում ե դիկտատուրան։

Բայց վորքան ել ճշմարիտ լինի այս պնդումը, նա չի տալիս դիկտատուրայի սահմանումը։

Քննարկենք Կաուցկու հետևյալ ֆրազը.

«... Բայց հարկավ, տառացիորեն վերցրած այդ բառը նշանակում ե նաև վորևե օրենքով չկաշկանդված առանձին մեկ անձի միիշխանություն...»։

Նման կույր շնիկի, վորը պատահաբար քթահարում ե մերթ մեկ, մերթ մյուս կողմը, Կաուցկին այստեղ անակնկալ կերպով դեմ դիպավ մեկ ճիշտ մտքի (այն ե, վոր դիկտատուրան վորևե օրենքով չկաշկանդված իշխանությունն ե), բայց այնուամենայնիվ չտվեց դիկտատուրայի սահմանումը և, բացի դրանից, պատմական ակներև ստություն ասաց, թե իբր դիկտատուրա նշանակում ե մեկ անձի իշխանություն։ Դա քերականորեն ել ճիշտ չե, վորովհետև դիկտատորություն անել կարող ե և՛ մարդկանց մի խումբ, և՛ օլիգարխիան, և՛ մի դասակարգ և այլն։

Այնուհետև Կաուցկին նշում է դիկտատուրայի տարբերությունը բռնակալությունից, բայց, թեև նրա նշումն ակներևորեն սխալ է, մենք կանգ չենք առնի նրա վրա, վորովհետև դա բոլորովին չի վերաբերում մեզ հետաքրքրող հարցին։ Հայտնի յե Կաուցկու հակումը շուռ գալու XX դարից դեպի XVIII-ը, իսկ XVIII-ից դեպի անտիկ հնությունը, և մենք հույս ունենք, վոր դիկտատուրայի հասնելով, գերմանական պրոլետարիատը կհաշվառի այդ հակումը, Կաուցկուն նշանակելով, ասենք, հին պատմության գիմնազիական ուսուցիչ։ Պրոլետարիատի դիկտատուրայի սահմանումից խուսափել բռնակալության մասին իմաստակություններ անելու միջոցով կամ ծայրահեղ հիմարություն է, կամ շատ անարվեստ խարդախություն։

Իբրև արդյունք ստանում ենք այն, վոր կամենալով խոսել դիկտատուրայի մասին, Կաուցկին մեծ քանակությամբ ակներև ստություններ ասաց, բայց չտվեց վո՛չ մի սահմանում։ Նա կարող եր, չվստահելով իր մտավոր ընդունակություններին, դիմել իր հիշողության և դուրս թափել «արկղիկներից» այն բոլոր դեպքերը, յերբ Մարքսը խոսում է դիկտատուրայի մասին։ Նա հավանաբար կստանար կամ հետևյալ, կամ ըստ եյության նրա հետ համընկնող սահմանումը։

Դիկտատուրան մի իշխանություն է, վորն անմիջականորեն հենվում է բռնության վրա, կաշկանդված չե վոչ մի օրենքով։

Պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրան մի իշխանություն է, վորը նվաճված է և պաշտպանվում է պրոլետարիատի՝ բուրժուազիայի նկատմամբ գործադրվող բռնությամբ, իշխանություն, վորը կաշկանդված չե վոչ մի օրենքով։

Յեվ ահա այս իսկ պարզ ճշմարտությունը, ամեն մի գիտակից բանվորի համար (մասսայի ներկայացուցչի և վոչ թե կապիտալիստների կողմից կաշառված քաղքենիական թափթփուկների վերնախավի, վորպիսիք հանդիսանում են բոլոր յերկրների սոցիալ-իմպերիալիստները) արևի լույսի նման պարզ ճշմարտությունը, իրենց ազատագրման համար պայքարող շահագործվողների ամեն մի ներկայացուցչի համար ակներև, ամեն մի մարքսիստի համար այս անվիճելի ճշմարտությունը ստիպված ենք «պատերազմով հետ նվաճել» գիտնականագույն պարոն Կաուցկուց։ Ինչո՞վ պետք է բացատրել այդ։ Լաքեյության այն վոգով, վորով տոգորվել են II Ինտերնացիոնալի առաջնորդները, վորոնք դարձել են բուրժուազիային սպասարկող սիկոֆանտներ։

Կաուցկին նախ քաշկռտուկ կատարեց, հայտարարելով ակներև անհեթեթություն, թե իբր դիկտատուրա բառի տառացի իմաստը նշանակում է միանձնյա դիկտատոր, իսկ հետո նա այդ քաշկռտուկի հիման վրա հայտարարում է, թե Մարքսի մոտ, նշանակում է, դասակարգի դիկտատուրայի վերաբերող բառերը ունեն վոչ տառացի իմաստ (այլ այնպիսին, վորի դեպքում դիկտատուրան չի նշանակում հեղափոխական բռնություն, այլ «մեծամասնության խաղաղ նվաճումն բուրժուական», — նկատեցեք այս, — դեմոկրատիայի որով)։

Պետք է տարբերել, գիտե՞ք ինչ, «կացությունը» «կառավարման ձևից»։ Զարմանալի խորիմաստ տարբերություն, բոլորովին նման այն տարբերության, վոր ցանկանայինք դնել անխելացի դատող մարդու

4102
39
Гос. Публ. Библиотека
ССР
им. А. Мясникян

հիմարության «կացության» և նրա հիմարությունների «ձևի» միջև։

Կաուցկուն հարկավոր է մեկնաբանել դիկտատուրան, որպես «տիրապետության կացություն» (այս արտահայտությունը տառացիորեն նրա մոտ գործ է ածված հենց հետևյալ, 21-րդ, էջում), որովհետև այդ դեպքում չքանում է հեղափոխական բռնությունը, չքանում է բռնի հեղափոխությունը։ «Տիրապետության կացությունը» մի կացություն է, որի մեջ լինում է ամեն մի մեծամասնություն ...«դեմոկրատիայի» օրով։ Այսպիսի խարդախչական ֆոկուսով հեղափոխությունը բարեբախտաբար չքանում է։

Բայց խարդախչությունը չափազանց կոպիտ է, և նա չի փրկի Կաուցկուն։ Որ դիկտատուրան յենթադրում է և նշանակում մեկ դասակարգի՝ մյուսի վերաբերմամբ գործադրվող՝ ունևորների համար անդուրեկան հեղափոխական բռնության «կացություն», այդ «մախաթը չես թաքցնի պարկի մեջ»։ Դրսևորվում է «կացության և կառավարման ձևի» տարբերման անմտությունը։ Այստեղ յեռակի հիմարություն է կառավարման ձևի մասին խոսելը, որովհետև ամեն մի տղա գիտե, որ միապետությունն ու հանրապետությունը կառավարման զանազան ձևեր են։ Պարոն Կաուցկուն հարկավոր է ապացուցել, որ կառավարման այս յերկու ձևն էլ, ինչպես և բոլոր փոխանցիկ «կառավարման ձևերը» կապիտալիզմի օրով բուրժուական պետության, այսինքն բուրժուազիայի դիկտատուրայի տարատեսակություններն են սոսկ։

Վերջապես, կառավարման ձևերի մասին խոսելը ոչ միայն հիմար, այլև անճոռնի կեղծումն է Մարքսի, որն այստեղ պարզից պարզ խոսում է ոչ թե կա-

ռավարման ձևի, այլ պետության ձևի կամ տիպի մասին։

Պրոլետարական հեղափոխությունն անհնարին է առանց բուրժուական պետական մեքենայի բռնի կործանման և այն նորով փոխարինելու, որը, Էնգելսի ասելով, «չի հանդիսանում արդեն բուն իմաստով պետություն»*։

Կաուցկուն հարկավոր է այս ամենը սվաղել ու ստել — այդ է պահանջում նրա ռենեգատական դիրքը։

Տեսե՛ք, թե որպիսի վողորմելի խուսափանքների յե նա դիմում։ Խուսափանք առաջին.

«Որ Մարքսն այստեղ նկատի չի ունեցել կառավարման ձևը, նրանով է ապացուցվում, որ նա Անգլիայում և Ամերիկայում հնարավոր էր համարում խաղաղ հեղաշրջումը, այսինքն դեմոկրատական ճանապարհով...»։

Կառավարման ձևն այստեղ բացարձակապես չունի որևէ առնչություն, որովհետև լինում են բուրժուական պետության համար ոչ տիպիկ միապետություններ, որոնք, օրինակ, աչքի յեն ընկնում զինվորականության գերակշիռ դերի բացակայությամբ և լինում են հանրապետություններ, որոնք միանգամայն** տիպիկ են, որոնց մեջ գերակշիռ դեր են խաղում զինվորականությունն ու բյուրոկրատիան։ Սա պատմական և քաղաքական հանրահայտ փաստ է, և Կաուցկուն չի հաջողվի կեղծել այդ։

Յեթե Կաուցկին կամենար լուրջ ու ազնիվ կերպով

* Քաղվածքը վերցված է Բեբելին ուղղած՝ Էնգելսի 1875 թ. մարտի 28-ի նամակից, որ գրվել է Գոթայի ծրագրի նախագծի առթիվ։ Խմբ։

** Ձեռագրի մեջ այստեղ հետևում են «այդ կողմից» բառերը։ Խմբ։

դառնել, նա իրեն հարց կտար. լինո՞ւմ են արդյոք պատմական օրենքներ, վորոնք վերաբերում են հեղափոխության և չգիտեն բացառություն: Պատասխանը կլիներ. վո՛չ, այդպիսի օրենքներ չկան: Այդպիսի օրենքները նկատի ունեն միայն տիպիկականը, այն, ինչ վոր Մարքսը մի անգամ անվանել է «իդեալական», միջին, նորմալ, տիպիկ կապիտալիզմի իմաստով:

Այնուհետև: Արդյոք 70-ական թվականներին յեղե՞լ է վորևե այնպիսի բան, վորը քննարկվող տեսակետից բացառություն դարձներ Անգլիան ու Ամերիկան: Ամեն մի մարդու համար, ով վորքան էլ ծանոթ է գիտության պահանջին պատմական հարցերի բնագավառում, ակներև է, վոր այդ հարցը անհրաժեշտ է դնել: Չդնել այն՝ նշանակում է կեղծել գիտությունը, նշանակում է սոփիզմ խաղալ: Իսկ դնելով այդ հարցը՝ չի կարելի տարակուսել պատասխանի նկատմամբ. պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրան բռնություն է բուրժուազիայի դեմ,—իսկ այդ բռնության անհրաժեշտությունն առաջ է գալիս մանավանդ նրանից, վոր գոյություն ունեն գերակշիռ զինվորականություն ու բյուրոկրատիա, ինչպես ամենամանրամասն կերպով և բազմիցս բացատրել են Մարքսն ու Էնգելսը (առանձնապես «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» գրքի ու նրա առաջաբանի մեջ): Հենց այդ հաստատությունները, հենց Անգլիայում և Ամերիկայում, XIX դարի հենց 70-ական թվականներին, յերբ Մարքսն ասել է իր նկատողությունը, չեն յեղել: (Իսկ այժմ նրանք կան և՛ Անգլիայում, և՛ Ամերիկայում):

Կաուցկին ստիպված է յուրաքանչյուր քայլափոխում տառացիորեն խարդախել, վորպեսզի քողարկի իր ռենեգատությունը!:

Յեվ նկատեցեք, թե ինչպես նա անակնկալ կերպով այստեղ ցույց տվեց իր՝ իշի ականջները. նա գրել է՝ «խաղաղ», այսինքն դեմոկրատական ճանապարհով!:

Դիկտատուրան սահմանելու ժամանակ Կաուցկին իր բոլոր ուժերով ջանում էր ընթերցողից թաքցնել այդ հասկացողության հիմնական հատկանիշը, այն է՝ հեղափոխական բռնությունը: Իսկ այժմ ճշմարտությունը յերևան յեկավ. խոսքը վերաբերում է խաղաղ և բռնի հեղաշրջումների հակադրության:

Այստեղ է թաղված շան գլուխը: Կաուցկու նրա համար էլ հարկավոր են բոլոր խուսափանքները, սոֆիզմները, խարդախչական կեղծումները, վորպեսզի օձիքն ազատի բռնի հեղափոխությունից, վորպեսզի քողարկի իր հրաժարումը նրանից, իր անցումը բանվորական լիբերալ քաղաքականության կողմը, այսինքն բուրժուազիայի կողմը: Այստեղ է թաղված շան գլուխը:

«Պատմաբան» Կաուցկին այնպես անամոթաբար է կեղծում պատմությունը, վոր մոռանում է հիմնականը. մինչմոնոպոլիստական կապիտալիզմը—իսկ նրա գագաթնակետը XIX դարի հենց 70-ական թվականներն էին—շնորհիվ իր արմատական տնտեսական հատկությունների, վորոնք առանձնապես տիպիկ կերպով արտահայտվեցին Անգլիայում և Ամերիկայում, աչքի էր ընկնում, համեմատաբար, ամենից մեծ խաղաղասիրությամբ ու ազատասիրությամբ: Իսկ իմպերիալիզմը, այսինքն մոնոպոլիստական կապիտալիզմը, վոր վերջնականապես հասունացավ միայն XX դարում, ըստ իր արմատական տնտեսական հատկությունների, աչքի է ընկնում ամենից քիչ խաղաղասիրությամբ ու ազատա-

սիրությամբ, զինվորականության ամենից մեծ ու ամենուրեք նկատվող զարգացմամբ։ «Ջնջատել» այդ՝ խաղաղ կամ բռնի հեղաշրջման տոլիկականության կամ հավանականության մասին դատելիս՝ նշանակում է իջնել բուրժուազիայի մինչև ամենասովորական լաքեյը։

Ուսամփանք յերկրորդ։ Փարիզի կոմունան պրոլետարիատի դիկտատուրան եր, իսկ նա ընտրված եր ընդհանրական քվեարկությամբ, «դեմոկրատիկ ձևով», առանց բուրժուազիային զրկելու ընտրական իրավունքներից։ Յեվ Կաուցկին հաղթանակ է տանում։

«․․, Պրոլետարիատի դիկտատուրան Մարքսի համար» (կամ ըստ Մարքսի) «մի կացություն եր, վորն անհրաժեշտաբեն բղխում է զուտ դեմոկրատիայից, յեթե պրոլետարիատը կազմում է մեծամասնություն» (bei überwiegegendem Proletariat, S. 21),

Կաուցկու այս փաստարկն այնքան զավեշտական է, վոր ճշմարտապես զգում ես իսկական embarras des richesses (դժվարություն առարկությունների առատությունից)։ Նախ, հայտնի յե, վոր բուրժուազիայի ծաղիկը, շտաբը, վերնախավերը Փարիզից փախել եյին Վերսալ։ «Սոցիալիստ» Լուի Բլանը Վերսալումն եր, մի հանգամանք, վոր, ի միջի այլոց, ցույց է տալիս Կաուցկու այն պնդման ստահոդությունը, թե իբր Կոմունայի մեջ մասնակցել են սոցիալիզմի «բոլոր ուղղությունները»։ Ծիծաղելի չե՞ արդյոք իբրև «ընդհանրական քվեարկմամբ» հանդերձ «զուտ դեմոկրատիա» կերպարանել Փարիզի բնակիչների բաժանումը յերկու պատերազմող բանակների, վորոնցից մեկը համակենտրոնացրել եր մարտական ամբողջ, քաղաքականապես ներգործոն բուրժուազիային։

Յերկրորդ, Կոմունան պայքարում եր Վերսալի

դեմ, վորպես Ֆրանսիայի բանվորական կառավարություն ընդդեմ բուրժուազիայի։ Եվ ի՞նչ կապ ունեն այստեղ «զուտ դեմոկրատիան» ու «ընդհանրական քվեարկումը», յերբ Փարիզը Ֆրանսիայի բախտն եր վորոշում։ Յերբ Մարքսը գտնում եր, վոր Կոմունան սխալ արեց, չվերցնելով ամբողջ Ֆրանսիային պատկանող բանկը*, ապա Մարքսը չե՞ր յելնում «զուտ դեմոկրատիայի» սկզբունքներից ու պրակտիկայից։

Իսկապես, յերևում է, վոր Կաուցկին գրում է մի այնպիսի յերկրում, վորի մեջ վոստիկանությունն արգելում է մարդկանց «միախումբ» ծիծաղել, այլապես այդ ծիծաղը կսպաներ Կաուցկուն։

Յերրորդ։ Թույլ կտամ ինձ հարգոյաբար հիշեցնել Մարքսին ու Ենգելսին անգիր գիտցող պարոն Կաուցկուն Կոմունայի հետևյալ գնահատականը, վոր Ենգելսն է տվել․․․ «զուտ դեմոկրատիայի» տեսակետից.

---

*Լենինի բերած միտքը վոչ թե Մարքսին է պատկանում, այլ Ֆ. Ենգելսը Կ. Մարքսի «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» գրքի գերմանական 3-րդ հրատ. առաջաբանում։ «Կոմունան տնտեսական հարաբերությունների բնագավառում աչքաթող արեց շատ այնպիսի բաներ, վոր անհրաժեշտ եր անել մեր այժմյան հասկացողություններով։ Ամենից դժվարն այժմ այն ակնածությամբ ըմբռնելն է, վոր ուներ Կոմունան հանդեպ Ֆրանսիայի բանկի։ Դա քաղաքականապես ևս խոշոր սխալ եր։ Բանկը Կոմունայի ձեռքում ավելի մեծ նշանակություն ուներ, քան թե 10,000 պատանդը։ Յեթե Կոմունան տիրանար նրան, Ֆրանսական ամբողջ բուրժուազիան կսկսեր ճնշում գործ դնել վերսալյան կառավարության վրա Կոմունայի հետ հաշտություն կնքելու օգտին» (К, Маркс, «Гражданская война во Франции (1870—71)». С пред. Ф. Энгельса. Перевод с немецкого под ред. Н. Ленина. Изд. Соцэкгиз. «Библиотека марксиста». М.-Лнгр' 1931, եջ 9։ Խմբ.։

Տեսե՞լ են արդյոք յերբևե հեղափոխություն այդ պարոնները» (հակաավտորիտարները)։ «Հեղափոխությունն, անտարակույս, ամենաավտորիտար բանն է, վոր միայն հնարավոր է։ Հեղափոխությունը մի գործողություն է, վորի մեջ բնակչության մի մասը իր կամքը փաթաթում է մյուս մասի շնքին հրացանների, սվինների, թնդանոթների, այսինքն չափազանց ավտորիտար միջոցների ոգնությամբ։ Յեվ հաղթանակած կուսակցությունը անհրաժեշտաբար հարկադրված է լինում իր տիրապետությունը պահել այն վախի միջոցով, վոր նրա զենքը ներշնչում է ռեակցիոներներին։ Յեթե Փարիզի կոմունան չհենվեր զինված ժողովրդի ավտորիտետի վրա ընդդեմ բուրժուազիայի, մի՞թե նա մի որվանից ավելի կհարատևեր։ Իրավունք չունե՞նք արդյոք, ընդհակառակը, հանդիմանելու Կոմունային, վոր նա չափազանց քիչ է ոգտվել այդ ավտորիտետից»*։

Ա՛յ ձեզ և «զուտ դեմոկրատիա»։ Ի՞նչպես կծաղրեր Ենգելսը այն գռեհիկ քաղքենուն, «սոցիալ-դեմոկրատին» (ֆրանսիական 40-ական թվականների և համաեվրոպական—1914—1918 թվականների իմաստով), վորը ցանկանար առհասարակ խոսել «զուտ դեմոկրատիայի» մասին դասակարգերի բաժանված հասարակության մեջ։

Բայց բավական է։ Թվարկել բոլոր առանձին անհեթեթությունները, վորոնց հասնում է իր ասությունների մեջ Կաուցկին, անհնարին բան է, վորովհետև նրա յուրաքանչյուր նախադասության մեջ ռենեգատության անհատակ անդունդ է։

Մարքսն ու Ենգելսը ամենամանրամասն կերպով վերլուծել են Փարիզի Կոմունան, ցույց տվել, վոր նրա վաստակը «պետական պատրաստ մեքենան» ջարդելու, կոտրելու փորձն էր։ Մարքսն ու Ենգելսը այնքան կարևոր եյին համարում այդ յեզրակացությունը, վոր 1872 թվականին միայն այդ ուղղումը մտցրին «Կոմունիստական մանիֆեստի» (վորոշ մասերով) «հնացած» ծրագրի մեջ*։ Մարքսն ու Ենգելսը ցույց տվին, վոր Կոմունան վոչնչացնում եր բանակն ու աստիճանավորությունը, վոչնչացնում եր պառլամենտարիզմը, կործանում եր «մակաբուծական կոշկոռը (нарост)—պետությունը» և այլն, իսկ գե՛րիմաստուն Կաուցկին, գիշերային թասակ դնելով, կրկնում է այն, ինչ վոր հազար անգամ ասել են լիբերալ պրոֆեսորները՝ հեքիաթներ «զուտ դեմոկրատիայի» մասին։

1914 թվականի ոգոստոսի 4-ին իզուր չասաց Ռոզա Լյուքսեմբուրգը, թե գերմանական սոցիալ-դեմոկրատիան այժմ նեխվող դիակ է։

Յերրորդ խուսափանքն է.

«Յեթե մենք խոսում ենք դիկտատուրայի մասին, վորպես կառավարման ձևի, ապա մենք չենք կարող խոսել դասակարգի դիկ-

---

* Քաղվածքը վերցված է Ֆ. Ենգելսի հոդվածից․ «Uber das Autoritätsprinzip (Del l' Autorità)» («Ավտորիտետի սկզբունքի մասին»)։ («Neue Zeit» 1913—1914 Band I, S. 39)։ Խմբ.։

---

* Վլ. Ի. նկատի ունի Մարքսի «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» գրքի հետևյալ տեղերը։ «Բանվոր դասակարգը չի կարող պարզապես տիրանալ պետական պատրաստի մեքենային ու հարկադրել, վոր նա իր նպատակներին ծառայի» (Մարքսն ու Ենգելսը այս նախադասությունը քաղում են «Կոմունիստական մանիֆեստի» 1872 թ. լույս տեսած գերմանական հրատարակության առաջաբանում)։

«Կոմունալ կազմությունը վոչ թե կործանում, այլ, ընդհակառակը, կազմակերպում եր ազգի միասնականությունը. այդ միասնականությունը պետք է դառնար իրական բան այն պետական իշխանության վոչնչացմամբ, վորը համարվում եր միասնականության մարմնացում, յենթադրում եր կանգնել ազգից վեր ու նրանից անկախ, իսկ իրոք միայն մակաբույծ եր ազգի որգանիզմի վրա»։ (К. Маркс. «Гражданская война во Франции». Перевод с немецкого, под редакцией Н. Ленина. Изд. Соцэкгиз. «Б-ка марксиста. М.-Лнгр. 1931, եջ 46, 50)։ Խմբ.։

տատուրայի մասին։ Վորովհետև դասակարգը, ինչպես արդեն նկատեցինք, կարող է միայն տիրապետել, բայց վոչ կառավարել...» (Իսկ կառավարում են «կազմակերպությունները» կամ «կուսակցությունները»)։

Շփոթում եք, անաստված շփոթում, պարոն «խառնաշփոթության խորհրդական»։ Դիկտատուրան «կառավարման ձև» չէ, սա ծիծաղելի անմտություն է։ Յեվ Մարքսը խոսում է վոչ թե կառավարման ձևի մասին, այլ պետության ձևի կամ տիպի։ Սա բոլորովին այն չէ, բոլորովին այն չէ։ Միանգամայն սխալ է նույնպես, թե դասակարգը չի կարող կառավարել,—այսպիսի անհեթեթություն ասել կարող եր «պառլամենտական կրետինը» միայն, վորը վոչինչ չի տեսնում, բացի բուրժուական պառլամենտից, վոչինչ չի նկատում, բացի «կառավարող կուսակցություններից»։ Յեվրոպական ամեն մի յերկիր ցույց կտա Կաուցկուն կառավարման որինակ՝ տիրապետող դասակարգի կողմից, որինակ, միջին դարերում կալվածատերերի կողմից, չնայած նրանց վոչ-բավականաչափ կազմակերպվածության։

Ամփոփումն։ Կաուցկին ամենաանլուր կերպով խեղաթյուրել է պրոլետարիատի դիկտատուրա հասկացողությունը, Մարքսին դարձնելով սովորական լիբերալ, այսինքն՝ ինքն է գլորվել մինչև այն լիբերալի մակարդակը, վորը գռեհիկ ֆրազներ է շաղակրատում «զուտ դեմոկրատիայի» մասին, գեղազարդելով ու ստվերարկելով բուրժուական դեմոկրատիայի դասակարգային բովանդակությունը, ամենից ավելի խորշելով ճնշված դասակարգի հեղափոխական բռնությունից։ Յերբ Կաուցկին «պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրա» հասկացողությունը այնպես «մեկնաբանեց»,

վոր չքացավ ճնշված դասակարգի հեղափոխական բռնությունը ճնշողների վերաբերմամբ, ապա Մարքսի լիբերալ աղավաղման գործում համաշխարհային ռեկորդ խփվեց։ Ռենեգատ Բերնշտայնը ռենեգատ Կաուցկու համեմատությամբ շնիկ դուրս յեկավ։

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ

Կաուցկու կողմից անաստված կերպով խառնաշփոթած հարցը իրոք ներկայանում է այսպիսի կերպարանքով։

Յեթե չծաղրենք առողջ դատողությունը և պատմությունը, ապա պարզ է, վոր չի կարելի խոսել «զուտ դեմոկրատիայի» մասին, քանի գոյություն ունեն զանազան դասակարգեր, այլ կարելի յե խոսել միայն դասակարգային դեմոկրատիայի մասին։ (Փակագծերում ասած, «զուտ դեմոկրատիան» վոչ միայն տգիտական ֆրազ է, վոր յերևան է բերում ինչպես դասակարգերի պայքարը, այնպես էլ պետության էությունը չըմբռնելը, այլև յեռապատիկ դատարկ ֆրազ է, վորովհետև կոմունիստական հասարակության մեջ դեմոկրատիան վերասերվելով ու սովորույթ դառնալով, չքանալու յե, բայց յերբեք չի լինի «զուտ» դեմոկրատիա)։

«Զուտ դեմոկրատիան» բանվորներին հիմարացնող լիբերալի ստահոդ ֆրազ է։ Պատմությունը գիտե բուրժուական դեմոկրատիան, վոր գալիս է փոխարինելու ֆեոդալիզմը,* և պրոլետարական դեմոկրատիան, վոր գալիս է փոխարինելու բուրժուականը։

* Ձեռագրի մեջ. «փոխարինում է միջնադարականությունը»։ Խմբ.։

Ցեթե Կաուցկին գրեթե տասնյակ էջեր է նվիրում այն ճշմարտության «ապացույցին», թե բուրժուական դեմոկրատիան առաջադիմական է միջնադարականության հետ համեմատած և որ պրոլետարիատն անպատճառ պետք է օգտագործի այն իր պայքարի մեջ ընդդեմ բուրժուազիայի, ապա դա հենց բանվորներին հիմարացնող լիբերալ շաղակրատություն է։ Ոչ միայն կրթված Գերմանիայում, այլև անկիրթ Ռուսաստանում դա տրուիզմ է։ Կաուցկին պարզապես «գիտնական» ավազ է նետում բանվորների աչքը, փքուն տեսք ընդունած պատմելով և՛ Վայտլինգի մասին, և՛ Պարագվայի ճիզվիտների մասին, և՛ այլ շատ բաների մասին, որպեսզի անտեսի արդի, այսինքն կապիտալիստական դեմոկրատիայի բուրժուական էությունը։

Կաուցկին մարքսիզմից վերցնում է այն, ինչ որ ընդունելի յե լիբերալների համար, բուրժուազիայի համար (միջնադարականության քննադատությունը, առհասարակ կապիտալիզմի և մասնավորապես կապիտալիստական դեմոկրատիայի պատմական հառաջադիմական դերը), և մարքսիզմի մեջ ստվերարկում է, լռությամբ անցնում, դուրս նետում այն, ինչ որ անընդունելի յե բուրժուազիայի համար (պրոլետարիատի հեղափոխական բռնությունն ընդդեմ բուրժուազիայի՝ նրա ոչնչացման համար)։ Ահա թե ինչու յե Կաուցկին անխուսափելիորեն, իր օբյեկտիվ դրության շնորհիվ և որպիսին էլ լինի նրա սուբյեկտիվ համոզվածությունը, բուրժուազիայի լաքեյը դուրս գալիս։

Բուրժուական դեմոկրատիան՝ պատմական մեծ առաջադիմություն լինելով միջնադարականության հետ համեմատած՝ միշտ մնում է և կապիտալիզմի օրով չի կարող չմնալ—նեղ, պակասավոր, կեղծ, խաբեբայական,

հարուստների համար դրախտ, շահագործվողների, աղքատների համար թակարդ ու խաբեբայություն։ Ահա այս ճշմարտությունը, որ մարքսիստական ուսմունքի էականագույն բաղկացուցիչ մասն է կազմում, «մարքսիստ» Կաուցկին չի ըմբռնել։ Ահա այս—արմատական—հարցում Կաուցկին բուրժուազիային «հաճելություններ» է հրամցնում, փոխանակ գիտական քննադատության յենթարկելու այն պայմանները, որոնք ամեն բուրժուական դեմոկրատիա դարձնում են դեմոկրատիա հարուստների համար։

Նախ հիշեցնենք գիտնականագույն պարոն Կաուցկուն Մարքսի և Էնգելսի այն տեսական հայտարարությունները, որ մեր տիրացուն խայտառակ կերպով «մոռացել է» (ի հաճույս բուրժուազիայի), իսկ հետո բանը բացատրենք ամենից հանրամատչելի ձևով։

Ոչ միայն հինն ու ֆեոդալականը, այլև

«արդի ներկայացուցչական պետությունը վարձու աշխատանքի հարստահարման գործիք է կապիտալի համար» (Էնգելսը պետության նվիրած իր երկում)*։ «Որովհետև պետությունը սոսկ փոխանցիկ հաստատություն է, որից հարկ է օգտվել պայքարի մեջ, հեղափոխության մեջ, որպեսզի բռնի կերպով ճնշել հակառակորդներին, ապա զուտ անմտություն է ժողովրդական ազատ

---

*Վլ. Ի. նկատի ունի Էնգելսի՝ «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» բրոշյուրի հետևյալ տեղը. «Այսպես, անտիկ պետությունն առավելապես ստրկատերերի պետություն էր՝ ստրուկներին յենթարկելու համար, ինչպես ֆեոդալական պետությունն ազնվականության օրգանն է՝ ճորտ ու կախյալ գյուղացիներին յենթարկելու և սանձահարելու համար, իսկ արդի ներկայացուցչական պետությունը վարձու աշխատանքի հարստահարման գործիք է՝ կապիտալի համար»։ (Энгельс. "Происхождение семьи, частной собственности и государства». Изд. Партийного издательства. 1932, էջ 174)։ Խմբ.։

պետության մասին խոսել քանի դեռ պրոլետարիատը կարիք ունի պետության, նա դրա կարիքն ունի վոչ թե ազատության շահերի տեսակետից, այլ ճնշելու համար իր հակառակորդներին, իսկ յերբ հնարավոր ե դառնում խոսել ազատության մասին, այն ժամանակ պետությունը, վորպես այդպիսին, դադարում ե գոյություն ունենալուց» (Ենգելսը Բեբելին 1875 28/III գրած նամակում)։ «Պետությունը վոչ այլ ինչ ե, բայց յեթե մեքենա ճնշելու համար մեկ դասակարգը մյուսի կողմից, և դեմոկրատական հանրապետության մեջ ամենեին ել վոչ պակաս, քան միապետության մեջ» (Ենգելսը Մարքսի «Քաղաքացիական պատերազմ»-ի առաջաբանում)։* Ընդհանուր ընտրական իրավունքը «բանվոր դասակարգի հասունության ցուցանիշն ե։ Ավելին տալ նա չի կարող յեվ յերբեք չի տա այժմյան պետության մեջ» ** (Ենգելսը պետության նվիրված իր յերկում)։ ***

Պարոն Կաուցկին արտասովոր տաղտկալիությամբ ծամծմում ե այս դրույթի առաջին մասը, վոր ընդունելի յե բուրժուազիայի համար։ Իսկ յերկրորդը, վոր մենք ընդգծեցինք և վորն ընդունելի չե բուրժուազիայի համար, ռենեգատ Կաուցկին լռությամբ ե մատնում։

* Քաղվածքը վերցված ե Մարքսի «Քաղաքացիական պատերազմին» Ենգելսի կցած առաջաբանից (К. Маркс. „Гражданская война во Франции (1870—1871)“. С предисловием Энгельса. Перевод с немецкого под редакцией Н. Ленина. Изд. Соцэкгиза. Библиотека марксиста. М.—Лнгр. 1931, եջ 12—13)։ Խմբ.։

** Ընդգծումը Լենինինն ե։ Խմբ.։

*** Վլ. Ի. նկատի ունի Ենգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» բրոշյուրի հետևյալ տեղը. «Այսպիսով, ընդհանուր ընտրական իրավունքը ծառայում ե վորպես բանվոր դասակարգի հասունության ցուցանիշ։ Վորևե ավելի բան նա արդի պետության մեջ չի կարող լինել և չի լինելու. բայց այդ ել բավական ե»։ (Ф. Энгельс. Происхождение семьи, частной собственности и государства“. Изд. Партийного издательства. М.-Лнгр. 1932. եջ 175)։ Խմբ.

«Կոմունան պետք ե լինի վոչ թե պառլամենտարական, այլ աշխատող կորպորացիա, վորը միևնույն ժամանակ և՛ որենսդիր ե՛ և՛ որենքները կատարող... Փոխանակ յերեք կամ վեց տարում մեկ անգամ վորոշելու, թե տիրապետող դասակարգի վոր անդամը) պետք ե պառլամենտում ներկայացնի և ճնշի (ver-und zertreten, ժողովուրդը, փոխանակ այդ բանի, ընդհանուր ընտրական իրավունքը պետք ե ծառայեր կոմունաների մեջ կազմակերպված ժողովրդին, վորպեսզի նա իր ձեռնարկության համար գտներ բանվորներ, վերակացուներ, հաշվապահներ, ինչպես անհատական ընտրական իրավունքը ծառայում ե ամեն մի գործատուի այդ նպատակի համար» (Մարքսը Փարիզի կոմունային նվիրված յերկում «Քաղաքաց. պատերազմը Ֆրանսիայում»)։

Գիտնականագույն պ. Կաուցկուն հիանալի հայտնի այս դրույթներից յուրաքանչյուրը խփում ե նրա յերեսին, մերկացնում նրա ամբողջ ռենեգատությունը։ Կաուցկու ամբողջ բրոշյուրում այս ճշմարտությունների ըմբռնման նշույլ անգամ չկա։ Նրա բրոշյուրի ամբողջ բովանդակությունը ծաղր ե մարքսիզմի վերաբերմամբ։

Վերցրեք արդի պետությունների հիմնական որենքները, վերցրեք այդ պետությունների կառավարումը վերցրեք ժողովների կամ մամուլի ազատությունը, վերցրեք «քաղաքացիների հավասարությունն որենքի առաջ»,—և դուք կտեսնեք յուրաքանչյուր քայլափոխում բուրժուական դեմոկրատիայի՝ ամեն մի ազնիվ ու գիտակից բանվորի լավ հայտնի կեղծավորությունը։ Չկա վոչ մի, թեկուզ ամենադեմոկրատական պետություն, վորտեղ սահմանադրությունների մեջ չլինեյին սողանցքներ կամ վերապահություններ, վորոնք բուրժուազիայի համար ապահովում են բանվորների դեմ զորքեր շարժելու, պատերազմական դրություն մտցնելու և այլնի հնարավորությունը «կարգը խախտելու դեպքում»,—իրոք, այն դեպքում, յերբ շահագործվող դա-

սակարգը «խախտում է» իր սեփական դրությունը և փորձեր անում իրեն պահելու ոչ-սովորաբար: Կաուցկին անամոթաբար գեղազարդում է բուրժուական դեմոկրատիան, լռության տալով, օրինակ, այն, ինչ որ անում են Ամերիկայում կամ Շվեյցարիայում գործադուլավոր բանվորների դեմ ամենից դեմոկրատական և հանրապետական բուրժուաները:

Ո՛, իմաստուն և գիտնական Կաուցկին այդ մասին լռում է: Նա, այդ գիտնական ու քաղաքական գործիչը չի հասկանում, որ այդ մասին լռելը ստորություն է: Նա գերադասում է բանվորներին պատմել մանկական հեքիաթներ, ինչպես, օրինակ, այն, որ դեմոկրատիա նշանակում է «փոքրամասնության պահպանություն»: Անհավանական է, բայց փաստ է: Քրիստոսի ծննդից հետո 1918 թվականին իմպերիալիստական սպանդի և ինտերնացիոնալիստական (այսինքն Ռենոդելների և Լոնգեների, Շայդեմանների և Կաուցկիների, Հենդերսոնների ու Վեբբերի և նմանների պես ստրկաբար սոցիալիզմին չդավաճանած) փոքրամասնությունները՝ «աշխարհի բոլոր դեմոկրատիաներում» խեղդելու հինգերորդ տարում պարոն գիտնական Կաուցկին քաղցրիկ, քաղցրիկ ձայնով ներբողում է «փոքրամասնության պահպանությունը»: Ով ցանկանում է, կարող է այդ կարդալ Կաուցկու բրոշյուրի 15-րդ էջում: Իսկ 16-րդ էջում սույն գիտնական անհատը կպատմի ձեզ Անգլիայի XVIII դարի վիգերի և թորիների* մասին!:

Ո՛, գիտնականություն: Ո՛, նրբին լաքեյություն բուրժուազիայի առաջ: Ո՛, կապիտալիստների առաջ փորսող տալու և նրանց կոշիկները լիզելու քաղաքակիրթ վարվելաձև: Եթե ես լինեյի Կրուպպ, կամ Շայդեման, կամ Կլեմանսո, կամ Ռենոդել, ես միլիոններ կվճարեյի պարոն Կաուցկուն, կպարգևատրեյի նրան Հուդայի համբույրներով, կգովաբանեյի նրան բանվորների առաջ, կհանձնարարեյի «սոցիալիզմի միասնականություն» այնքան «պատվելի» մարդկանց հետ, ինչպես Կաուցկին է: Բրոշյուրներ գրել պրոլետարիատի դիկտատուրայի դեմ, պատմել XVIII դարի Անգլիայի վիգերի և թորիների մասին, հավատացնել, թե դեմոկրատիա նշանակում է «փոքրամասնության պահպանություն» և լռության տալ «դեմոկրատական» հանրապետության Ամերիկայում ինտերնացիոնալիստների դեմ կազմակերպած ջարդերը,—միթե դա լաքեյական ծառայություններ չեն բուրժուազիային մատուցած:

Գիտնական պարոն Կաուցկին «մոռացել է»—հավանորեն, պատահաբար մոռացել—մի «մանրունք»,

* Վիգեր յեվ տորիներ—Անգլիայի քաղաքական կուսակցություններն են, որ ծագել են XVII դարի անգլիական հեղափոխության դարաշրջանում, քաղաքական տարբեր շահերի և սոցիալական կազմի շնորհիվ փոխադարձ պայքար են մղել իրենց գոյության ամբողջ ընթացքում: Վիգերի կուսակցությունը (1619—1854թ.) ֆինանսական շրջանների և առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի մի մասի շահերի ներկայացուցիչն էր: Վիգերից է ծագում ներկայումս գոյություն ունեցող լիբերալ կուսակցությունը (Ասկվիտ, Լլոյդ-Ջորջ): Ի տարբերություն վիգերից՝ թորիների կուսակցությունը (1680—1832 թ.) հանդիսանում է խոշոր հողատիրության կուսակցությունը, անգլիական հասարակության պահպանողական շրջանների ներկայացուցիչը,—մի կուսակցություն, որը կանգնած է ֆեոդալական անցյալի տրադիցիաների պաշտպանության և ազատամիտ ու առաջադիմական պահանջների դեմ պայքար մղելու տեսակետի վրա: Հետագայում հիմք դրեց պահպանողական կուսակցության: Խմբ.:

այն է՝ որ բուրժուական դեմոկրատիայի տիրապետող կուսակցությունը փոքրամասնության պաշտպանություն տալիս է միայն այլ բուրժուական կուսակցությանը, իսկ պրոլետարիատին ամեն մի լուրջ, խորը, արմատական հարցի պարագայում «փոքրամասնության պաշտպանության» փոխարեն բաժին են ընկնում պատերազմական դրությունները կամ ջարդերը: Որքան ավելի յե զարգացած դեմոկրատիան, այնքան ավելի մոտ են լինում ջարդը կամ քաղաքացիական պատերազմը բուրժուազիայի համար վտանգավոր ամեն մի քաղաքական խորը տարամիտման պարագայում: Բուրժուական դեմոկրատիայի այս «օրենքը» գիտնական պարոն Կաուցկին գիտել կարող էր հանրապետական Ֆրանսիայում Դրեյֆուսի գործի մեջ, դեմոկրատական հանրապետության Ամերիկայում նեգրերի և ինտերնացիոնալիստների վերաբերմամբ գործադրվող լինչի դատաստանի մեջ, դեմոկրատական Անգլիայում Իռլանդիայի և Ոլստերի օրինակի մեջ, Ռուսաստանյան դեմոկրատական հանրապետության մեջ այն հալածանքներում ու ջարդերում, որ 1917 թ. ապրիլին կազմակերպվեցին բոլշևիկների դեմ: Յես դիտմամբ օրինակներ վերցնում եմ ո՛չ միայն պատերազմի ժամանակից, այլ նմանապես նախապատերազմական, խաղաղ ժամանակից: Բազըր-մազըր պարոն Կաուցկուն հաճելի յե աչք փակել XX դարի այս փաստերի հանդեպ ու դրա փոխարեն բանվորներին պատմել զարմանալի նոր, խիստ հետաքրքրական արտասովոր ուսանելի, աներևակայելի կարևոր բաներ XVIII դարի վիգերի և տորիների մասին:

Վերցրեք բուրժուական պառլամենտը: Արդյոք կարելի՞ յե յենթադրել, որ գիտնական Կաուցկին յերբեք չի լսել այն մասին, թե բորսան ու բանկիրները այն-

քան ավելի յեն յենթարկում իրենց բուրժուական պառլամենտները, որքան ուժեղ է զարգացած դեմոկրատիան: Սրանից չի հետևում, թե չպետք է օգտագործել բուրժուական պառլամենտարիզմը (և բոլշևիկները այնպիսի հաջողությամբ օգտագործեցին այն, ինչպես հազիվ թե օգտագործած լիներ աշխարհում որևէ այլ կուսակցություն, որովհետև 1912—1914 թվականներին մենք 4-րդ Դումայում նվաճեցինք բանվորական ամբողջ կուրիան): Բայց սրանից հետևում է, որ միայն լիբերալը կարող է մոռանալ բուրժուական պառլամենտարիզմի պատմական սահմանափակությունն ու պայմանականությունը, ինչպես այդ մասին մոռանում է Կաուցկին: Ճնշված մասսաները յուրաքանչյուր քայլափոխում ամենադեմոկրատական բուրժուական պետության մեջ հանդիպում են աղաղակող հակասությունների, որոնք գոյություն ունեն կապիտալիստների «դեմոկրատիայի» կողմից ազդարարվող ձևական հավասարության և այն հազարավոր փաստական սահմանափակումների ու բարդությունների* միջև, որ պրոլետարներին դարձնում են վարձու ստրուկներ: Հենց այդ հակասությունն է բաց անում մասսաների աչքը կապիտալիզմի նեխվածության, ստահոդության, կեղծավորության նկատմամբ: Հենց այդ հակասությունն են շարունակ մերկացնում սոցիալիզմի ագիտատորներն ու պրոպագանդիստները մասսաների առաջ, որպեսզի հեղափոխության նախապատրաստեն նրանց: Իսկ յերբ սկսվեց հեղափոխությունների դարաշրջանը, այն ժամանակ Կաուցկին քամակը** դարձրեց նրան ու սկսեց

* Ձեռագրում «նեղուցերի»: Խմբ.:

** 1918 թ. հրատ. մեջ. «յերեսը»: Խմբ.:

ներբողել բուրժուական մեռնող դեմոկրատիայի հրապույրները:

Պրոլետարական դեմոկրատիան, որի ձևերից մեկը հանդիսանում է Խորհրդային իշխանությունը, դեմոկրատիային տվեց աշխարհումս չտեսնված զարգացում ու ընդլայնում բնակչության հենց վիթխարի մեծամասնության, շահագործվողների և աշխատավորների համար: Ամբողջ գրքույկ գրել դեմոկրատիայի մասին, ինչպես այդ արել է Կաուցկին, որը յերկու եջում խոսում է դիկտատուրայի մասին և տասնյակ եջերում «զուտ դեմոկրատիայի»,—ու չնկատել այդ, դա նշանակում է բոլորովին բանը խեղաթյուրել լիբերալորեն:

Վերցրեք արտաքին քաղաքականությունը: Ոչ մեկ ամենադեմոկրատական բուրժուական յերկրում նա չի կատարվում բացահայտ կերպով: Ամենուրեք մասսաների խաբեություն է, դեմոկրատական Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Ամերիկայում հարյուրապատիկ ավելի լայն ու նրբին, քան թե ուրիշ յերկրներում: Խորհրդային իշխանությունը հեղափոխորեն պոկեց արտաքին քաղաքականությունից գաղտնիքի քողը: Կաուցկին այդ չի նկատել, նա լռում է այդ մասին, թեև հափշտակողական պատերազմների և «ազդեցության շրջանների բաժանման» (այսինքն աշխարհը ավազակ-կապիտալիստների մեջ բաժանելու) գաղտնի պայմանագրերի դարաշրջանում դա ունի կարևորագույն նշանակություն, որովհետև դրանից է կախված խաղաղության հարցը, տասնյակ միլիոնավոր մարդկանց կյանքի և մահվան հարցը:

Վերցրեք պետության կազմությունը: Կաուցկին կառչում է «մանրունքից» այն պատճառով, որ ըստ բանի եյության չի տեսնում «ոչ-ուղղակի» ընտրությունները (խորհրդային սահմանադրության մեջ): Նա չի նկատում պետական ապարատի, պետական մեքենայի դասակարգային եյությունը: Բուրժուական դեմոկրատիայի մեջ կապիտալիստները հազարավոր արարքներով—որոնք այնքան ավելի վարպետական են ու ճիշտ ներգործող, որքան ավելի յե զարգացած «զուտ» դեմոկրատիան—վանում են մասսաներին կառավարման մասնակցելուց, ժողովների ու մամուլի և այլնի ազատությունից: Խորհրդային իշխանությունը առաջինն է աշխարհում (իսկապես ասած, յերկրորդը, որովհետև նույնն անել սկսեց Փարիզի կոմունան), որ դեպի կառավարումն է գրավում մասսաներին, հենց շահագործվող մասսաներին: Աշխատավոր մասսաներից հազարավոր ցանկապատերով ցանկապատված է մասնակցությունը բուրժուական պառլամենտում (որը յերբեք չի լուծում բուրժուական դեմոկրատիայի մեջ լրջագույն հարցերը. դրանք լուծում են բորսան, բանկերը), և բանվորները հիանալի գիտեն ու զգում են, տեսնում են ու շոշափում, որ բուրժուական պառլամենտը օտար հաստատություն է, բուրժուազիայի կողմից պրոլետարներին ճնշելու գործիք, թշնամական դասակարգի, շահագործող փոքրամասնության հաստատություն:

Խորհուրդները—իրենց աշխատավոր և շահագործվող մասսաների անմիջական կազմակերպությունն են, որ հեշտացնում է նրանց համար պետությունը սեփական ուժերով կազմակերպելու և այն ամեն կերպ, ինչպես որ կարելի յե, կառավարելու հնարավորությունը: Ընդսմին հենց աշխատավորների և շահագործվողների ավանգարդը, քաղաքային պրոլետարիատը, այն առավելությունն է ստանում, որ նա լավագույն կերպով է միավորված խոշոր ձեռնարկությունների կողմից,—

Նրա համար ամենից հեշտ է ընտրելն ու ընտրությունները հետևելը։ Խորհրդային կազմակերպությունը ավտոմատիկ կերպով հեշտացնում է բոլոր աշխատավորների և շահագործվողների միավորումը նրանց ավանգարդի, պրոլետարիատի շուրջը։ Բուրժուական հին ապարատը—աստիճանավորությունը, հարստության, բուրժուական կրթության, կապերի և այլնի արտոնությունները (այս փաստական արտոնություններն այնքան ավելի բազմազան են, որքան զարգացած է բուրժուական դեմոկրատիան),—այդ ամենը խորհրդային կազմակերպության պարագայում վերանում է։ Մամուլի ազատությունը դադարում է կեղծավորություն լինելուց, որովհետև տպարաններն ու թուղթը գրավվում են բուրժուազիայից։ Նույնն է լավագույն շենքերի, պալատների, առանձնակ-ապարանքների (особняки), կալվածատիրական տների վերաբերմամբ։ Խորհրդային իշխանությունը շատ ու շատ հազարավոր այդ լավագույն շենքերը մեկեն խլեց շահագործողներից և այդպիսով մասսաների համար ժողովների իրավունքը դարձրեց միլիոն անգամ ավելի «դեմոկրատիկ»,—ժողովների այն իրավունքը, առանց որի դեմոկրատիան խաբեություն է։ Ոչ-լոկալ, ոչ-տեղային խորհուրդների ոչ-ուղղակի ընտրությունները հեշտացնում են խորհուրդների համագումարները, ամբողջ ապարատը դարձնում ավելի էժան, շարժուն, բանվորների և գյուղացիների համար ավելի մատչելի այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ կյանքը եռում է և պահանջվում է առանձնապես արագ ունենալ հնարավորություն հետ կանչելու տեղական պատգամավորին կամ ուղարկելու նրան խորհուրդների ընդհանուր համագումարը։

Պրոլետարական դեմոկրատիան միլիոն անգամ դեմոկրատիկ է ամեն մի բուրժուական դեմոկրատիայից,—Խորհրդային իշխանությունը միլիոնավոր անգամներ դեմոկրատիկ է ամենադեմոկրատական բուրժուական հանրապետությունից։

Այդ միայն կարող էր չնկատել կամ բուրժուազիայի գիտակից սպասարկուն, կամ այն մարդը, որ քաղաքականապես բոլորովին մեռած է, չի տեսնում կենդանի կյանքը բուրժուական փոշոտ գրքերի հետևից, թափնթափ տոգորված է բուրժուական դեմոկրատական նախապաշարմունքներով և դրանով իրեն օբյեկտիվորեն դարձնում է բուրժուազիայի լաքեյը։

Այդ կարող էր չնկատել միայն մի մարդ, որն ընդունակ չէ հարցը դնելու ճնշված դասակարգերի տեսակետից։

Բուրժուական ամենից դեմոկրատական յերկիրների շարքում կա՞ արդյոք աշխարհումս գոնե մեկ յերկիր, որում միջին, մասսայական բանվորը, միջին, մասսայական բատրակը կամ գյուղական կիսապրոլետարն առհասարակ (այսինքն ճնշված մասսայի, բնակչության ահագին մեծամասնության ներկայացուցիչը) գեթ մոտավորապես վայելեր լավագույն շենքերում ժողովներ սարքելու այնպիսի ազատություն, իր գաղափարների արտահայտության համար, իր շահերի պաշտպանության համար խոշորագույն տպարաններ և թղթի լավագույն պահեստներ ունենալու այնպիսի ազատություն, պետության կառավարման և պետության «սարքման» համար հենց իր դասակարգի մարդկանց առաջադրելու այնպիսի ազատություն, ինչպես Խորհրդային Ռուսաստանում։

Մտածելն անգամ ծիծաղելի յե, թե պարոն Կաուց-

կին վորևէ յերկրում կկարողանա հազար խրճիթ բանվորի ու բատրակի մեջ գտնել գեթ մեկը, վորը տարակույս ունենա այս հարցի պատասխանի վերաբերմամբ: Բնազդորեն, բուրժուական թերթերից լսելով ճշմարտության խոստովանումների պատառիկներ, ամբողջ աշխարհի բանվորները համակրում են Խորհրդային հանրապետությանը հենց այն պատճառով, վոր նրա մեջ տեսնում են **պրոլետարական** դեմոկրատիա, **դեմոկրատիա աղքատների համար** և վոչ թե դեմոկրատիա հարուստների համար, վորպիսին իրոք հանդիսանում է ամեն մի, նույնիսկ լավագույն, բուրժուական դեմոկրատիան:

Մեզ կառավարում են (և մեր պետությունը «սարքում») բուրժուական աստիճանավորները, բուրժուական պառլամենտական գործիչները, բուրժուական դատավորները: Ահա այն պարզ, ակներև, անվիճելի ճշմարտությունը, վոր իրենց կյանքի փորձով գիտեն, վոր ամեն որ զգում են ու շոշափում բուրժուական բոլոր յերկիրներում, այդ թվում նաև ամենադեմոկրատականներում, ճնշված դասակարգերին պատկանող տասնյակ ու հարյուրավոր միլիոն մարդիկ:

Իսկ Ռուսաստանում բոլորովին ջարդել են աստիճանավորական ապարատը, նրանում չեն թողել քարը քարի վրա, վռնդել են բոլոր հին դատավորներին, ցրել բուրժուական պառլամենտը—և տվել են **շատ ավելի մատչելի** ներկայացուցչություն հենց բանվորներին ու գյուղացիներին, **նրանց** խորհուրդներով են փոխարինել աստիճանավորներին, կամ **նրանց** խորհուրդներին յենթարկել աստիճանավորներին, **նրանց** խորհուրդները դարձրել դատավորներ ընտրողներ: Միակ այս փաստը բավական է, վորպեսզի բոլոր ճնշված

դասակարգերն ընդունեն, վոր Խորհրդային իշխանությունը, այսինքն պրոլետարիատի դիկտատուրայի տվյալ ձևը, միլիոն անգամ ավելի դեմոկրատական է, քան թե բուրժուական ամենադեմոկրատական հանրապետությունը:

Կաուցկին չի հասկանում ամեն մի բանվորի համար հասկանալի և ակներև այս ճշմարտությունը, վորովհետև նա «մոռացել» է, «ապասովորել է» (разучился) դնել այն հարցը, թե դեմոկրատիան **վո՞ր դասակարգի համար է**: Նա դատում է «զուտ» (այսինքն անդասակարգայի՞ն, թե արտադասակարգային) դեմոկրատիայի տեսակետից: Նա Շեյլոկի նման է փաստարկում՝ «մի ֆունտ միս», ուրիշ վոչինչ: Բոլոր քաղաքացիների հավասարություն—այլապես չկա դեմոկրատիա:

Հարկադրված ենք գիտնական Կաուցկուն, «մարքսիստ» և «սոցալիստ» Կաուցկուն հարց տալ.

Կարո՞ղ է լինել արդյոք շահագործվողի և շահագործողի հավասարություն:

Սա հրեշավոր բան է, սա աներևակայելի յէ, վոր հարկադրված ենք այսպիսի հարց տալ II Ինտերնացիոնալի գաղափարային առաջնորդի գիրքը քննելիս: Բայց մի բանի վոր ձեռնարկել ես, առաջ տար մինչև վերջը: Ձեռնարկել ես գրելու Կաուցկու մասին,—պարզաբանիր գիտնական մարդուն, թե ինչու չի կարող հավասարություն լինել շահագործողի և շահագործվողի մեջ:

ԿԱՐՈ՞Ղ Է ԱՐԴՅՈՔ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԵԼ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂԻ ՅԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ՄԵՋ

Կաուցկին հետևյալ կերպ է դատում.

(1) «Շահագործողները միշտ կազմել են բնակչության պզտիկ փոքրամասնությունը միայն» (Կաուցկու գրքույկի եջ 14):

Սա անվիճելի ճշմարտություն է։ Ի՞նչպես պետք է դատել, ելնելով այս ճշմարտությունից։ Կարելի յե դատել մարքսիստորեն, սոցիալիստորեն,— այդ պարագայում պետք է վորպես հիմք վերցնել շահագործվողների և շահագործողների հարաբերությունը։ Կարելի յե դատել լիբերալորեն, բուրժուական-դեմոկրատականորեն,—այդ պարագայում պետք է վորպես հիմք վերցնել մեծամասնության ու փոքրամասնության հարաբերությունը։

Յեթե մարքսիստորեն դատենք, ապա պետք է ասել. շահագործողներն անխուսափելիորեն պետությունը (իսկ խոսքը դեմոկրատիայի մասին է, այսինքն պետության ձևերից մեկի) դարձնում են իրենց դասակարգի, շահագործողների տիրապետության գործիք շահագործվողների վերաբերմամբ։ Այդ պատճառով էլ դեմոկրատական պետությունը, քանի վոր կան շահագործվողների մեծամասնության նկատմամբ տիրապետող շահագործողներ, անխուսափելիորեն կլինի դեմոկրատիա շահագործողների համար։ Շահագործվողների պետությունը պետք է արմատապես տարբերվի այդպիսի պետությունից, պետք է լինի դեմոկրատիա շահագործվողների համար և շահագործողների ճնշումն, իսկ դասակարգի ճնշումը նշանակում է այդ դասակարգի անհավասարություն, նրա բացառումը (изъятие) «դեմոկրատիայից»։

Յեթե լիբերալորեն դատենք, ապա պետք է ասել. մեծամասնությունը վճռում է, փոքրամասնությունը հնազանդվում։ Չհնազանդվողներին պատժում են։ Յեվ վերջ։ Առհասարակ պետության, մասնավորապես «զուտ դեմոկրատիայի» վորևէ դասակարգային բնույթի մասին հարկ չկա դատելու,—դա չի վերաբերում գործին՝

վորովհետև մեծամասնությունը մեծամասնություն է, իսկ փոքրամասնությունը՝ փոքրամասնություն։ Մի ֆունտ միսը մի ֆունտ միս է, և պրծավ գնաց։

Կաուցկին հենց այդպես է դատում.

(2) «Ի՞նչ պատճառներով պետք է պրոլետարիատի տիրապետությունն ընդունի և անհրաժեշտաբար ընդունի այնպիսի ձև, վորն անհամատեղելի յե դեմոկրատիայի հետ» (եջ 21)։

Հետևում է այն բանի պարզաբանումը, վոր պրոլետարիատն իր կողմն ունի մեծամասնություն, խիստ հանգամանալի և խիստ բառաշատ պարզաբանումն՝ և՛ Մարքսից քաղված մեջբերումով, և՛ Փարիզի կոմունայի ձայների թվանշաններով հանդերձ։ Յեզրակացություն.

«Այն ռեժիմը, վոր այնքան ուժեղ արմատացած է մասսաների մեջ, ամենաչնչին առիթն անգամ չունի վոտնձգություն կատարելու դեմոկրատիայի դեմ։ Նա միշտ էլ չի կարողանա կառավարվել առանց բռնության, այն դեպքերում, յերբ բռնություն է գործադրվում դեմոկրատիան ճնշելու համար։ Բռնությանը միայն բռնությամբ կարելի յե պատասխանել։ Բայց այն ռեժիմը, վոր գիտե, թե իր հետևում մասսաներն են, բռնությունը կգործադրի միայն նրա համար, վորպեսզի պահպանի դեմոկրատիան և վոչ թե վոչնչացնի այն։ Նա ուղղակի ինքնասպանություն կատարած կլիներ, յեթե կամենար վերացնել իր ամենահուսալի հիմքը, ընդհանուր ընտրական իրավունքը, քաղաքական հզոր հեղինակության խորը աղբյուրը» (եջ 22)։

Դուք տեսնում եք. Կաուցկու փաստարկումից չքացավ շահագործվողների և շահագործողների հարաբերությունը։ Մնաց միայն առհասարակ մեծամասնությունը, առհասարակ փոքրամասնությունը, առհասարակ դեմոկրատիան, մեզ արդեն ծանոթ «զուտ դեմոկրատիան»։

Նկատեցեք, վոր սա ասվում է Փարիզի կոմունայի՝ կապակցությամբ։ Հապա ակնառության համար բերենք,

թե ինչպես էին խոսում դիկտատուրայի մասին Մարքսն ու Էնգելսը Կոմունայի կապակցությամբ*.

Մարքս. «...Երբ բանվորները բուրժուազիայի դիկտատուրայի տեղը դնում են իրենց հեղափոխական դիկտատուրան... վորպեսզի բուրժուազիայի դիմադրությունը կոտրեն... բանվորները պետությանը տալիս են հեղափոխական և փոխանցիկ ձև...»։

Էնգելս «... Հաղթանակած» (հեղափոխության մեջ) «կուսակցությունն ըստ անհրաժեշտության հարկադրված է լինում իր տիրապետությունը պահել այն վախի միջոցով, վոր նրա զենքը ներշնչում է ռեակցիոներներին։ Երբ Փարիզի կոմունան չհենվեր զինված ժողովրդի հեղինակության վրա ընդդեմ բուրժուազիայի, միթե նա կդիմանար մեկ որից ավելի։ Արդյոք իրավունք չունենք մենք, ընդհակառակը, հանդիմանելու Կոմունային, վոր նա չափազանց քիչ էր ոգտվում այդ հեղինակությունից»։

Նույնը. «... Վորովհետև պետությունը միայն փոխանցիկ հաստատություն է, վորից հարկադրված ենք ոգտվել պայքարի, հեղափոխության մեջ, վորպեսզի բռնի կերպով ճնշենք մեր հակառակորդներին, ապա խոսել ժողովրդական ազատ պետության մասին՝ զուտ անմտություն է. քանի վոր պրոլետարիատը դեռևս կարիք ունի պետության, նա դրա կարիքն ունի վոչ թե ազատության շահերի պաշտպանության, այլ իր հակառակորդներին ճնշելու համար, իսկ յերբ հնարավոր է դառնում խոսել ազատության մասին, այն ժամանակ պետությունը, վորպես այդպիսին, դադարում է գոյություն ունենալուց ...»։

Կաուցկու և Մարքսի ու Էնգելսի միջև այնպիսի տարածություն է, ինչպես յերկնքից—յերկիր, ինչպես լիբերալի և պրոլետարական հեղափոխականի միջև։ Զուտ դեմոկրատիան ու պարզապես «դեմոկրատիան», վորի մասին խոսում է Կաուցկին, նույն «ժողովրդա-

* Մեջբերումները վերցված են Մարքսի «Քաղաքական անտարբերություն» և Էնգելսի «Ավտորիտար սկզբունքի մասին» հոդվածներից։ Խմբ.։

կան ազատ պետության» փոխադրությունն է սոսկ, այսինքն զուտ անմտություն։ Կաուցկին կաբինետային գիտնականավայել հիմարի գիտնականությամբ կամ 10 տարեկան աղջկա անմեղությամբ հարցաբանում է. ինչ նպատակով կարող է հարկավոր լինել դիկտատուրան, յեթե կա մեծամասնություն։ Իսկ Մարքսն ու Էնգելսը պարզաբանում են.

— — այն նպատակով, վոր կոտրենք բուրժուազիայի դիմադրությունը,

— — այն նպատակով, վոր վախ ներշնչենք ռեակցիոներներին,

— — այն նպատակով, վոր զինված ժողովրդի հեղինակությունը պահենք ընդդեմ բուրժուազիայի,

— — այն նպատակով, վոր պրոլետարիատը կարողանա բռնի կերպով ճնշել իր հակառակորդներին։

Կաուցկին չի հասկանում այս պարզաբանումները։ Սիրահարված լինելով «զուտ» դեմոկրատիայի վրա, չտեսնելով նրա բուրժուականությունը, նա «հետևողականորեն» այն կարծիքին է, վոր մեծամասնությունը, քանի վոր մեծամասնություն է նա, չպետք է փոքրամասնության «դիմադրությունը կոտրի», չպետք է նրան «բռնի կերպով ճնշի»,—բավական է ճնշել դեմոկրատիայի խախտման դեպքերը։ Սիրահարված լինելով «զուտ» դեմոկրատիայի վրա, Կաուցկին անակնկալ կերպով կատարում է այն փոքրիկ սխալը, վոր միշտ գործում են բոլոր բուրժուական դեմոկրատները, այն է՝ նա ֆորմալ (կապիտալիզմի որով թափնթափ ստահոդ ու կեղծավոր) հավասարությունն ընդունում է փաստականի տեղ։ Մանրունք։

Շահագործողը չի կարող հավասար լինել շահագործվողին։

Այս ճշմարտությունը, վորքան էլ նա Կաուցկու համար լինի անհաճելի, կազմում է սոցիալիզմի ամենաէյական բովանդակությունը։

Մյուս ճշմարտությունը. իրական, փաստական հավասարություն լինել չի կարող, քանի դեռ բոլորովին վոչնչացված չէ մեկ դասակարգի կողմից մյուսին շահագործելու ամեն մի հնարավորությունը։

Շահագործողներին մեկեն կարելի յե ջարդել կենտրոնում բռնկած հաջող ապստամբության կամ զորքի խռովության դեպքում։ Բայց, թերևս շատ հազվադեպ ու առանձնական դեպքերի բացառությամբ, շահագործողներին չի կարելի մեկեն վոչնչացնել։ Չի կարելի մեկեն յենթարկել եքսպրոպրիացիայի քիչ թե շատ մեծ յերկրի բոլոր կալվածատերերին ու կապիտալիստներին։ Այնուհետև, մենակ եքսպրոպրիացիան, վորպես իրավաբանական կամ քաղաքական ակտ, ամենևին էլ չի վճռում բանը, վորովհետև պետք է փաստորեն գրավել կալվածատերերի և կապիտալիստների տեղը, փաստորեն փոխարինել նրանց՝ ֆաբրիկաների և կալվածների այլ, բանվորական, կառավարմամբ։ Չի կարող հավասարություն լինել շահագործողների և շահագործվողների մեջ, քանի վոր շահագործողները յերկար սերունդների ընթացքում աչքի յեն ընկնում և՛ կրթությամբ, և՛ հարուստ կյանքի պայմաններով, և՛ հմտություններով, մինչդեռ շահագործվողների մասսան նույնիսկ ամենաառաջավոր և ամենից դեմոկրատական բուրժուական հանրապետություններում ճնշված է, մթին, տգետ, ահաբեկված, անջատ-բաժան։ Շահագործողները հեղաշրջումից հետո յերկար ժամանակ անխուսափելիորեն պահպանում են մի շարք փաստական ահագին առավելություններ. նրանց մոտ մնում են փողը (փողը մեկեն վոչնչացնել չի կարելի), վորոշ շարժական, հաճախ խոշոր, գույք, մնում են կապեր, կազմակերպման ու կառավարման հմտություններ, կառավարման բոլոր «գաղտնիքների» (սովորույթների, յեղանակների, միջոցների, հնարավորությունների) գիտելություն, մնում է ավելի բարձր կրթություն, մերձավորությունը տեխնիկապես բարձրագույն (բուրժուականորեն ապրող ու մտածող) անձնակազմին, մնում է անչափ ավելի մեծ հմտություն ռազմական գործում (սա շատ կարևոր է) և այլն, և այլն։

Յեթե շահագործողները ջարդված են միայն մի յերկրում—իսկ դա, իհարկե, տիպիկ դեպք է, վորովհետև հազվադեպ բացառություն է միաժամանակյա հեղափոխությունը մի շարք յերկրներում—ապա նրանք մնում են այնուամենայնիվ շահագործվողներից ուժեղ, վորովհետև շահագործողների միջազգային կապերն ահագին են։ Վոր շահագործվողների կամ ամենից պակաս զարգացած միջին-գյուղացիական, արհեստավորական և այլ նման մասսաների մի մասը գնում է և ընդունակ է գնալու շահագործողների հետևից, այդ մինչև այժմ ցույց են տվել բոլոր հեղափոխությունները, այդ թվում Կոմունան (վորովհետև Վերսալյան զորքերի մեջ կային պրոլետարներ էլ, վորպիսի հանգամանքի մասին «մոռացել» է գիտնականագույն Կաուցկին)։

Իրերի այսպիսի դրության պարագայում յենթադրել, թե շատ թե քիչ խոր ու լուրջ հեղափոխության ժամանակ հարցը վճռվում է պարզապես մեծամասնության ու փոքրամասնության հարաբերությամբ, մեծագույն բթամտություն է, սովորական լիբերալի ամենահիմարուկ նախապաշարմունք, մասսաների խաբեություն, նրանցից պատմական ակներև ճշմարտու-

թյունը թաքցնելու փորձ։ Այդ պատմական ճշմարտությունն այն է, վոր ամեն մի խոր հեղափոխության ժամանակ մի շարք տարիների ընթացքում շահագործվողների համեմատությամբ փաստական խոշոր առավելություններ պահպանող շահագործողների յերկարատև, համառ, հուսահատ դիմադրությունը հանդիսանում է կանոն։ Յերբեք,— այլ կերպ, քան քաղցրիկ հիմարուկ Կաուցկու քաղցրիկ յերևակայության մեջ—շահագործողները չեն հնազանդվի շահագործվողների մեծամասնության վճռին, չփորձելով իրենց առավելությունը վերջին, հուսահատ ճակատամարտում, մի շարք ճակատամարտերում։

Անցումը կապիտալիզմից դեպի կոմունիզմ պատմական մի ամբողջ դարաշրջան է։ Քանի վոր նա չի ավարտվել, շահագործվողների համար անխուսափելիորեն մնում է ռեստավրացիայի հույս, իսկ այդ հույսը դառնում է ռեստավրացիայի փորձեր։ Յեվ առաջին լուրջ պարտությունից հետո, տապալված շահագործողները, վորոնք չեյին սպասում իրենց տապալումը, չեյին հավատում նրան, նրա միտքն անգամ չեյին թույլ տալիս, տասնապատկված յեռանդով, կատաղի կրքով, հարյուրապատիկ աճած ատելությամբ նետվում են դեպի մարտ խլած «դրախտի» վերադարձման համար, իրենց ընտանիքների համար, վորոնք այնքան քաղցր եյին ապրում, և վորոնց այժմ «հասարակ ժողովրդի խուժանը» դատապարտում է ավերման ու թշվառության (կամ «հասարակ» աշխատանքի . . .)։ Իսկ շահագործող-կապիտալիստների հետևից ձգվում է մանր բուրժուազիայի մասսան, վորի մասին բոլոր յերկրների տասնյակ տարիների պատմական փորձը վկայում է, վոր նա յերերվում է ու տատանվում, այսոր գնում է պրո-

լետարիատի հետևից, վաղը վախենում է հեղաշրջման դժվարություններից, խուճապի մեջ ընկնում բանվորների առաջին պարտությունից կամ կիսապարտությունից, նյարդայնանում, պատեպատ դիպչում, թոնթորում, բանակից բանակ փախստականում... ինչպես մեր մենշևիկներն ու եսերները։

Յեվ երկրի այսպիսի դրության պարագայում, կատաղի, սրված պատերազմի դարաշրջանում, յերբ պատմության կողմից հերթի յեն դրվում դարավոր և հազարամյա արտոնությունների լինել-չլինելու հարցերը—խոսե՛լ մեծամասնության ու փոքրամասնության մասին, զուտ դեմոկրատիայի մասին, դիկտատուրայի անհարկավորության մասին, շահագործողի և շահագործվողի հավասարության մասին։ Բթամտության վորպիսի՜ անհուն քանակ, ֆիլիստերության վորպիսի՜ անեզր ծավալ է պետք դրա համար։

Բայց 1871—1914 թվականների համեմատաբար «խաղաղ» կապիտալիզմի տասնամյակները օպորտունիզմին հարմարվող սոցիալիստական կուսակցությունների մեջ կուտակել են ֆիլիստերության, նեղճակատության, ռենեգատության ավգյան ախոռներ . . .

* * *

Ընթերցողը նկատեց, հավանորեն, վոր Կաուցկին նրա գրքից վերը բերված քաղվածքում խոսում է ընդհանուր ընտրական իրավունքի դեմ կատարվող վոտնձգության մասին (այդ իրավունքն անվանելով—փակագծերում նկատենք—բարոյական հզոր հեղինակության խոր աղբյուր, մինչդեռ Էնգելսը նույն Փարիզի կոմունայի առթիվ և դիկտատուրայի նույն հարցի առթիվ խոսում է բուրժուազիային հակադրվող զինված

ժողովրդի հեղինակության մասին,—բնորոշ է համեմատել Փիլիստերի և հեղափոխականի հայացքը «հեղինակության» վերաբերմամբ...):

Պետք է նկատել, վոր շահագործողներին ընտրական իրավունքից զրկելու հարցը *զուտ-ռուսական* հարց է և վոչ թե առհասարակ պրոլետարիատի դիկտատուրայի հարց: Յեթե Կաուցկին առանց կեղծավորելու իր բրոշյուրը վերնագրեր «Բոլշևիկների դեմ», այն ժամանակ վերնագիրը կհամապատասխաներ բրոշյուրի բովանդակությանը և այն ժամանակ Կաուցկին իրավունք կունենար ուղղակի խոսելու ընտրական իրավունքի մասին: Բայց Կաուցկին կամեցել է հանդես գալ նախ և առաջ վորպես «տեսաբան»: Նա իր բրոշյուրը վերնագրել է «Պրոլետարիատի դիկտատուրա» *առհասարակ*: Նա խորհուրդների մասին և Ռուսաստանի մասին հատկապես խոսում է բրոշյուրի յերկրորդ մասում, նրա 5-րդ պարագրաֆից սկսած: Իսկ առաջին մասում (վորից և յես վերցրել եմ քաղվածքը) խոսքը *առհասարակ դեմոկրատիայի* և *դիկտատուրայի* մասին է: Խոսք բաց անելով ընտրական իրավունքի մասին՝ Կաուցկին *մատնեց իրեն*, վորպես հակաբոլշևիկ բանավիճողի, *վորը գռոշի արժեք չի տալիս թեորիային*: Վորովհետև թեորիան, այսինքն դատողությունը դեմոկրատիայի և դիկտատուրայի ընդհանուր (և վոչ թե ազգային-հատուկ) դասակարգային հիմքերի մասին պետք է խոսի վո՛չ թե ընտրական իրավունքի նման մասնագիտական հարցի մասին, այլ ընդհանուր հարցի՝ կարո՞ղ է արդյոք դեմոկրատիան *պահպանվել* և՛ *հարուստների*, և՛ *շահագործողների համար*՝ շահագործողներին տապալելու և նրանց պետությունը շահագործվողների

պետությամբ փոխարինելու պատմական ժամանակաշրջանում:

Այսպես և միայն այսպես կարող է հարցը դնել տեսաբանը:

Մենք գիտենք Կոմունայի որինակը, մենք գիտենք մարքսիզմի հիմնադիրների բոլոր դատողությունները նրա կապակցությամբ և նրա առթիվ: Այդ նյութի հիման վրա յես քննել եմ, որինակ, դեմոկրատիայի և դիկտատուրայի հարցը իմ «Պետություն և հեղափոխություն» բրոշյուրում, վորը գրված է մինչև Հոկտեմբերյան հեղաշրջումը: Ընտրական իրավունքի սահմանափակման մասին *յես չեմ ասել վոչ մի խոսք*: Յեվ այժմ պետք է ասել, վոր ընտրական իրավունքի սահմանափակման հարցը դիկտատուրայի ազգային հատուկ և վոչ թե ընդհանուր հարց է: Ընտրական իրավունքի սահմանափակման հարցին պետք է մոտենալ՝ ուսումնասիրելով ռուսական հեղափոխության *հատուկ պայմանները*, նրա զարգացման *հատուկ ուղին*: Հետագա շարադրանքի մեջ էլ կարվի այդ: Բայց սխալ կլիներ նախապես յերաշխավորել, թե Յեվրոպայում գալիք պրոլետարական հեղափոխություններն անպատճառ կտան—բոլորը կամ մեծամասնությունը—ընտրական իրավունքի սահմանափակում բուրժուազիայի համար: Դա կարող է այդպես լինել: Պատերազմից հետո և ռուսական հեղափոխության փորձից հետո դա, հավանորեն, կլինի այդպես, բայց դա *պարտադիր չէ* դիկտատուրայի իրագործման համար, դա դիկտատուրայի տրամաբանական հասկացողության *անհրաժեշտ* հատկանիշը չի կազմում, դա վորպես *անհրաժեշտ* պայման չի մտնում դիկտատուրայի պատմական և դասակարգային հասկացողության մեջ:

Դիկտատուրայի անհրաժեշտ հատկանիշ, պարտադիր պայման հանդիսանում ե շահագործողների, վորպես դասակարգի, բռնի ճնշումը և, հետևաբար, այդ դասակարգի նկատմամբ «զուտ դեմոկրատիայի», այսինքն հավասարության և ազատության խախտումը:

Այսպես և միայն այսպես կարող ե դրվել հարցը թեորիապես։ Յեվ նրանով, վոր Կաուցկին այդպես չդրեց հարցը, նա ապացուցեց, վոր բոլշևիկների դեմ հանդես ե գալիս վոչ թե վորպես տեսաբան, այլ վորպես ոպորտունիստների և բուրժուազիայի սիկոֆանտ։

Թե ինչ յերկրներում, այս կամ այն կապիտալիզմի ազգային վորպիսի առանձնահատկությունների պարագայում կկիրառվի (բացառապես կամ առավելապես) այս կամ այն սահմանափակումը, դեմոկրատիայի խախտումը շահագործողների համար, դա այս կամ այն կապիտալիզմի, այս կամ այն հեղափոխության ազգային առանձնահատկությունների հարց ե։ Թեորիական հարցն այլ կերպ ե դրվում, նա դրվում ե այսպես. արդյոք հնարավոր ե պրոլետարիատի դիկտատուրան առանց դեմոկրատիան խախտելու շահագործողների դասակարգի վերաբերմամբ։

Կաուցկին մի կողմ ե թողել հենց այդ, տեսականորեն միակ կարևոր և եյական, հարցը։ Կաուցկին ամեն տեսակ քաղվածքներ ե բերել Մարքսից ու Ենգելսից, բացի այն քաղվածքներից, վորոնք վերաբերում են տվյալ հարցին և վորոնք վերը բերված են իմ կողմից։

Կաուցկին խոսում եր ամեն բանի մասին, ինչ վոր կամենաք, ամեն բանի մասին, ինչ վոր ընդունելի

յե լիբերալների և բուրժուական դեմոկրատների համար, ինչ վոր դուրս չի գալիս գաղափարների նրանց շրջանից,—բացի գլխավորից, բացի նրանից, վոր պրոլետարիատը չի կարող հաղթել, չկոտրելով բուրժուազիայի դիմադրությունը, բռնի կերպով չճնշելով իր հակառակորդներին, և վոր այնտեղ, վորտեղ կա «բռնի ճնշում», վորտեղ չկա «ազատություն», իհարկե, չկա դեմոկրատիա։

Կաուցկին այդ չհասկացավ։

*
* *

Անցնենք ռուսական հեղափոխության փորձին և այն տարամիտմանը Սովետների ու Սահմանադիր ժողովի միջև, վորը տարավ դեպի Ուչրեդիլկայի (Սահմանադիր ժողովի) ցրումն ու բուրժուազիային ընտրական իրավունքից զրկելը։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՉՀԱՄԱՐՁԱԿՎԵՆ ԴԱՌՆԱԼ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խորհուրդները՝ պրոլետարական դիկտատուրայի ռուսական ձևն են։ Յեթե պրոլետարիատի դիկտատուրայի մասին աշխատություն գրող տեսաբան-մարքսիստը իրոք ուսումնասիրեր այդ յերևույթը (և վոչ թե կրկներ դիկտատուրայի դեմ մանր-բուրժուական տրտունջները, ինչպես Կաուցկին ե անում, վերաձայնելով մենշևիկյան մելոդիաները), ապա այդպիսի տեսաբանը կտար դիկտատուրայի ընդհանուր սահմանումը, իսկ հետո քննության կառներ նրա հատուկ, ազգային ձևը՝ խորհուրդները, կտար նրանց քննադատությունը, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի ձևերից մեկի։

Հատկանշական չէ, որ այն լիբերալ «մշակումից» հետո, որին Կաուցկին ենթարկեց Մարքսի ուսմունքը դիկտատուրայի մասին, նրանից չի կարելի սպասել որևէ լուրջ բան։ Բայց վերին աստիճանի բնորոշ է տեսնել, հապա ինչպես նա մոտեցավ այն հարցին, թե ինչ են խորհուրդները և ինչպես նա դուրս հանեց այդ հարցից։

Խորհուրդները, գրում է նա, մտաբերելով նրանց ծագումը 1905 թվականին, ստեղծեցին

«Պրոլետարական կազմակերպության» այնպիսի ձև, որը բոլորից ամենահամայնապարփակն էր (umfassendste), որովհետև նա ընդգրկում էր բոլոր վարձու բանվորներին» (էջ 31)։

1905 թվականին նրանք տեղական կորպորացիաներ էյին միայն, 1917 թվականին դարձան համառուսաստանյան միավորում։

«Դյժմ արդեն,—շարունակում է Կաուցկին,—խորհրդային կազմակերպությունն իր ետևն ունի մեծ և փառապանծ պատմություն։ Իսկ նրան սպասում է էլ ավելի հզորը և այն էլ ոչ միայն Ռուսաստանում։ Ամենուրեք պարզվում է, որ ֆինանսական կապիտալի տնօրինության տակ գտնվող տնտեսական ու քաղաքական վիթխարի ուժերի դեմ պրոլետարիատի տնտեսական ու քաղաքական պայքարի նախկին մեթոդներն անբավական են» (versagen,—այս գերմանական արտահայտությունը մի փոքր ավելի ուժեղ է, քան «անբավական են», և մի փոքր ավելի թույլ, քան «անզոր են»)։ Նրանցից հրաժարվել չի կարելի, նրանք անհրաժեշտ են նորմալ ժամանակների համար, բայց ժամանակ առ ժամանակ նրանց առաջ ծառանում են այնպիսի խնդիրներ, որոնց կատարումը նրանց ուժերից վեր է, այնպիսի խնդիրներ, երբ հաջողություն խոստանում է բանվոր դասակարգի ուժի բոլոր քաղաքական ու տնտեսական գործիքների միացումը միայն» (էջ 32)։

Սրան հետևում է դատողությունը մասսայական գործադուլի մասին և այն մասին, որ արհեստակցա-

կան միությունների չափ անհրաժեշտ՝ «արհեստակցական միությունների բյուրոկրատիան»

«անպետք է դեկավարելու համար այնպիսի հզոր մասսայական ճակատամարտերը, որոնք ավելի ու ավելի յեն դառնում ժամանակի նշանակ...»։

«... Այսպիսով,—եզրափակում է Կաուցկին,—խորհրդային կազմակերպությունը մեր ժամանակի կարևորագույն երևույթներից մեկն է։ Նա խոստանում է վճռողական նշանակություն ձեռք բերել կապիտալի և աշխատանքի այն մեծ վճռական ճակատամարտերում, դեպի որոնք մենք գնում ենք։

Բայց իրավունք ունե՞նք արդյոք խորհուրդներից պահանջելու էլ ավելին։ Բոլշևիկները, որոնք 1917 թվականի Նոյեմբերյան (Նոր տոմարով, այսինքն՝ մեր հաշվով, Հոկտեմբերյան) հեղափոխությունից հետո ձախ սոցիալիստ-հեղափոխականների հետ միասին մեծամասնություն ձեռք բերին բանվորական պատգամավորների ռուսական խորհուրդներում, Սահմանադիր ժողովի ցրումից հետո՝ մինչև այդ մեկ **դասակարգի մարտական կազմակերպությունը** եղած Խորհուրդը դարձրին **պետական կազմակերպություն**։ Նրանք վոչնչացրին դեմոկրատիան, որ ռուս ժողովուրդը նվաճել էր Մարտյան (Նոր տոմարով, մեր հաշվով՝ Փետրվարյան) հեղափոխության մեջ։ Դրա համեմատ բոլշևիկները դադարեցին իրենց **սոցիալ-դեմոկրատներ** անվանելուց։ Նրանք իրենց անվանում են **կոմունիստներ**» (էջ 33, ընդգծումը Կաուցկունն է)։

Ով գիտե ռուսական մենշևիկյան գրականությունը, նա իսկույն տեսնում է, թե ինչպես Կաուցկին ստրկորեն արտագրում է Մարտովին, Աքսելրոդին, Շտեյնին և Ընկ.։ Հենց «ստրկորեն», որովհետև Կաուցկին ծիծաղելի աստիճանի խեղաթյուրում է փաստերը ի հաճույս մենշևիկյան նախապաշարմունքների։ Կաուցկին չի հոգացել, օրինակ, տեղեկանալու Բեռլինի Շտեյնի կամ Ստոկհոլմի Աքսելրոդի նման իր ինֆորմատորներից, թե յերբ են բարձրացվել բոլշևիկներին կոմունիստներ վերանվանելու և խորհուրդների, որպես պե-

տական կազմակերպությունների, նշանակության հարցերը։ Յեթե Կաուցկին ստանար այդ հասարակ տեղեկանքը, նա չեր գրի ծիծաղ հարուցանող իր տողերը, վորովհետև այդ յերկու հարցերն էլ բոլշևիկների կողմից բարձրացվեցին 1917 թվականի ապրիլին, որինակ, 1917 թվականի ապրիլի 4-ի իմ «Թեզիսներում»*, այսինքն 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությունից շատ առաջ (էլ չեմ խոսում Ուչրեդիլկայի ցրման մասին, վոր տեղի ունեցավ 1918 թվականի հունվարի 5-ին)։

Բայց Կաուցկու՝ իմ կողմից լրիվին քաղված դատողությունը խորհուրդների ամբողջ հարցի մեխն ե կազմում։ Մեխն այն ե հենց—պե՞տք ե արդյոք խորհուրդները ձգտեն դառնալու պետական կազմակերպություններ (բոլշևիկները 1917 թվականի ապրիլին լոզունգ առաջադրեցին՝ «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին», և 1917 թվականի նույն ապրիլին բոլշևիկների կուսակցության կոնֆերենցիայում հայտարարեցին, վոր չեն բավարարվում բուրժուական պառլամենտար հանրապետությամբ, այլ պահանջում են Կոմունայի տիպի կամ խորհուրդների տիպի բանվորագյուղացիական հանրապետություն),— թե խորհուրդները չպետք ե ձգտեն դրան, չպետք ե իրենց ձեռքը վերցնեն իշխանությունը, չպետք ե դառնան պետական կազմակերպություններ, այլ պետք ե միայն մնան «դասակարգի» «մարտական կազմակերպություններ» (ինչպես արտահայտվում եր Մարտովը, իր անմեղ ցանկությամբ վայելչակերպ ձևով գեղազարդելով այն փաստը, վոր խորհուրդները մենշևիկյան ղեկավարու-

* Տես Յերկերի XX հատ. (ռուս.), եջ 87—90։ Խմբ։

թյամբ յեղել են բանվոր դասակարգը բուրժուազիային յենթարկելու գործիք)։

Կաուցկին սարկորեն կրկնել ե Մարտովի խոսքերը, բոլշևիկների և մենշևիկների թեորիական վեճից վերցնելով պատառիկներ և այդ պատառիկները, առանց քննադատության ու առանց իմաստի, փոխադրելով ընդհանուր թեորիական, համա-յեվրոպական հողի վրա։ Դուրս յեկավ այնպիսի շիլափլավ, վորը յուրաքանչյուր գիտակից ռուս բանվորի հոմերական ծիծաղը պիտի հարուցաներ, յեթե այդ բանվորը ծանոթանար Կաուցկու՝ մեջբերված դատողությանը։

Նույնպիսի ծիծաղով կդիմավորեն Կաուցկուն բոլոր յեվրոպական բանվորները (բացի մի բուռ թունդ սոցիալ-իմպերիալիստներից), յերբ մենք բացատրենք նրանց, թե այստեղ ինչն ե բանը։

Կաուցկին արջի ծառայություն մատուցեց Մարտովին, արտասովոր ակնառությամբ աբսուրդի հասցնելով Մարտովի սխալը։ Իսկապես, տեսեք, թե ինչ դուրս յեկավ Կաուցկու մոտ։

Խորհուրդներն ընդգրկում են բոլոր վարձու բանվորներին։ Պրոլետարիատի տնտեսական և քաղաքական պայքարի նախկին մեթոդները ֆինանսական կապիտալի դեմ անբավական են։ Խորհուրդներին մեծ դեր ե սպասում վոչ միայն Ռուսաստանում։ Նրանք վճռողական դեր կխաղան Յեվրոպայում կապիտալի և աշխատանքի վճռողական մեծ ճակատամարտերում։ Այսպես ե ասում Կաուցկին։

Հիանալի՛ յե։ «Կապիտալի և աշխատանքի վճռողական ճակատամարտերը» չե՞ն վճռում արդյոք այն հարցը, թե այդ դասակարգերից վո՞րը կտիրանա պետական իշխանությանը։

Նման բան չկա: Բավ լինի:

«Վճռողական» ճակատամարտերում բոլոր վարձու բանվորներին ընդգրկող միությունները չպե՛տք է դառնան պետական կազմակերպություն:

Իսկ ի՞նչ է պետությունը:

Պետությունը վոչ այլ ինչ է, բայց յեթե մեքենամի դասակարգ մյուսի ձեռքով ճնշելու համար:

Այսպես ուրեմն, ճնշված դասակարգը, բոլոր աշխատավորների և շահագործվողների ավանգարդը ժամանակակից հասարակության մեջ պետք է ձգտի «կապիտալի և աշխատանքի վճռողական ճակատամարտերին», բայց չպե՛տք է ձեռք տա այն մեքենային, վորի միջոցով կապիտալը ճնշում է աշխատանքը:——Չպե՛տք է կոտրի այդ մեքենան:——Չպե՛տք է իր համայնապարփակ կազմակերպությունն ոգտագործի ճնշագործողների ճնշման համար:

Հոյակապ է, հիանալի՛, պարոն Կաուցկի: «Մենք» ընդունում ենք դասակարգային պայքարը,—ինչպես այն ընդունում են բոլոր լիբերալները, այսինքն առանց բուրժուազիայի տապալման...

Ահա թե վորտեղ է ակներև դառնում Կաուցկու լիակատար հրաժարումը և՛ մարքսիզմից, և՛ սոցիալիզմից: Դա փաստորեն անցումն է բուրժուազիայի կողմը, վոր պատրաստ է թույլ տալու ինչ վոր կամենաք, բացի իր կողմից ճնշված դասակարգի կազմակերպությունների պետական կազմակերպությունների փոխարկելու: Այստեղ Կաուցկին արդեն վոչ մի կերպ չի կարող փրկել իր ամեն ինչ հաշտեցնող, բոլոր խորը հակասություններից ֆրազներով խուսափող դիրքը:

Կամ Կաուցկին հրաժարվում է պետական իշխանության ամեն մի անցումից բանվոր դասակարգի

ձեռքը, կամ նա թույլատրելի յե համարում, վոր բանվոր դասակարգն իր ձեռքը վերցնի հին, բուրժուական, պետական մեքենան, բայց վոչ մի կերպ թույլ չի տալիս, վոր նա կոտրի, ջարդի այն, փոխարինելով նորով, պրոլետարականով: Այսպես թե այնպես «մեկնաբանենք» ու «պարզաբանենք» Կաուցկու դատողությունը, յերկու դեպքումն էլ մարքսիզմից հրաժարվելն ու բուրժուազիայի կողմն անցնելն ակներև է:

Դեռ ես «Կոմունիստական մանիֆեստ»-ում Մարքսը, խոսելով այն մասին, թե ինչ պետություն է հարկավոր հաղթանակած բանվոր դասակարգին, գրում էր.

«Պետությունը, այսինքն վորպես տիրապետող դասակարգ կազմակերպված պրոլետարիատը»:

Այժմ հանդես է գալիս մի մարդ այն հավակնությամբ, թե ինքը շարունակում է մարքսիստ լինել ու հայտարարում է, վոր գլխովին կազմակերպված և կապիտալիզմի դեմ «վճռողական պայքար» մղող պրոլետարիատը չպետք է պետական դարձնի իր դասակարգային կազմակերպությունը: «Սնոտիապաշտիկ հավատ դեպի պետությունը», վորպիսի հավատի մասին Էնգելսը գրում էր * 1891 թվականին, թե նա «Գերմանիայում անցել է բուրժուազիայի և նույնիսկ շատ բանվորների ընդհանուր գիտակցության մեջ»,—ահա

* Վ. Ի. նկատի ունի «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» գրվածքի գերմանական 3-րդ հրատարակության՝ Էնգելսի գրած առաջաբանի հետևյալ տեղը. «„Քաղաքացիական պատերազմի" յերրորդ բաժնում մանրամասն նկարագրվում է հին պետական իշխանության այդ վոչնչացումն ու նրա փոխարինումը նորով, ճշմարտապես-դեմոկրատականով: Բայց մենք անհրաժեշտ համարեցինք այստեղ մի անգամ էլ ընդգծել այդ պրոցեսի միքանի գծերը, վորովհետև հատկապես Գերմանիայում հավատը

թե ինչ է այստեղ յերևան բերել Կաուցկին։—Պայքարեցե՛ք, բանվորնե՛ր,—«համաձայնում է» մեր ֆիլիստերը (դրան «համաձայն է» բուրժուան էլ, քանի վոր մեկ է, բանվորները պայքարում են, և բուրժուան ստիպված է մտածել այն մասին միայն, վոր կոտրի նրանց սրի սայրը),—պայքարեցե՛ք, բայց չհամարձակվեք հաղթել!: Մի՛ կործանեք բուրժուազիայի պետական մեքենան, բուրժուական «պետական կազմակերպության» տեղը մի՛ դրեք պրոլետարական «պետական կազմակերպությունը»։

Ով լրջորեն ընդունել է մարքսիստական այն հայացքը, վոր պետությունը վոչ այլ ինչ է, բայց յեթե մեքենա մեկ դասակարգը մյուսի ձեռքով ճնշելու համար, ով վորքան էլ ներհունորեն մտածել է այդ ճշմարտության մասին, նա յերբեք չէր կարողանա հանգել այնպիսի անմտության, թե ֆինանսական կապիտալին հաղթելու ընդունակ պրոլետարական կազմակերպությունները չպետք է դառնան պետական կազմակերպություններ։ Հենց այս կետում յերևան յեկավ մանր բուրժուան, վորի համար պետությունն «այնուամենայնիվ» արտադասակարգային է կամ վերդասակարգային։ Իսկապես, ինչու՞ պետք է պրոլետարիատին՝ «մեկ դասակարգի» թույլ տրվի վճռողական պատերազմ մղել ընդդեմ կապիտալի, վորը տիրապետում է վո՛չ միայն պրոլետարիատի, այլև ամբողջ ժողովրդի, ամբողջ մանր բուրժուազիայի, ամբողջ գյու-

---

դեպի պետությունը ֆիլիսոփայությունից անցել է բուրժուազիայի և նույնիսկ շատ բանվորների սովորական գաղափարների շարքը»։ (К. Маркс «Гражданская война во Франции„ 1870-71 г.г.). С пред. Ф. Энгельса. Перевод с немецкого под ред. Н. Ленина. Изд. Соцэкгиз, 1931, էջ 12)։ Խմբ.։

ղացիության վրա,—բայց պրոլետարիատին՝ «մեկ դասակարգի» թույլ չտրվի իր կազմակերպությունը դարձնել պետական։ Այն պատճառով, վոր մանր բուրժուան վախենում է դասակարգային պայքարից և չի հասցնում այն մինչև վերջը, մինչև ամենագլխավորը։

Կաուցկին բոլորովին խճճվել է ու մատնել իրեն լիովին։ Նկատեցե՛ք. նա ինքն ընդունեց, վոր Յեվրոպան ընդառաջ է՞գնում կապիտալի և աշխատանքի վճռողական ճակատամարտերին և վոր պրոլետարիատի տնտեսական ու քաղաքական պայքարի նախկին մեթոդները բավական չեն։ Իսկ այդ մեթոդներն էլ հենց կայանում էին բուրժուական դեմոկրատիայի օգտագործման մեջ։ Հետևաբա՛ր...

Կաուցկին վախեցել է մինչև վերջը մտածել, թե ինչ է հետևում դրանից։

... Հետևաբար, միայն ռեակցիոնները, բանվոր դասակարգի թշնամին, բուրժուազիայի սպասարկուն կարող է այժմ տափակամտորեն նկարել բուրժուական դեմոկրատիայի հրապույրները և դատարկաբանել զուտ դեմոկրատիայի մասին՝ յերեսը դարձրած դեպի գնացած անցյալը։ Բուրժուական դեմոկրատիան առաջադիմական էր միջնադարականության նկատմամբ, և հարկավոր էր օգտագործել այն։ Բայց այժմ նա բավական չէ բանվոր դասակարգի համար։ Այժմ պետք է նայել վոչ թե դեպի հետ, այլ դեպի առաջ, բուրժուական դեմոկրատիան պրոլետարականով փոխարինելու։ Յեվ յեթե պրոլետարական հեղափոխության նախապատրաստական աշխատանքը, պրոլետարական բանակի ուսուցումն ու կազմումը հնարավոր էին (և անհրաժեշտ) բուրժուական-դեմոկրատական պետության շրջանակներում, ապա, քանի վոր բանը հասել է «վճռ-

ռողական ճակատամարտերի», պրոլետարիատին այդ շրջանակներով սահմանափակել՝ նշանակում է լինել պրոլետարական գործի դավաճանը, նշանակում է լինել ռենեգատ։

Կաուցկին առանձնապես ծիծաղելի փորձանքի մեջ է ընկել, վորովհետև կրկնել է Մարտովի փաստարկը, չնկատելով, վոր Մարտովի մոտ այդ փաստարկը հենվում է մյուս փաստարկի վրա, վոր Կաուցկին չունի։ Մարտովն ասում է (իսկ Կաուցկին նրա հետևից կրկնում), թե Ռուսաստանն իբրև թե չի հասունացել սոցիալիզմի համար,— դրանից բնականաբար հետևում է. դեռևս վաղաժամ է Խորհուրդները պայքարի որգաններից պետական կազմակերպություններ դարձնելը (կարդա՝ պատեհաժամ է մենշևիկյան առաջնորդների օգնությամբ Խորհուրդները դարձնել բանվորներին իմպերիալիստական բուրժուազիային յենթարկելու որգաններ)։ Իսկ Կաուցկին չի կարող ուղղակի ասել, թե Յեվրոպան չի հասունացել սոցիալիզմի համար։ Կաուցկին գրում էր 1909 թվականին,* յերբ նա դեռևս ռենեգատ չէր, վոր այժմ չի կարելի վախենալ վաղաժամ հեղափոխությունից, վոր դավաճան կլիներ այն մարդը, ով պարտության յերկյուղից կհրաժարվեր հեղափոխությունից։ Ուղղակի հրաժարվել դրանից Կաուցկին սիրտ

* Վլ. Ի. նկատի ունի Կաուցկու «Իշխանության ուղին» բրոշյուրի հետևյալ տեղը. «Պրոլետարիատը ներկայումս այնքան է ամրացել, վոր նա մեծ հանգստությամբ կարող է սպասել վրա յեկող պատերազմին։ Վաղաժամ հեղափոխության մասին այլևս չի կարող խոսք լինել այն ժամանակ, յերբ պրոլետարիատը պետական տվյալ հիմքից այնքան ուժեր քաղեց, վորքան հնարավոր եր նրանից վերցնել, յերբ վերափոխումը դարձավ նրա հետագա վերելքի պայման»։ («Путь к власти». Гиз. 1923, էջ 92)։ Խմբ։

չի անում։ Յեվ ստացվում է այնպիսի անմտություն, վորը մինչև վերջ մերկացնում է մանր բուրժուայի ամբողջ հիմարությունն ու վախկոտությունը. մի կողմից, Յեվրոպան հասուն է սոցիալիզմի համար և գնում է դեպի աշխատանքի և կապիտալի վճռողական ճակատամարտեր,— իսկ մյուս կողմից, պրոլետարիատի մարտական կազմակերպությունը, այսինքն ճնշվածների ավանգարդի և կազմակերպչի, առաջնորդի (ձևավորվող, պայքարի մեջ աճող, ամրապնդվող) կազմակերպությունը, չի կարելի դարձնել պետական կազմակերպություն!։

* * *

Այն գաղափարը. թե Խորհուրդները, վորպես մարտական կազմակերպություն, անհրաժեշտ են, բայց չպետք է դառնան պետական կազմակերպություններ, պրակտիկ-քաղաքական կողմից ել ավելի անհունապես անհեթեթ է, քան թե տեսականորեն։ Նույնիսկ խաղաղ ժամանակ, յերբ հեղափոխական սիտուացիա չկա, բանվորների մասսայական պայքարը կապիտալիստների դեմ, օրինակ, մասսայական գործադուլները, յերկու կողմից ել առաջացնում են սոսկալի դառնություն, պայքարի չափազանց կրքոտություն, բուրժուազիայի շարունակական խոսքն այն մասին, վոր նա մնում է և կամենում է մնալ «տան մեջ տեր» և այլն։ Իսկ հեղափոխության ժամանակ, յերբ քաղաքական կյանքը յեռում է, այնպիսի մի կազմակերպություն, ինչպես Խորհուրդներն են, վորն ընդգրկում է արդյունաբերության բոլոր ճյուղերի բոլոր բանվորներին, հետո բոլոր զինվորներին ու գյուղական ամբողջ աշխատավոր և չքավորագույն բնակչությունը,— այդպիսի կազ-

մակերպությունն ինքնըստինքյան, պայքարի ընթացքի մղումով, գրոհի և հակահարվածի հասարակ «տրամաբանությամբ» անխուսափելիորեն գալիս ե հարցի վճռական դրման: Միջակա գիծ բռնելու, պրոլետարիատի ու բուրժուազիայի «հաշտեցնելու» փորձը բթամտություն ե և կրում ե ողորմելի կրախ. այդպես եր Ռուսաստանում Մարտովի և մյուս մենշևիկների քարոզի վերաբերմամբ, այդպես ել անխուսափելիորեն կլինի Գերմանիայում և մյուս յերկրներում, յեթե Խորհուրդները վորքան են լայն զարգանան, ժամանակ ունենան միավորվելու և ամրանալու: Ասել Խորհուրդներին՝ պայքարեցեք, բայց ինքներդ ձեր ձեռքը մի վերցնեք ամբողջ պետական իշխանությունը, մի դառնաք պետական կազմակերպություններ — նշանակում ե քարոզել դասակարգերի համագործություն և պրոլետարիատի ու բուրժուազիայի «սոցիալական հաշտություն»: Մտածելն անգամ ծիծաղելի յե այն մասին, վոր այդպիսի դիրքը կատաղի պայքարում կկարողանա տանել վորևե յելքի, բացի խայտառակ կրախից: Յերկու աթոռի միջև նստելը Կաուցկու հավիտենական ճակատագիրն ե: Նա այնպես ե ձևացնում, թե վոչ մի բանում համաձայն չե ոպորտունիստներին թեորիայի մեջ, իսկ իրոք նա նրանց համաձայն ե պրակտիկայում բոլոր եյական հարցերի նկատմամբ (այսինքն՝ այն բոլոր հարցերի, վորոնք հեղափոխությանն են վերաբերում):

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանադիր ժողովի և բոլշևիկների կողմից այն ցրելու հարցը Կաուցկու ամբողջ բրոշյուրի եյական

մասն ե կազմում: Նա շարունակ վերադառնում ե այդ հարցին: II Ինտերնացիոնալի գաղափարային առաջնորդի ամբողջ յերկը լի յե այն մատնացույցով, թե ինչպես բոլշևիկները «վոչնչացրին դեմոկրատիան» (տես վերը՝ Կաուցկուց արված մի քաղվածքում): Իրոք, հետաքրքրական և կարևոր մի հարց, վորովհետև այստեղ բուրժուական և պրոլետարական դեմոկրատիայի հարաբերակցությունը գործնականորեն ծառացավ հեղափոխության առաջ: Տեսնենք, ուրեմն, թե ինչպես ե այս հարցը քննարկում մեր «տեսաբան-մարքսիստը»:

Նա քարոզում ե իմ գրած և 1917 թ. 26/XII «Правда»-յում հրապարակված թեզիսները Սահմանադիր ժողովի մասին*: Թվում ե, թե չի ել կարելի սպասել այնպիսի լուրջ մոտեցման լավագույն ապացույց, վոր Կաուցկին ե յերևան բերել դեպի գործը՝ ձեռքում ունենալով փաստաթղթեր: Բայց նայեցեք, թե ինչպես ե քաղում Կաուցկին: Նա չի ասում, վոր այդ թեզիսները 19 եյին, նա չի ասում, վոր նրանց մեջ դրված եր ինչպես Սահմանադիր ժողովով հանդերձ սովորական բուրժուական հանրապետության և Խորհուրդների հանրապետության հարաբերակցության, այնպես ել մեր հեղափոխության մեջ Սահմանադիր ժողովի և պրոլետարիատի դիկտատուրայի տարամիտման պատմության հարցը: Կաուցկին այս ամենի կողքով ե անցնում ու պարզապես հայտարարում ե ընթերցողին, վոր «նրանցից (այդ թեզիսներից) առանձնապես կարևորները յերկուսն են». մեկը — վոր եսերները պառակտվեցին Սահմանադիր ժողովի ընտրություններից հետո, բայց մինչև նրա գումարումը (Կաուցկին լռում

* Տես Յերկերի XXII հատոր, եջ 131—134: Խմբ.:

է այն մասին, վոր դա հինգերորդ թեզիսն է), մյուսը— վոր Խորհուրդների հանրապետությունն առհասարակ ավելի բարձր դեմոկրատական ձև է, քան թե Սահմանադիր ժողովը (Կաուցկին լռում է այն մասին, վոր դա յերրորդ թեզիսն է)։

Յեվ ահա այս յերրորդ թեզիսից է միայն Կաուցկին քաղում լիովին նրա մի մասնիկը, այն է՝ հետևյալ դրույթը.

«Խորհուրդների հանրապետությունը հանդիսանում է վոչ միայն դեմոկրատական հիմնարկների ավելի բարձր տիպի ձև (համեմատությամբ սովորական, բուրժուական հանրապետության, վորի պսակը Սահմանադիր ժողովն է), այլև միակ ձևը, վորն ընդունակ է ապահովելու ամենից անցավագին* անցումը սոցիալիզմին» (Կաուցկին բաց է թողնում «սովորական» բառը և թեզիսի ներածական բառերը. «բուրժուական կարգից սոցիալիստականին անցնելու համար, պրոլետարիատի դիկտատուրայի համար»)։

Մեջբերելով այս բառերը, Կաուցկին հոյակապ հեգնանքով բացականչում է.

«Միայն ափսոս, վոր այս յեզրակացությանն յեկան լոկ այն ժամանակ, յերբ Սահմանադիր ժողովում փոքրամասնություն

* Իմիջի այլոց։ Այս արտահայտությունը՝ «ամենից անցավագին» անցումը Կաուցկին քաղում է բազմիցս, յերևի, հեգնելու փորձ անելով։ Բայց վորովհետև այդ փորձն անպետք միջոցներով է, ապա Կաուցկին մի քանի եջից հետո կատարում է քաշկլտուկ և կեղծ կերպով քաղում՝ «անցավագին» անցումը!։ Իհարկե, այդպիսի միջոցներով դժվար՝ չէ հակառակորդին անմտություն վերագրելը։ Քաշկլտուկը նույնպես օգնում է ըստ եյության մի կողմ թողնել փաստարկը. ամենից ավելի անցավագին անցումը սոցիալիզմին հնարավոր է միայն այն դեպքում, յերբ չքավորությունն ամբողջովին կազմակերպված է (Խորհուրդներ) և պետական իշխանության կենտրոնը (պրոլետարիատը) սատարում է այդպիսի կազմակերպությանը։

դուրս յեկան։ Առաջ վոչ վոք ավելի ուժգին կերպով չեր պահանջում այդ ժողովը, քան Լենինը»։

Տառացի այսպես է ասված Կաուցկու գրքի 31-րդ եջում!։

Զե՞ վոր սա ուղղակի գոհար է!։ Միայն բուրժուազիայի սիկոֆանտը կարող է բանն այնպես ստահոդ կերպով ներկայացնել, վոր ընթերցողն ստանար այն տպավորությունը, թե իբր բոլշևիկների բոլոր խոսակցությունները պետության ավելի բարձր տիպի մասին մի հորինվածք են, վորը լույս աշխարհ է յեկել այն բանից հետո միայն, յերբ բոլշևիկները մեծամասնություն դուրս յեկան Սահմանադիր ժողովում!!։ Այսքան նողկալի սուտ ասել կարող եր միայն մի սրիկա, վորը վաճառվել է բուրժուազիային կամ, վոր միանգամայն նույն բանն է, վստահացել է Պ. Աքսելրոդին և թաքցնում է իր ինֆորմատորներին։

Վորովհետև ամենքին հայտնի յե, վոր յես իմ Ռուսաստան գալու առաջին որն ևեթ, 1917 թ. ապրիլի 17 (4)-ին, հրապարակով կարդացի թեզիսներ, վորոնց մեջ հայտարարեցի բուրժուական պառլամենտար հանրապետության համեմատությամբ Կոմունայի տիպի պետության գերազանցության մասին։ Յես այդ հետո բազմիցս հայտարարել եմ մամուլում, որինակ, քաղաքական կուսակցությունների մասին գրած բրոշյուրում *, վորը թարգմանվեց անգլերեն և 1918 թ. հունվարին լույս տեսավ Ամերիկայում Նյու-Յորքի լրագիր «Evening Post»-ում**։ Բացի դրանից բոլշևիկների կուսակցության կոնֆերենցիան 1917 թ. ապրի-

* Տես Յերկերի XX հատոր, եջ 136—144։ Խմբ.։

** «Յերեկոյան փոստ»։ Խմբ.։

լի վերջում բանաձև ընդունեց այն մասին, վոր պրոլետարական-գյուղացիական հանրապետությունը բարձր է բուրժուական պառլամենտար հանրապետությունից, վոր մեր կուսակցությունը վերջինով չի բավարարվի, վոր կուսակցության ծրագիրը պետք է համապատասխան կերպով փոփոխվի։

Դրանից հետո ինչպես անվանենք Կաուցկու վոտըն-ձգությունը, յերբ նա հավատացնում է գերմանական ընթերցողներին, թե իբր յես ուժգին կերպով պահանջել եմ Սահմանադիր ժողովի գումարում և միայն այն ժամանակ եմ սկսել «նվազեցնել» Սահմանադիր ժողովի պատիվն ու արժանապատվությունը, յերբ նրա մեջ բոլշևիկները մնացին վորպես փոքրամասնություն։ Ինչպե՞ս կարելի յե ներել այդպիսի վոտնձգությունը*։ Նրանով, վոր Կաուցկին չի՞ իմացել փաստերը։ Բայց այդ դեպքում ինչո՞ւ նա ձեռնարկեց դրանց մասին գրելու։ Կամ ինչո՞ւ չհայտարարեց ազնվաբար, թե յես, Կաուցկիս, գրում եմ մենշևիկներ Շտեյնի ու Պ. Աքսելրոդի և Ընկ. հաղորդած տեղեկությունների հիման վրա։ Կաուցկին օբյեկտիվության հավակնությամբ ցանկանում է քողարկել սպասարկուի իր այն դերը, վոր կատարում է նա իրենց պարտության հետևանքով վիրավորված մենշևիկների վերաբերմամբ։

Բայց սրանք միայն ծաղիկներն են։ Պտուղները հետո կլինեն։

Յենթադրենք, թե Կաուցկին չի ցանկացել կամ չի կարողացել (??) իր ինֆորմատորներից ստանալ բոլշևիկյան այն բանաձևերի և հայտարարությունների

* Իսկեղ ասած՝ մենշևիկյան նմանորինակ ստություններ շատ կան Կաուցկու բրոշյուրում։ Դա գազազած մենշևիկի պամֆլետ է։

թարգմանությունը, վորոնք վերաբերում են հետաքրքրող հարցին, թե արդյոք նրանք բավարարվա՞ծ են բուրժուական պառլամենտական դեմոկրատական հանրապետությամբ։ Յենթադրենք նույնիսկ այդ, թեև դա անհավանական է։ Բայց չէ՞ վոր 1918 թ. հունվարի 8-ի (1917 թ. դեկտեմբերի 26-ի) իմ թեզիսները Կաուցկին ուղղակի հիշատակում է իր գրքի 30-րդ էջում։

Կաուցկին լիովին գիտե՞ այդ թեզիսները, թե նրանցից նա այն գիտե միայն, ինչ վոր նրա համար թարգմանել են Շտեյնները, Աքսելրոդները և Ընկ.։ Գիտակցում էին արդյոք բոլշևիկները մինչ Սահմանադիր ժողովը և ասում էին արդյոք ժողովրդին, վոր Խորհուրդների հանրապետությունը բարձր է բուրժուական հանրապետությունից՝ այս արմատական հարցի առթիվ Կաուցկին քաղում է յերրորդ թեզիսը։ Բայց Կաուցկին լռությամբ է տալիս 2-րդ թեզիսը։

Իսկ յերկրորդ թեզիսն ասում է.

«Սահմանադիր ժողովի գումարման պահանջ առաջադրելով, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան 1917 թվականի հեղափոխության սկզբից ևեթ բազմիցս ընդգծել է, վոր Խորհուրդների հանրապետությունը դեմոկրատիզմի ավելի բարձր ձև է հանդիսանում, քան թե սովորական բուրժուական հանրապետությունը Սահմանադիր ժողովով հանդերձ» (ընդգծումն իմն է)։

Վորպեսզի բոլշևիկներին ներկայացրած լինի իբրև անսկզբունք մարդիկ, «հեղափոխական օպորտունիստներ» (այս արտահայտությունը, չեմ հիշում ինչ կապակցությամբ, մի տեղ իր գրքում գործ է ածում Կաուցկին), պարոն Կաուցկին թաքցրել է գերմանական ընթերցողներից, վոր թեզիսներում ուղղակի հիշատակում կա «բազմիցս» արված հայտարարությունների։

Սրանք են այն մանր, չնչին ու յեղկելի գրելաձևերը, վորոնք գործածում է պարոն Կաուցկին։ Այսպիսով նա տեսական հարցից խուսափեց։

Ճիշտ է դա, թե վոչ, վոր բուրժուական-դեմոկրատական պառլամենտար հանրապետությունն ավելի ցածր է կանգնած, քան Կոմունայի տիպի կամ Խորհուրդների տիպի հանրապետությունը։ Այս է եյական հարցը, իսկ Կաուցկին մի կողմ է թողել այն։ Կաուցկին «մոռացել է» այն ամենը, ինչ վոր Մարքսն է տվել Փարիզի կոմունայի վերլուծության մեջ։ Նա «մոռացել է» նաև Ենգելսի 1875 թ. մարտի 28-ի այն նամակը Բեբելին, վորի մեջ առանձնապես ակնառու և ըմբռնելի արտահայտված է Մարքսի նույն միտքը․

«Կոմունան արդեն պետություն չեր բառիս բուն իմաստով»։

Ահա II Ինտերնացիոնալի ամենակարկառուն տեսաբանը, վոր «Պրոլետարիատի դիկտատուրա»-յին նվիրված հատուկ բրոշյուրում, հատկապես դառնալով Ռուսաստանի մասին, վորտեղ ուղղակի և բազմիցս դրվել է դեմոկրատական-բուրժուական հանրապետությունից ավելի բարձր պետության ձևի հարցը, լռությամբ է տալիս այն։ Ինչո՞վ է իրոք սա տարբերվում բուրժուազիայի կողմն անցնելուց։

(Փակագծերում նկատենք, վոր այստեղ էլ Կաուցկին ռուսական մենշևիկների պոչից է քարշ գալիս։ Մարքսից և Ենգելսից արվելիք «բոլոր մեջբերումները» գիտցող մարդիկ նրանց մոտ կան վորքան կամենաք, բայց վոչ մի մենշևիկ 1917 թ. ապրիլից մինչև 1917 թ. հոկտեմբերը և 1917 թ. հոկտեմբերից մինչև 1918 թ. հոկտեմբերը վոչ մի անգամ փորձ չարեց քննելու Կոմունայի տիպի պետության հարցը։ Պլեխանովն էլ մի

կողմ թողեց այդ հարցը։ Հավաստապես, ստիպված եղել լռել)։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր Սահմանադիր ժողովի ցրման մասին խոսել այնպիսի մարդկանց հետ, վորոնք անվանում են իրենց սոցիալիստներ և մարքսիստներ, բայց իրոք գլխավոր հարցում, Կոմունայի տիպի պետության հարցում անցնում են բուրժուազիայի կողմը, կնշանակի մարգարիտ նետել խոզերի առաջ։ Բավական կլինի ներկա բրոշյուրին իբրև հավելված կցել լիովին իմ թեզիսները Սահմանադիր ժողովի մասին։ Ընթերցողը կտեսնի նրանցից, վոր հարցը դրվել է 1917 թ. դեկտեմբերի 26-ին և՛ տեսականորեն, և՛ պատմականորեն, և՛ գործնականապես-քաղաքականորեն։

Յեթե վորպես տեսաբան՝ Կաուցկին բոլորովին հրաժարվել է մարքսիզմից, ապա նա կարող եր՝ վորպես պատմաբան՝ քննարկել Խորհուրդների այն պայքարի հարցը, վոր Սահմանադիր ժողովի դեմ է յեղել ուղղված։ Մենք գիտենք Կաուցկու շատ աշխատություններից, վոր նա կարողանում եր լինել մարքսիստական պատմաբան, վոր նրա այդպիսի աշխատությունները կմնան վորպես պրոլետարիատի մնայուն սեփականություն, չնայած նրա հետագա ռենեգատության։ Բայց այդ հարցի նկատմամբ Կաուցկին վորպես պատմաբան էլ է յերես դարձնում ճշմարտությունից, անգիտանում հանրահայտ փաստերը, վարվում սիկոֆանտի նման։ Նա կամենում է բոլշևիկներին ներկայացնել անսկզբունք մարդիկ և նա պատմում է, թե ինչպես էին բոլշևիկները փորձում մեղմացնել բախումը Սահմանադիր ժողովի հետ, նախքան այն ցրելը։ Այստեղ վճռականապես չկա վորևե վատ բան, վորից մենք

հարկադրված լինեյինք հրաժարվել։ Թեզիսները յես լիովին եմ տպում, և նրանց մեջ պարզից պարզ ասված է․ պարոնայք տատանվող մանր բուրժուաներ, վոր ամուր նստել եք Սահմանադիր ժողովում, կամ հաշտվեցեք պրոլետարական դիկտատուրայի հետ, կամ մենք ձեզ «հեղափոխական ճանապարհով» կհաղթենք (Թեզիսներ 18 և 19)։

Այսպես է միշտ վարվել և միշտ այսպես է վարվելու իրոք հեղափոխական պրոլետարիատը տատանվող մանր բուրժուազիայի վերաբերմամբ։

Սահմանադիր ժողովի հարցում Կաուցկին կանգնած է ձևական տեսակետի վրա։ Իմ Թեզիսներում պարզ և բազմիցս ասված է, վոր հեղափոխության շահերը բարձըր են կանգնած Սահմանադիր ժողովի ձևական իրավունքներից (տես 16 և 17-րդ Թեզիսները)։ Ձևական-դեմոկրատական տեսակետը հենց բուրժուական դեմոկրատի տեսակետն է, վորը (այդ դեմոկրատը) չի ընդունում, վոր պրոլետարիատի և պրոլետարական դասակարգային պայքարի շահն ավելի բարձր է կանգնած։ Կաուցկին, վորպես պատմաբան, չեր կարող չընդունել, վոր բուրժուական պառլամենտները հանդիսանում են այս կամ այն դասակարգի օրգաններ։ Բայց այժմ Կաուցկուն հարկավոր յեղավ (հեղափոխությունից հրաժարվելու կեղտոտ գործի համար) մոռանալ մարքսիզմը, և Կաուցկին չի դնում այն հարցը, թե Ռուսաստանում վոր դասակարգի օրգանն եր Սահմանադիր ժողովը։ Կաուցկին քննության չի առնում կոնկրետ իրադրությունը, նա չի կամենում նայել փաստերին, նա վոչ մի խոսք չի ասում գերմանական ընթերցողներին այն մասին, վոր Թեզիսներում տրված են վոչ միայն բուրժուական-դեմոկրատիայի սահմա-

նափակության հարցի տեսական լուսաբանությունը (Թեզիսներ № № 1—3), վոչ միայն այն կոնկրետ պայմանները, վորոնք վորոշեցին 1917 թ. հոկտեմբերի կեսի կուսակցական ցուցակների անհամապատասխանությունը 1917 թ. դեկտեմբերի իրականությանը (Թեզիսներ № № 4—6), այլև 1917 թ. հոկտեմբեր—դեկտեմբերի դասակարգային պայքարի և քաղաքացիական պատերազմի պատմությունը (Թեզիսներ № № 7—15)։ Այդ կոնկրետ պատմությունից մենք յեզրակացություն արինք (Թեզիս № 14), վոր «ամբողջ իշխանությունը Սահմանադիր ժողովին» լոզունգը իրոք դարձել է կադետների և կալեդինականների ու նրանց աջակիցների լոզունգը։

Պատմաբան Կաուցկին չի նկատում այդ։ Պատմաբան Կաուցկին յերբեք չի լսել, վոր ընդհանուր ընտրական իրավունքը տալիս է յերբեմն մանր-բուրժուական, յերբեմն ռեակցիոն և հակահեղափոխական պառլամենտներ։ Մարքսիստ-պատմաբան Կաուցկին չի լսել, վոր մեկ բան է ընտրությունների ձևը, այլ բան է տվյալ հաստատության դասակարգային բովանդակությունը։ Սահմանադիր ժողովի դասակարգային բովանդակության այդ հարցն ուղղակի դրված է և լուծված իմ Թեզիսների մեջ։ Գուցե իմ լուծումը ճիշտ չէ։ Մեզ համար վոչինչ այնքան ցանկալի չեր լինի, ինչպես մեր վերլուծության մարքսիստական քննադատությունը ուրիշի կողմից։ Փոխանակ բոլորովին հիմար ֆրազներ գրելու (դրանք շատ են Կաուցկու մոտ) այն մասին, թե իբր ինչ-վոր մեկը խանգարում է բոլշևիզմի քննադատությանը, Կաուցկին պետք է ձեռնարկեր այդպիսի քննադատության։ Բայց բանն էլ հենց այն է, վոր նրա մոտ քննադատություն չկա։

Նա նույնիսկ չի ել դնում, մի կողմից, Խորհուրդների և, մյուս կողմից, Սահմանադիր ժողովի դասակարգային վերլուծության հարցը։ Այդ պատճառով ել նշանակություն չկա վիճելու, բանակռվելու Կաուցկու հետ, այլ մնում է միայն ցույց տալ ընթերցողին, թե ինչու չի կարելի Կաուցկուն այլ կերպ անվանել, քան ռենեգատ։

Խորհուրդների տարամիտումը (расхождение) Սահմանադիր ժողովի հետ ունի իր պատմությունը, վորին անտեսել չեր կարող նույնիսկ դասակարգային տեսակետի վրա չկանգնած պատմաբանը։ Կաուցկին չի ցանկացել շոշափել այդ փաստական պատմությունն ել։ Կաուցկին թագցրել է գերմանական ընթերցողներից այն հանրահայտ փաստը (վոր այժմ միայն չարանենգ մենշևիկներն են թագցնում), վոր Խորհուրդները մենշևիկների տիրապետության օրով ել, այսինքն 1917 թվականի փետրվարի վերջից մինչև հոկտեմբերը, տարամիտում եյին «համապետական» (այսինքն բուրժուական) հաստատությունների հետ։ Կաուցկին իսկապես կանգնած է պրոլետարիատի և բուրժուազիայի հաշտեցման, համաձայնեցման, աշխատակցության տեսակետի վրա,—վորքան ել հրաժարվի Կաուցկին դրանից, բայց նրա այդպիսի տեսակետը մի փաստ է, վոր հաստատվում է Կաուցկու ամբողջ բրոշյուրով։ Չպետք է ցրել Սահմանադիր ժողովը, դա հենց նշանակում է. չպետք եր մինչև վերջը հասցնել բուրժուազիայի դեմ ուղղված պայքարը, չպետք եր նրան տապալել, պրոլետարիատը պետք է հաշտվեր բուրժուազիայի հետ։

Ապա ինչու՞ յե Կաուցկին լռության տվել այն, վոր մենշևիկները 1917 թ. փետրվարից մինչև հոկտեմբեր զբաղվում եյին այդ քիչ պատվաբեր գործով և չհասան

վոչ մի նպատակի։ Յեթե հնարավոր եր հաշտեցնել բուրժուազիան պրոլետարիատի հետ, ապա ինչու՞ մենշևիկների օրով հաշտեցումը չհաջողվեց, բուրժուազիան իրեն հեռու յեր պահում Խորհուրդներից, Խորհուրդները (մենշևիկների կողմից) անվանվում եյին «հեղափոխական դեմոկրատիա», իսկ բուրժուազիան՝ «ցենզային տարրեր»։

Կաուցկին թագցրել է գերմանական ընթերցողներից, վոր հենց մենշևիկներն եյին իրենց տիրապետության «դարաշրջանում» (1917 թ. II—X) հեղափոխական դեմոկրատիա անվանում Խորհուրդները, նրանով իսկ ճանաչելով նրանց գերազանցությունը բոլոր այլ հաստատությունների վերաբերմամբ։ Միայն այս փաստը թագցնելու շնորհիվ պատմաբան Կաուցկու մոտ այնպես դուրս յեկավ, վոր Խորհուրդների տարամիտումը բուրժուազիայի հետ չունի իր պատմությունը, վոր նա յերևան յեկավ մեկեն, հանկարծակի, առանց պատճառի, բոլշևիկների վատ վարքի պատճառով։ Իսկ իրոք մենշևիկյան համաձայնողականության, պրոլետարիատին բուրժուազիայի հետ հաշտեցնելու փորձերի հենց ավելի քան կիսամյա փորձը (հեղափոխության համար դա ահագին ժամկետ է) համոզեց ժողովրդին այդ փորձերի ապարդյունության և պրոլետարիատին վանեց մենշևիկներից։

Խորհուրդները պրոլետարիատի՝ մեծ ապագա ունեցող, հիանալի, մարտական կազմակերպությունն են, խոստովանում է Կաուցկին։ Քանի վոր այդպես է, Կաուցկու ամբողջ գիրքը փլվում է վորպես թղթատնակ կամ վորպես մանր բուրժուայի յերազանք այն մասին, վոր բանը գլուխ գա առանց պրոլետարիատի ու բուրժուազիայի սուր պայքարի։ Վորովհետև ամբողջ հեղա-

փոխությունը ամբողջովին մի կատաղի պայքար է, պրոլետարիատը բոլոր ճնշվածների առաջավոր դասակարգն է բոլոր ու ամեն տեսակ ճնշվածների ազատագրական բոլոր ձգտումների կիզակետն ու կենտրոնը: Խորհուրդները—ճնշված մասսաների պայքարի օրգանը—բնականաբար այդ մասսաների տրամադրություններն ու հայացքների փոփոխությունը արտացոլում և արտահայտում էյին անչափ ավելի արագ, լիակատար ու ավելի ճիշտ, քան թե վորևէ այլ կարգի հաստատություններ (դա յէ, ի միջիայլոց, այն բանի աղբյուրներից մեկը, թե ինչու յէ խորհրդային դեմոկրատիան դեմոկրատիայի բարձրագույն տիպը):

Խորհուրդները 1917 թ. մարտի 13-ից (փետրվարի 28-ից) մինչև նոյեմբերի 7-ը (հոկտեմբերի 25-ը) կարողացան գումարել Ռուսաստանի բնակչության վիթխարի մեծամասնության՝ բոլոր բանվորների և զինվորների, գյուղացիության յոթ կամ ութ տասնորդականի յերկու համառուսաստանյան համագումար, չհաշվելով բազմաթիվ տեղական, գավառական, քաղաքային, նահանգական ու մարզային համագումարները: Այդ ժամանակի ընթացքում բուրժուազիան չկարողացավ գումարել վոչ մի հաստատություն, վորը մեծամասնություն ներկայացներ (բացի ակներևորեն կեղծ, ծաղրական, պրոլետարիատին վրդովմունք պատճառած «դեմոկրատական խորհրդակցությունից»): Սահմանադիր ժողովն արտացոլեց մասսաների նույն տրամադրությունը, նույն քաղաքական խմբավորումը, ինչ վոր Խորհուրդների առաջին (հունիսյան) Համառուսաստանյան համագումարը: Մինչև Սահմանադիր ժողովի գումարումը (1918 թ. հունվար) կայացան Խորհուրդների յերկրորդ համագումարը (1917 թ. հոկտեմբեր) և յերրորդը (1918 թ. հունվար), ընդ սմին

նրանք յերկուսն էլ պարզից պարզ ցույց տվին, վոր մասսաները ձախացել են, հեղափոխականացել, յերես են դարձրել մենշևիկներից ու էսէռներից, անցել են բոլշևիկների կողմը, այսինքն յերես են դարձրել մանր-բուրժուական ղեկավարությունից, բուրժուազիայի հետ համաձայնության գալու ցնորքներից և անցել են պրոլետարական հեղափոխական այն պայքարի կողմը, վոր մղվում է բուրժուազիայի տապալման համար:

Հետևաբար, Խորհուրդների սոսկ արտաքին պատմությունն արդեն ցույց է տալիս Սահմանադիր ժողովի ցրման անխուսափելիությունն ու այդ ժողովի ռեակցիոնությունը: Բայց Կաուցկին պինդ կանգնած է իր «լոզունգի» պաշտպանության դիրքում՝ թող կործանվի հեղափոխությունը, թող բուրժուազիան հաղթանակ տանի պրոլետարիատի վերաբերմամբ, միայն թե ծաղկի «զուտ դեմոկրատիան»: Fiat justiti pereate mundus!*:

Ահա Խորհուրդների Համառուսաստանյան համագումարների համառոտ հանրագումարը ռուսական հեղափոխության պատմության մեջ.

Խորհուրդների Համառուսաստանյան համագումարներ	Պատգամավորների թիվը	Նրանցից բոլշևիկներ	Բոլշևիկների %-ը
I (16 (3) հունիսի 1917 թ.)	790	103	13
II (7 նոյ. (25 հոկտ.) 1917 թ.)	675	343	51
III (23 (10) հունվ. 1918 թ.)	710	434	61
IV (14 մարտ 1918 թ.)	1232	795	64
V (4 հուլիսի 1918 թ.)	1164	773	66

*—«Թող իրագործվի արդարադատությունը, թեկուզ կործանվի աշխարհը»: Խմբ.:

Բավական է հայացք նետել այս թվանշանների վրա, վորպեսզի հասկանալի լինի, թե ինչու Սահմանադիր ժողովի պաշտպանությունը կամ այն (Կաուցկու խոսքի նման) խոսքերը, թե բոլշևիկներն իրենց հետևում չունեն բնակչության մեծամասնություն, մեզանում դիմավորվում են միայն ծիծաղով։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես յես նշեցի արդեն, բուրժուազիային ընտրական իրավունքներից զրկելը չի կազմում պրոլետարական դիկտատուրայի պարտադիր ու անհրաժեշտ հատկանիշը։ Հոկտեմբերից շատ առաջ այդպիսի դիկտատուրայի լոզունգ առաջադրած բոլշևիկները Ռուսաստանում էլ նախապես չեյին խոսում շահագործողներին ընտրական իրավունքներից զրկելու մասին։ Դիկտատուրայի այդ բաղկացուցիչ մասը լույս աշխարհ յեկավ վոչ թե վորևէ կուսակցության «պլանի համեմատ», այլ ինքնին ծագեց պայքարի ընթացքում։ Պատմաբան Կաուցկին, իհարկե, այդ չի նկատել։ Նա չի հասկացել, վոր բուրժուազիան, դեռևս մենշևիկների (բուրժուազիայի հետ համաձայնողների)՝ Խորհուրդներում տիրապետելու օրով, ինքն եր իրեն բաժանում Խորհուրդներից, բոյկոտ անում նրանց, իրեն հակադրում նրանց, խարդավանում նրանց դեմ։ Խորհուրդները ծագեցին առանց վորևէ սահմանադրության և մի տարուց ավելի (1917 թ. գարնանից մինչև 1918-ի ամառը) ապրում եյին առանց վորևէ սահմանադրության։ Բուրժուազիայի գազազելը ճնշվածների ինքնուրույն ու ամենազոր (վորովհետև բոլորին ընդգրկող) կազմակերպության դեմ, բուրժուազիայի ամենաանպատկառ, շահա-

խնդիր, կեղտոտ պայքարը Խորհուրդների դեմ, վերջապես, բուրժուազիայի (կադետներից մինչև աջ եսերները, Միլյուկովից մինչև Կերենսկին) ակներև մասնակցությունը Կոռնիլովի շարժմանը,—ահա թե ինչը նախապատրաստեց բուրժուազիայի ձևական վտարումը Խորհուրդներից։

Կաուցկին լսել է կոռնիլովականության մասին, բայց նա վեհաբար թքում է պատմական փաստերի և պայքարի այն ընթացքի, ձևերի վրա, վորոնք վորոշում են դիկտատուրայի ձևերը. իսկապես, ինչ առընչություն ունեն փաստերը, քանի վոր խոսքը վերաբերում է «զուտ դեմոկրատիային»։ Այդ պատճառով բուրժուազիայից ընտրական իրավունքները խլելու դեմ ուղղված՝ Կաուցկու «քննադատությունն» աչքի յե ընկնում այնպիսի... քաղցրիկ պարզամտությամբ, վորը սրտառուչ կլիներ, յեթե յերեխայի կողմից յերևան բերվեր, և վորը նողկանք է առաջացնում, յերբ յերևան է բերվում պաշտոնապես դեռևս խելացնոր չճանաչված անձի կողմից։

«... Յեթե կապիտալիստներն ընդհանուր ընտրական իրավունքի պարագայում աննշան փոքրամասնություն լինեյին, նրանք ավելի շուտ կհաշտվեյին իրենց ճակատագրի հետ...» (եջ 33)։

Սքանչելի յե, չէ՞։ Խելոք Կաուցկին շատ անգամ է տեսել պատմության մեջ և առհասարակ հիանալի գիտե կենդանի կյանքի դիտողությունից այնպիսի կալվածատերեր ու կապիտալիստներ, վորոնք հաշվի յեն առնում ճնշվածների մեծամասնության կամքը։ Խելոք Կաուցկին պինդ կանգնած է «ոպոզիցիայի» տեսակետի վրա, այսինքն ներպառլամենտական պայքարի տեսա-

կետի վրա։ Նա տառացի այդպես էլ գրում է. «Ոպորտունիզմ» (էջ 34 և շատ ուրիշն.)։

Ո՜, գիտնական պատմաբան ու քաղաքագետ։ Չեր խանգարի ձեզ իմանալ, որ «ոպորտունիզմ» խաղաղ և միայն պառլամենտական պայքարի հասկացողություն է, այսինքն մի հասկացողություն, որ համապատասխանում է ոչ-հեղափոխական իրադրության, հասկացողություն, որ համապատասխանում է հեղափոխության բացակայությանը։ Հեղափոխության մեջ խոսքը անխնա թշնամու մասին է քաղաքացիական պատերազմում — այդ փաստը չեն փոխում այդպիսի պատերազմից վախեցող — ինչպես նրանից Կաուցկին է վախենում — մանր բուրժուայի ռեակցիոն յերեմիականները։ Այդպես քննարկել հարցերը քաղաքացիական անխնա պատերազմի, յերբ բուրժուազիան բոլոր վոճիրները կատարում է — վերսալցիների և Բիսմարկի հետ նրանց կնքած համաձայնության օրինակը վորոշ բան ասում է ամեն մի մարդու, ով պատմությանը վերաբերվում է վոչ գոգոլյան Պետրուշկայի նման, — յերբ բուրժուազիան ոգնության է կոչում օտարերկրյա պետությունները և նրանց հետ միասին խարդավանում հեղափոխության դեմ, դա կոմիզմ է։ Հեղափոխական պրոլետարիատը պետք է, «խառնաշփոթության խորհրդական» Կաուցկու նման, գիշերային թասակ դնի և վորպես լեգալ «ոպորտունիզմ» դիտի այն բուրժուազիային, վորը կազմակերպում է դուտովյան, կրասնովյան և չեխական հակահեղափոխական ապստամբությունները, վորը միլիոններ է վճարում սաբոտաժարարներին։ Ո՜, խորամտություն։

Կաուցկուն գործի բացառապես ձևական-իրավաբանական կողմն է հետաքրքրում, այնպես որ, յերբ կար-

դում եք նրա դատողությունները Խորհրդային սահմանադրության մասին, ակամա մտաբերում եք Բեբելի խոսքերը. «Իրավաբանները թափնթափ ռեակցիոն մարդիկ են»։

«Իրականության մեջ, — գրում է Կաուցկին, — մենակ կապիտալիստներին չի կարելի իրավազուրկ դարձնել։ Ո՞վ է կապիտալիստ իրավաբանական իմաստով։ Ունևորը։ Նույնիսկ տնտեսական առաջադիմության ուղիով շատ հեռու գնացած մի այնպիսի յերկրում, ինչպես Գերմանիան է, վորի պրոլետարիատն այնքան բազմաթիվ է, Խորհրդային հանրապետության հիմնադրումը քաղաքականորեն իրավազուրկ կդարձներ մեծ մասսաներ։ Գերմանական կայսրության մեջ 1907 թվականին արհեստագործական աշխատանքով զբաղվածները ու նրանց ընտանիքների թիվը յերեք մեծ խմբերում — գյուղատնտեսություն, արդյունաբերություն և առևտուր — կազմում եր ծառայողների և վարձու բանվորների խմբում մոտ 35 միլիոն, — ինքնուրույնների խմբում 17 միլիոն։ Հետևաբար կուսակցությունը միանգամայն կարող է մեծամասնություն լինել վարձու բանվորների մեջ, բայց փոքրամասնություն՝ բնակչության մեջ» (էջ 33)։

Ահա Կաուցկու դատողությունների նմուշներից մեկը։ Մի՞թե սա բուրժուայի հակահեղափոխական թոնթորանք չէ։ Ինչո՞ւ դուք բոլոր «ինքնուրույններին» իրավազուրկների շարքը դասեցիք, պարոն Կաուցկի, յերբ դուք հիանալի գիտեք, վոր ռուս գյուղացիների ամենաահագին մեծամասնությունը վարձու բանվոր չի պահում, ուրեմն իրավունքներից չի զրկվում։ Մի՞թե սա կեղծիք չէ։

Ինչո՞ւ դուք, գիտնական տնտեսաբան, չբերիք ձեզ լավ հայտնի և գերմանական նույն վիճակագրության մեջ յեղած 1907 թ. տվյալները վարձու աշխատանքի վերաբերմամբ գյուղատնտեսության մեջ՝ ըստ տնտեսությունների խմբերի։ Ինչո՞ւ դուք ցույց չտվիք գերմանական

բանվորներին՝ ձեր բրոշյուրի ընթերցողներին, այդ տվյալները, վորոնցից յերևար, թե, ըստ գերմանական վիճակագրության, «գյուղական տնտեսատերերի» ամբողջ թվի մեջ վորքան են շահագործողները, վորքան քիչ են շահագործողները:

Վորովհետև ձեր ռենեգատությունը ձեզ դարձրել է բուրժուազիայի հասարակ սիկոֆանտը:

Կապիտալիզմը, գիտե՞ք ինչ, իրավաբանական անորոշ հասկացողություն է, և Կաուցկին մի քանի էջում ամբաստանում է Խորհրդային սահմանադրության «կամայականությունը»: Այդ «լուրջ գիտնականը» անգլիական բուրժուազիային թույլ է տալիս դարերի ընթացքում մշակել ու վերամշակել նոր (միջնադարականության համար նոր) բուրժուական սահմանադրությունը, իսկ մեզ, Ռուսաստանի բանվորներիս ու գյուղացիներիս, լաքեյական գիտության սույն ներկայացուցիչը չի տալիս վոչ մի ժամկետ: Նա մեզանից պահանջում է մինչև վերջին տառիկը մշակված սահմանադրություն մի քանի ամսում...

...«Կամայականությո՜ւն»: Մտածեցեք միայն, թե այսպիսի կշտամբանքով ինչ հսկայական չափի ամենակեղտոտ լաքեյություն բուրժուազիայի առաջ, ամենաբութ պեդանտություն է յերևան բերվում: Յերբ կապիտալիստական յերկրների թափնթափ բուրժուական ու մեծ մասամբ ռեակցիոն իրավաբանները դարերի կամ տասնամյակների ընթացքում մշակեցին մանրամասնագույն կանոններ, գրեցին տասնյակ և հարյուրավոր հատորներ օրենքներ ու օրենքների պարզաբանումներ, վորոնք ճնշում են բանվորներին, կաշկանդում չքավորի ձեռքերն ու վոտքերը, հազարավոր բծախնդրություններ ու արգելքներ դնում ժողովրդի դա-

վակ յուրաքանչյուր հասարակ աշխատավոր մարդու վերաբերմամբ,—ո՜, այն ժամանակ բուրժուական լիբերալներն ու պարոն Կաուցկին այդտեղ չեն տեսնում «կամայականություն»: Այստեղ «կարգ ու կանոն է» և «օրինականությո՜ւն»: Այստեղ ամեն ինչ մտածված է ու գրի առնված, թե ինչպես կարելի յե «մինչև վերջը սղմել» չքավորին: Այստեղ կան հազարավոր բուրժուական փաստաբաններ ու աստիճանավորներ (Կաուցկին առհասարակ նրանց մասին լռում է, հավանորեն, հենց այն պատճառով, վոր Մարքսն ահագին նշանակություն է տալիս աստիճանավորական մեքենան ջարդելուն...),—փաստաբաններ ու աստիճանավորներ, վորոնք կարողանում են այնպես մեկնաբանել օրենքները, վոր բանվորներն ու միջին գյուղացին յերբեք չեն կարող պատռել-անցնել օրենքների յերկաթալարե փակոցները (проволочные заграждения): Դա բուրժուազիայի «կամայականություն» չէ, դա ժողովրդական արյունը խմած շահախնդիր ու կեղտոտ շահագործողների դիկտատուրան չէ, նման բան չկա: Դա «զուտ դեմոկրատիա» յե, վոր օրավուր ավելի ու ավելի յե զտվում:

Իսկ յերբ իմպերիալիստական պատերազմով իրենց արտասահմանյան յեղբայրներից կտրված աշխատավոր և շահագործվող դասակարգերը, պատմության մեջ առաջին անգամ, կազմեցին իրենց Խորհուրդները, քաղաքական շինարարության կոչեցին այն մասսաներին, վորոնց բուրժուազիան ճնշում էր, ընկճում, բթացնում, ու իրենք սկսեցին կառուցել նոր, պրոլետարական պետություն, սկսեցին կատաղի պայքարի յեռուզեռի մեջ, քաղաքացիական պատերազմի կրակի մեջ նախագծել հիմնական դրույթները մի պետության մասին, վորտեղ

չեն լինելու շահագործողներ, — այն ժամանակ բուրժուազիայի բոլոր սրիկաները, արյունարբուների ամբողջ վոհմակը, նրանց ձայնակցող Կաուցկիով հանդերձ ճչալ սկսեցին «կամայականության» մասին։ Իսկապես, ինչ այդ անուսների, բանվորների և գյուղացիների, այդ «խուժանի» բանն է իրենց օրենքները մեկնաբանելը։ Վորտեղից պետք է նրանք վերցնեն արդարության զգացումը, նրանք, այդ հասարակ աշխատավորները, վորոնք չեն օգտվում կրթված փաստաբանների, բուրժուական գրողների, Կաուցկիների և իմաստուն հին աստիճանավորների խորհուրդներից։

Պարոն Կաուցկին իմ 1918 թ. ապրիլի 29-ի* ճառից քաղում է հետևյալ խոսքերը.

«... Մասսաներն իրենք են վորոշում ընտրությունների կարգն ու ժամկետները...»։

Ցեվ «զուտ դեմոկրատ» Կաուցկին յեզրակացնում է.

«... Հետևաբար, բանն, ըստ յերևույթին, այնպես է, վոր ընտրողների յուրաքանչյուր ժողով ըստ իր հայեցողության վորոշում է ընտրությունների կարգը։ Կամայականությունն ու իր իսկ պրոլետարիատի ներսում անհարմար օպոզիցիոն տարրերից ազատվելու հնարավորությունն այսպիսով կհասցվեյին բարձրագույն աստիճանի» (եջ 37)։

Ինչո՞վ է սա տարբերվում կապիտալիստների կողմից վարձված թանաքային կուլիից, վորը ճչում է այն առթիվ, թե գործադուլի ժամանակ մասսան ճնշում է «աշխատել ցանկացող» ջանասեր բանվորներին։ Ինչու բուրժուական «զուտ» դեմոկրատիայի մեջ տեղի ունեցող ընտրությունների կարգի աստիճանավորական-բուրժուական սահմանումը կամայականություն չէ։ Ինչու պետք է արդարության զգացումը իրենց դարավոր շահագործողների դեմ պայքարի յելած, այդ կատաղի պայքարով լուսավորվող ու կոփվող մասսաների մեջ ավելի ցածր լինի, քան թե բուրժուական նախապաշարմունքների մեջ դաստիարակված մի բուռ աստիճանավորների, մտավորականների, փաստաբանների մեջ։

Կաուցկին ճշմարիտ սոցիալիստ է, չհամարձակվեք տարակուսի յենթարկել ընտանիքի այդ պատվելագույն հոր, այդ ազնվագույն քաղաքացու անկեղծությունը։ Նա ջերմ և համոզված կողմնակիցն է բանվորների, պրոլետարական հեղափոխության հաղթանակի։ Նա միայն կցանկանար, վոր գիշերային թասակ կրող քաղցրիկ ինտելիգենտիկ քաղքենիներն ու ֆիլիստերները նախ, մինչ մասսաների շարժումը, մինչ նրանց կատաղի պայքարն ընդդեմ շահագործողների և անպատճառ առանց քաղաքացիական պատերազմի՝ կազմեյին հեղափոխության զարգացման չափավոր ու խնամոտ կանոնադրություն...

Մեր գիտնականագույն Յուդուշկա Գոլովլյովը բարոյական խորը վրդովմունքով պատմում է գերմանական բանվորներին, վոր 1918 թ. ապրիլի 14-ին Խորհուրդների համառուսաստանյան ԿԳԿ վորոշեց Խորհուրդներից վտարել աջ եսերների կուսակցության և մենշևիկների ներկայացուցիչներին։

«Այդ միջոցառումը—գրում է Յուդուշկա Կաուցկին, ամբողջովին ազնիվ ցասումով,—ուղղվում է վոչ թե ընդդեմ վորոշ անձերի, վորոնք կատարել են վորոշ պատժելի գործողություններ... Խորհրդային հանրապետության սահմանադրությունը վոչ մի խոսք չի ասում Խորհուրդների պատգամավոր-անդամների անձեռնմխելիության մասին։ Այստեղ Խորհուրդներից վտարվում են վոչ թե վորոշ անձեր, այլ վորոշ կուսակցություններ» (եջ 37)։

*Տես Յերկեր, XXII հատ., «Զեկուցում Խորհրդային իշխանության հերթական խնդիրների մասին», եջ 615—655։ Խմբ.։

Այո, դա իսկապես վոր սոսկալի յե, այդ անհանդուրժելի շեղումը զուտ դեմոկրատիայից, վորի կանոններով և հեղափոխություն անելու մեր հեղափոխական Յուդուշկա Կաուցկին։ Մենք, ռուսական բոլշևիկներս, նախ պետք ե անձեռնմխելիություն խոստանայինք Սավինկովներին և Ընկ., Լիբերդաններին Պոտրեսովներով («ակտիվիստներով»)* հանդերձ և Ընկ., հետո գրեյինք քրեական օրենսգիրք, վորը «պատժելի» յե հայտարարում չեխո-սլովակական հակահեղափոխական պատերազմին մասնակցելը կամ դաշնակցությունը գերմանական իմպերիալիստների հետ Ուկրաինայում կամ Վրաստանում ընդդեմ սեփական յերկրի բանվորների և հետո միայն, այդ քրեական օրենսգրքի հիման վրա, մենք իրավունք կունենայինք, «զուտ դեմոկրատիայի համաձայն, Խորհուրդներից վտարելու «վորոշ անձանց»։ Ընդ սմին ինքնըստինքյան հասկանալի յե, վոր Սավինկովների, Պոտրեսովների ու Լիբերդանների միջոցով* կամ նրանց ագիտացիայի օգնությամբ անգլո-ֆրանսակապիտալիստներից փող ստացող չեխո-սլովակները, ինչպես և Կրասնովները, վորոնք Ուկրաինայի և Թիֆլիսի մենշևիկների օգնությամբ արկեր ունեն գերմանացիներից՝ հանդարտ կնստեյին, մինչև վոր մենք պատրաստենք կանոնավոր քրեական օրենսգիրք և, վորպես ամենազուտ դեմոկրատներ, կսահմանափակվեյին «ապոլոգիայի» դերով . . .

Կաուցկու մեջ վոչ պակաս ուժեղ բարոյական վրդովմունք ե հարուցանում այն, վոր Խորհրդային սահմանադրությունն ընտրական իրավունքները խլում ե նրանցից, ովքեր «վարձու բանվորներ են պահում շահույթի նպատակով»։

---

* Մենշևիկ-ակտիվիստները—մենշևիկների կուսակցության ներսում գոյություն ունեցող ամենից աջ հոսանքն եր, վորն ընդունում եր և փաստորեն կիրառում զինված պայքարի մեթոդներն ընդդեմ Խորհրդային իշխանության։ Ակտիվիստների քաղաքական պլատֆորմը շարադրել ե մենշևիկ Ռոզանովը Կիևի մենշևիկների դատավարության ժամանակ 1919 թ. իր ցուցմունքների մեջ։ Այդ պլատֆորմի եյությունն ե. Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխությունն անհնարին ե։ Բանվոր դասակարգը պետք ե ձգտի վոչ թե սոցիալիստական հեղափոխության, այլ իր դրության բարելավման՝ սոցիալական ռեֆորմների միջոցով։ Իսկ աջ մենշևիկների խնդիրն այն ե, վոր «համապատասխան ագիտացիա մղեն մասսաների մեջ ու ստեղծեն մի ուժ, վորի վրա հենվել կարողանա նոր պլատֆորմը»։

Ուֆայում մենշևիկները մասնակցեցին եսեռա-կադետական այն դիրեկտորիայի ստեղծմանը, վորը ճանապարհ մաքրեց Կոլչակի իշխանության համար։ Վոլգայի և Ուրալի մենշևիկներն ակտիվ աջակիցներն եյին չեխո-սլովակյան ապստամբության։ Վրաստանում, Հայաստանում, Ադրբեջանում ու Անդրկասպյան յերկրում մենշևիկներն իրենց աշխատանքի մեջ հենվում եյին ինտերվենտների ռազմական ու ֆինանսական օգնության վրա։ «Ակտիվիստները» նշանակալի ծառայություններ եյին մատուցանում սպիտակ գվարդիային, մասնակցելով սպիտակ տեռորին ել։ Խորհրդային հանրապետություններում ակտիվիստները պայքար եյին մղում ֆաբրիկա-գործարանային լիազորների ժողովների միջոցով, ազդեցություն ունենալով տպագրիչների և քիմիական արդյունաբերության բանվորների արհեստակցական միությունների վրա 1918 թվականին «ակտիվիստները» մենշևիկների ամբողջ կուսակցության սատարմամբ փորձ արին կազմակերպելու համառուսաստանյան բանվորական համագումար, վորի համար անցկացրին մի շարք բանվորական կոնֆերենցիաներ, վորտեղ պարենավորման հարցերի լուծման պատրվակով քննվում եյին իշխանության վերաբերյալ հարցեր։ Խմբ.։

* Այս նախադասությունը ձեռագրի մեջ չկա։ Խմբ.։

«Տնային գործավորը կամ մեկ վարպետացու ունեցող փոքրիկ տնտեսատերը—գրում ե Կաուցկին—կարող ե ապրել և զգալ միանգամայն պրոլետարորեն, իսկ նա չունի ընտրական իրավունք» (եջ 36)։

Վո՛րպիսի նահանջ «զուտ դեմոկրատիայից»։ Վո՛րպիսի անարդարություն։ Ճիշտ ե, մինչև այժմ բոլոր մարքսիստները կարծում եյին և հազարավոր փաստեր հաստատում, վոր մանր տնտեսատերերը վարձու բանվորների ամենաանխիղճ և սղմող շահագործողներն են, բայց Յուդուշկա Կաուցկին վերցնում ե, հարկավ, վոչ թե մանր տնտեսատերերի դասակարգը (այդ ո՞վ ե հնարել դասակարգային պայքարի վնասակար* թեորիան), այլ առանձին անհատների, այնպիսի շահագործողների, վորոնք «ապրում են ու զգում միանգամայն պրոլետարորեն»։ Հռչակավոր «խնայող Ագնեսը», վորին համարում եյին վաղուց մեռած, հարություն ե առել Կաուցկու գրչի տակ։ Այդ խնայող Ագնեսին հնարեց ու գործադրության գցեց գերմանական գրականության մեջ մի քանի տասնամյակ սրանից առաջ «զուտ» դեմոկրատ, բուրժուա Յեվգենի Ռիխտերը։ Նա գուշակում եր անասելի արհավիրքներ պրոլետարիատի դիկտատուրայից, շահագործողների կապիտալի բռնագրավումից, նա հարց եր տալիս՝ անմեղ տեսք ընդունելով. ո՞վ ե կապիտալիստ իրավաբանական իմաստով։ Նա վերցնում եր չքավոր խնայող կարողուհու օրինակը («խնայող Ագնես»), վորից «պրոլետարիատի» չար «դիկտատորները» խլում են նրա վերջին գրոշները։ Կար ժամանակ, յերբ գերմանական ամբողջ սոցիալ-դեմոկրատիան ծաղրում եր զուտ դեմոկրատ Յեվգենի Ռիխտերի

* Ձեռագրի մեջ՝ «հիմար»։ Խմբ.։

այդ «խնայող Ագնեսին»։ Բայց դա վաղուց եր, այնքան վաղուց, յերբ դեռևս ապրում եր Բեբելը, վորը բացահայտորեն և ուղղակի ասում եր ճշմարտությունը, թե մեր կուսակցության մեջ շատ կան նացիոնալ-լիբերալներ,—դա այնքան վաղուց եր, յերբ Կաուցկին դեռևս ռենեգատ չեր։

Այժմ «խնայող Ագնեսը» հարություն ե առել ի-դեմս «մեկ վարպետացու ունեցող միանգամայն պրոլետարորեն ապրող ու զգացող մանր տնտեսատիրոջ»։ Չար բոլշևիկները նեղում են նրան, խլում նրանից ընտրական իրավունքը։ Ճիշտ ե, «ամեն մի ընտրական ժողով», ինչպես ասում ե նույն Կաուցկին, Խորհրդային հանրապետության մեջ կարող ե իր մոտ թողնել, ասենք, տվյալ գործարանի հետ կապված չքավոր վարպետին, յեթե նա, իբրև բացառություն, շահագործող չե, յեթե նա իրոք «ապրում ե զգում ե միանգամայն պրոլետարորեն»։ Բայց մի՞թե կարելի յե վստահել հասարակ բանվորների չկարգավորված և (ո՜ սարսափ) առանց կանոնադրության գործող գործարանային ժողովի կյանքի գիտելությանը, արդարության զգացմանը։ Մի՞թե պարզ չե, վոր ավելի լավ ե ընտրական իրավունք տալ բոլոր շահագործողներին, բոլոր վարձու բանվորներ ունեցողներին, քան թե ռիսկ անել հնարավորություն ստեղծելով, վոր բանվորները նեղեն «խնայող Ագնեսին» ու «պրոլետարորեն ապրող ու զգացող վարպետին»։

*
* *

Թող ռենեգատության արհամարհելի սրիկաները, արժանանալով բուրժուազիայի և սոցիալ-շովինիստների* վողջույններին, հայհոյեն մեր Խորհրդային սահ-

* Տես հենց նոր կարդացի «Ֆրանկֆուրտյան Լրագրի» ա-

մանադրությունը նրա համար, որ նա խլում է շահագործողներից ընտրական իրավունքը: Դա լավ է, որովհետև կարագացնի և կխորացնի Եվրոպայի հեղափոխական բանվորների պառակտումը Շայդեմանների և Կաուցկիների, Ռենոդելների և Լոնգեների, Հենդերսոնների և Ռամսեյ Մակդոնալդների հետ, սոցիալիզմի հին առաջնորդների և հին դավաճանների հետ:

Ճնշված դասակարգերի մասսաները, հեղափոխական պրոլետարներից ելած գիտակից, ազնիվ առաջնորդները մեր կողմը կլինեն: Բավական է այդպիսի պրոլետարներին ու այդ մասսաներին ծանոթացնենք մեր Խորհրդային սահմանադրությանը՝ և նրանք իսկույն կասեն. ահա թե որտեղ են իսկական մ ե ր մ ա ր դ ի կ, ահա թե որտեղ են իսկական բանվորական կուսակցությունը, իսկական բանվորական կառավարությունը: Որովհետև նա բանվորներին չի խաբում ռեֆորմներին նվիրված շաղակրատությամբ, ինչպես խաբում էին մեզ բոլոր անվանված առաջնորդները, այլ լուրջ պայքարում է շահագործողների դեմ, լուրջ կերպով է հեղափոխություն կատարում, գործով պայքարում է բանվորների լիակատար ազատագրման համար:

Երբ շահագործողները Խորհուրդների որոշմամբ զրկված են ընտրական իրավունքից Խորհուրդների մեկ տարվա «պրակտիկայից» հետո, ցուցանում է այդ Խորհուրդներն իրոք ճնշված մասսաների կազմակերպությունններն են և ոչ թե բուրժուազիային վաճառված սոցիալ-իմպերիալիստների և սոցիալ-պացիֆիստների: Երբ այդ Խորհուրդները շահագործողներից խլել են ընտրական իրավունքը, ցուցանում է, որ Խորհուրդները մանր-բուրժուական համաձայնողականության (կապիտալիստների հետ համաձայնություն կնքելու) օրգաններ չեն, պառլամենտական շաղակրատության օրգաններ չեն (Կաուցկիների, Լոնգեների և Մակդոնալդների շաղակրատության օրգաններ), այլ իրոք հեղափոխական պրոլետարիատի օրգաններ, որը կյանքի և մահու պայքար է մղում շահագործողների դեմ:

«Կաուցկու գրքույկն այստեղ գրեթե անհայտ է», գրում է ինձ Բեռլինից այս քանի օրս (այսօր հոկտեմբերի 30-ն է) լավ իրազեկ մի ընկեր: Ես խորհուրդ կտայի մեր դեսպաններին Գերմանիայում ու Շվեյցարիայում հազարներ չխնայել գնելու համար այս գիրքն ու գիտակից բանվորներին ձրի բաժանելու այն, որպեսզի ոտնակոխ անենք ցեխի մեջ այն «եվրոպական»—կարդա՝ իմպերիալիստական ու ռեֆորմիստական—սոցիալ-դեմոկրատիան, որը վաղուց է դարձել «նեխված դիակ»:

*
* *

Իր գրքի վերջում, 61-րդ և 63-րդ էջում, պարոն Կաուցկին դառնագին լալիս է այն առթիվ, որ «նոր թեորիան» (ինչպես նա անվանում է բոլշևիզմը, վախենալով դիպչել Փարիզի կոմունայի այն վերլուծությանը, որ Մարքսն ու Էնգելսն են տվել)

«կողմնակիցներ է գտնում նույնիսկ հին դեմոկրատիաներում, ինչպես, օրինակ, Շվեյցարիան է»: «Անհասկանալի է» Կաուցկու համար, «եթե այդ թեորիան ընդունում են գերմանական սոցիալ-դեմոկրատները»:

առաջնորդողը (1918 թ. նոյեմբերի 22, № 293), որը հիացմունքով վերաշարադրում է Կաուցկու բրոշյուրը: Բորսայինների լրագիրը գոհ է: Դե, իհարկե: Իսկ Բեռլինից մի ընկեր գրում է ինձ, որ Շայդեմանների լրագիր «Ֆորվերտսը» հատուկ հոդվածում հայտարարել է, որ ստորագրում է Կաուցկու գրքի յուրաքանչյուր տողի տակ: Շնորհավորում ենք, շնորհավորում ենք:

Մինչ դա միանգամայն հասկանալի յե, վորովհետև հեղափոխական մասսաների համար, պատերազմի լուրջ դասերից հետո, զզվելի յեն դառնում և՛ Շայդեմանները, և՛ Կաուցկիները։

«Մենք» միշտ դեմոկրատիայի կողմն ենք յեղել — գրում է Կաուցկին — և հանկարծ մենք նրանից հրաժարվենք։

«Մենք» սոցիալ-դեմոկրատիայի ոպորտունիստներս, միշտ դեմ ենք յեղել պրոլետարիատի դիկտատուրային, և Կոլբերն ու Ընկ. վաղուց եյին ասում այդ բացահայտ կերպով։ Կաուցկին գիտե այդ և իզուր է կարծում, թե ընթերցողներից կթաքցնի Բեռնշտայնների և Կոլբերի «ծոցը» վերադառնալու ակնհայտ փաստը։

«Մենք», հեղափոխական մարքսիստներս, յերբեք «զուտ» (բուրժուական) դեմոկրատիան աստված չենք շինել մեզ համար։ Պլեխանովը, ինչպես հայտնի յե, 1903 թ հեղափոխական մարքսիստ եր (մինչև նրա ցավալի շրջադարձը, վորը նրան տարավ մինչև ռուսական Շայդեմանի դերը)։ Յեվ Պլեխանովն այն ժամանակ կուսակցության ծրագիրն ընդունող համագումարում ասում եր, վոր պրոլետարիատը հեղափոխության մեջ, հարկավորության պարագայում, կխլի կապիտալիստների ընտրական իրավունքը, կցրի ինչ պառլամենտ ել վոր լինի, յեթե նա հակահեղափոխական դուրս գա։ Վոր հենց այդպիսի հայացքն է համապատասխանում մարքսիզմին, դա ամեն վոք կտեսնի Մարքսի և Ենգելսի թեկուզ իմ կողմից վերը բերված հայտարարություններից, դա, ակներևորեն, բխում է մարքսիզմի բոլոր հիմքերից։

«Մենք», հեղափոխական մարքսիստներս, ժողովրդին չենք ասում այնպիսի ճառեր, վորոնցով սիրում եյին հանդես գալ բոլոր յերկրների կաուցկիականները, լա-

քեյություն անելով բուրժուազիայի առաջ, կեղծելով բուրժուական պառլամենտարիզմի վոգով, լռության տալով արդի դեմոկրատիայի բուրժուական բնույթը և միայն պահանջելով, վոր ընդլայնվի այն, մինչև վերջը հասցվի այն։

«Մենք» ասում եյինք բուրժուազիային. «Դուք, շահագործողներդ ու կեղծավորներդ, խոսում եք դեմոկրատիայի մասին, միևնույն ժամանակ յուրաքանչյուր քայլափոխում հազարավոր արգելքներ դնելով ճնշված մասսաների՝ քաղաքականության մեջ մասնակից լինելու։ Մենք ձեր խոսքով բռնում ենք ձեզ և պահանջում այդ մասսաների շահերի տեսակետից ընդլայնում ձեր բուրժուական դեմոկրատիայի, վորպեսզի հեղափոխության նախապատրաստենք մասսաներին՝ տապալելու համար ձեզ, շահագործողներիդ։ Յեվ յեթե դուք, շահագործողներդ, փորձ անեք դիմադրություն ցույց տալու մեր պրոլետարական հեղափոխությանը, մենք ձեզ անխնա կերպով կճնշենք, մենք ձեզ իրավազուրկ կդարձնենք, — այդ քիչ է. մենք ձեզ հաց չենք տա, վորովհետև մեր պրոլետարական հանրապետության մեջ շահագործողներն իրավազուրկ կլինեն, կզրկվեն կրակից ու ջրից, վորովհետև մենք լուրջ կերպով ենք սոցիալիստներ և վոչ թե շայդեմանավարի ու կաուցկիավարի։

Ահա թե ինչպես ենք խոսել և ինչպես ենք խոսելու «մենք», հեղափոխական մարքսիստներս, և ահա թե ինչու ճնշված մասսաները կլինեն մեր կողմն ու մեզ հետ, իսկ Շայդեմաններն ու Կաուցկիները կլինեն ռենեգատության կեղտահորի մեջ։

Կաուցկին ամենահամոզված կերպով համարում ե և անվանում իրեն ինտերնացիոնալիստ։ Շայդեմաններին նա հայտարարում ե «կառավարական սոցիալիստներ»։ Մենշևիկներին պաշտպանելով (Կաուցկին ուղղակի չի ասում, թե համերաշխ ե նրանց հետ, բայց ամբողջովին նրանց հայացքներն ե անցկացնում), Կաուցկին զարմանալի ակնառու կերպով յերևան բերեց, թե ինչ տեսակի յե նրա «ինտերնացիոնալիզմը»։ Իսկ վորովհետև Կաուցկին միայնակ չե, այլ ներկայացուցիչն ե մի հոսանքի, վորն անխուսափելիորեն աճել ե II Ինտերնացիոնալի ստեղծած պայմաններում (Լոնգեն Ֆրանսիայում, Տուրատին Իտալիայում, Նոբսը և Գրիմմը, Գրաբերն ու Նենը Շվեյցարիայում, Ռամսեյ Մակդոնալդը Անգլիայում և այլն), ապա ուսանելի յե կանգ առնել Կաուցկու «ինտերնացիոնալիզմի» վրա։

Ընդգծելով, վոր մենշևիկները նույնպես յեղել են Ցիմմերվալդում (դիպլոմ ե, անտարակույս, բայց... մի փոքր փտած դիպլոմ), Կաուցկին հետևյալ կերպ ե շարադրում այն մենշևիկների հայացքները, վորոնց նա համաձայն ե.

«... Մենշևիկները կամենում եյին ընդհանրական հաշտություն։ Նրանք կամենում եյին, վոր բոլոր պատերազմողներն ընդունեն՝ առանց աննեքսիաների և կոնտրիբուցիաների լոզունգը։ Ըստ այդ հայացքի, մինչև վոր դրան չեյին հասել, ռուսական բանակը պետք ե կանգնած մնար մարտականորեն պատրաստ։ Իսկ բոլշևիկները պահանջում եյին անհապաղ հաշտություն ինչ գնով ել լինի, նրանք պատրաստ եյին, անհրաժեշտության դեպքում, կնքել անջատ հաշտություն, նրանք աշխատում եյին ուժով հարկադրել, վոր կնքվի այն, ուժեղացնելով բանակի առանց այդ ել մեծ կազմալուծումը» (եջ 27)։

Կաուցկու կարծիքով, բոլշևիկները պետք ե չվերցնեյին իշխանությունն ու բավականանային Ուչրեդիլկայով։

Այսպես ուրեմն, Կաուցկու և մենշևիկների ինտերնացիոնալիզմն ահա թե ինչումն ե կայանում. բուրժուական իմպերիալիստական կառավարությունից ռեֆորմներ պահանջել, բայց շարունակել սատարել նրան, շարունակել սատարել այդ կառավարության կողմից մղվող պատերազմին, մինչև վոր բոլոր պատերազմողները կընդունեն՝ առանց աննեքսիաների և կոնտրիբուցիաների լոզունգը։ Այսպիսի հայացք բազմիցս արտահայտել են և՛ Տուրատին, և՛ կաուցկիականները (Հաազեն ու մյուսն.), և՛ Լոնգեն ու Ընկ., վորոնք հայտարարում եյին, թե՝ մենք կողմնակից ենք «հայրենիքի պաշտպանության»։

Տեսականորեն դա սոցիալ-շովինիստներից անջատվելու կատարյալ անկարողությունն ե և հայրենիքի պաշտպանության հարցում լիակատար խառնաշփոթություն։ Քաղաքականապես դա — ինտերնացիոնալիզմի փոխարինումն ե քաղքենիական նացիոնալիզմով և անցում ռեֆորմիզմի կողմը, հրաժարում հեղափոխությունից

«Հայրենիքի պաշտպանության» ճանաչումը, պրոլետարիատի տեսակետից, արդարացումն ե տվյալ պատերազմի, ճանաչումն նրա օրինականության։ Իսկ վորովհետև պատերազմը մնում ե իմպերիալիստական (և՛ միապետության, և՛ հանրապետության դեպքում) — անկախ նրանից, թե տվյալ ժամանակին վորտեղ են կանգնած թշնամու զորքերը՝ իմ, թե օտար յերկրում՝ ապա հայրենիքի պաշտպանության ճանաչումը իրոք սատարումն ե իմպերիալիստական, հափշտակողական բուրժու-

ազգային, լիակատար դավաճանումն սոցիալիզմին։ Ռուսաստանում Կերենսկու օրով եր, բուրժուական-դեմոկրատական հանրապետության մեջ, պատերազմը շարունակում եր մնալ իմպերիալիստական, վորովհետև բուրժուազիան եր այն վարում, վորպես տիրապետող դասակարգ (իսկ պատերազմը «քաղաքականության շարունակությունն» է),—և պատերազմի իմպերիալիստական բնույթի առանձնապես ակնառու արտահայտություն եյին այն գաղտնի պայմանագրերը աշխարհի բաժանման ու օտար յերկրների թալանի մասին, վոր նախկին ցարն եր կնքել Անգլիայի ու Ֆրանսիայի կապիտալիստների հետ։

Մենշևիկները նողկալի կերպով խաբում եյին ժողովրդին, այդպիսի պատերազմն անվանելով պաշտպանողական կամ հեղափոխական, և, հավանություն տալով մենշևիկների քաղաքականությանը, Կաուցկին հավանություն է տալիս ժողովրդի խաբեությանը, հավանություն է տալիս մանր բուրժուաների դերին, վորոնք սպասարկում եյին կապիտալին, բանվորներին խաբելու, իմպերիալիստների կառքին նրանց կապելու միջոցով։ Կաուցկին անց է կացնում քաղքենիական, ֆիլիստերական քաղաքականություն, յերևակայելով (և մասսաներին այն անհեթեթ միտքը ներշնչելով), թե իբր լոզունգի առաջադրումը փոխում է բանը։ Բուրժուական դեմոկրատիայի ամբողջ պատմությունը մերկացնում է այդ պատրանքը. բուրժուական դեմոկրատները ժողովրդին խաբելու համար միշտ առաջադրել են և միշտ առաջադրում են ինչ «լոզունգներ» կամենաք։ Բանն այն է, վոր ստուգենք նրանց անկեղծությունը, վոր խոսքերի հետ առադրենք գործեր, վոր չբավականանանք իդեալիստական կամ շառլատանային

ֆրազով, այլ վորոնենք-գտնենք դասակարգային ռեալականությունը։ Իմպերիալիստական պատերազմը վոչ թե այն ժամանակ է դադարում իմպերիալիստական լինելուց, յերբ շառլատանները, կամ ֆրազյորները, կամ քաղքենի-ֆիլիստերները առաջադրում են քաղցրիկ «լոզունգ»,—այլ միայն այն ժամանակ, յերբ իմպերիալիստական պատերազմ մղող և նրա հետ միլիոնավոր տնտեսական թելերով (ու նույնիսկ ճոպաններով—канатов) կապված դասակարգը իրոք տապալվում է ու իշխանության ղեկի մոտ նրան փոխարինում է իրոք հեղափոխական դասակարգը՝ պրոլետարիատը։ Իմպերիալիստական պատերազմից—նմանապես և իմպերիալիստական, հափշտակողական հաշտությունից—այլ կերպ չի կարելի դուրս պրծնել։

Հավանություն տալով մենշևիկների արտաքին քաղաքականության, ինտերնացիոնալիստական և ցիմմերվալդիստական հայտարարելով այն, Կաուցկին, նախ, դրանով ցույց է տալիս ցիմմերվալդական, օպորտունիստական, մեծամասնության ամբողջ նեխվածությունը (իզուր չեր, վոր մենք, Ցիմմերվալդի ձախ թևը, իսկույն պատվարվեցինք այդպիսի մեծամասնությունից), իսկ 2-րդ—և սա ամենագլխավորն է—Կաուցկին պրոլետարիատի դիրքից անցնում է մանր բուրժուազիայի դիրքին, հեղափոխական դիրքից՝ ռեֆորմիստական դիրքի։

Պրոլետարիատը պայքարում է իմպերիալիստական բուրժուազիայի հեղափոխական տապալման համար, մանր բուրժուազիան՝ իմպերիալիզմի ռեֆորմիստական «կատարելագործման» համար, նրան համակերպվելու համար, նրան յենթարկված մնալով։ Յերբ վոր Կաուցկին դեռևս մարքսիստ եր, օրինակ. 1909 թվա-

կանին, երբ գրում էր «Իշխանության ուղին», նա պաշտպանում էր պատերազմի կապակցությամբ հենց հեղափոխության անխուսափելիության գաղափարը, նա խոսում էր հեղափոխությունների թվականության մոտեցման մասին։ Բազելի 1912 թվի մանիֆեստն ուղղակի և վորոշակի խոսում է պրոլետարական հեղափոխության մասին հենց այն իմպերիալիստական պատերազմի կապակցությամբ գերմանական ու անգլիական խմբերի միջև, վորը և բռնկեց 1914 թվականին։ Յեվ 1918 թվականին, երբ պատերազմի կապակցությամբ սկսվեցին հեղափոխությունները, փոխանակ պարզաբանելու նրանց անխուսափելիությունը, փոխանակ մտածելու և մինչև վերջը խորհրդածելու հեղափոխական տակտիկայի, հեղափոխության նախապատրաստման միջոցների ու յեղանակների մասին, Կաուցկին սկսեց ինտերնացիոնալիզմ անվանել մենշևիկների ռեֆորմիստական տակտիկան։ Մի՞թե սա ռենեգատություն չէ։

Կաուցկին մենշևիկներին նրա համար է գովում, վոր նրանք պնդում էին բանակի մարտական պատրաստականության պահպանման վրա։ Նա բոլշևիկներին հանդիմանում է նրա համար, վոր նրանք ուժեղացնում էին բանակի առանց այն էլ արդեն մեծ «կազմալուծումը»։ Սա նշանակում է գովել ռեֆորմիզմը և իմպերիալիստական բուրժուազիային յենթարկվելը, հանդիմանել հեղափոխությունը, հրաժարվել նրանից։ Վորովհետև մարտական պատրաստականության պահպանումը նշանակում էր և Կերենսկու օրով էր պահպանումն բուրժուական (թեկուզ հանրապետական) հրամանատարություն ունեցող բանակի։ Բոլորին հայտնի յե—և դեպքերի ընթացքն ակնառու կերպով հաստատեց,—վոր այդ հանրապետական բա-

նակը պահպանում էր կոռնիլովյան վոգին շնորհիվ կոռնիլովյան հրամանատարական կազմի։ Բուրժուական սպայությունը չէր կարող կոռնիլովյան չլինել, չէր կարող չթեքվել դեպի իմպերիալիզմը, դեպի պրոլետարիատի բռնի ճնշումը։ Հին ձևով թողնել իմպերիալիստական պատերազմի բոլոր հիմքերը, բուրժուական դիկտատուրայի բոլոր հիմքերը, նորոգել մանրուքները, գունավորում տալ դատարկ բաների («ռեֆորմներ»)—ահա թե իրոք ինչի յեր հանգում մենշևիկյան տակտիկան։

Յեվ ընդհակառակը։ Առանց բանակի «կազմալուծման» վոչ մի հեղափոխություն յոլա չի գնացել և չի կարող յոլա գնալ։ Վորովհետև բանակը հին կարգին սատարելու ամենավոսկրացած գործիքն է, ամենից կարծրացած նեցուկը բուրժուական կարգապահության, կապիտալի տիրապետության պահպանման, աշխատավորների ստրկական հնազանդության պահպանման ու դաստիարակման և կապիտալին նրանց յենթարկելու։ Հակահեղափոխությունը բանակի կողքին յերբեք չի հանդուրժել, չէր կարող հանդուրժել զինված բանվորների։ Ֆրանսիայում—գրում էր Ենգելսը,—յուրաքանչյուր հեղափոխությունից հետո բանվորները զինված էին լինում.

«Ուստի պետական ղեկի մոտ գտնվող բուրժուաների համար առաջին պատվիրանը բանվորների զինաթափումն էր»*։

---

* Վլ. Ի. նկատի ունի «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» գրվածքի գերմանական 3 րդ հրատարակության՝ Ենգելսի գրած առաջաբանի հետևյալ տեղը. «Ֆրանսիայի տնտեսական և քաղաքական զարգացումը 1789 թվականից բերեց այնպիսի դրության, վոր Փարիզում վերջին 50 տարվա ընթացքում բռնկած յուրաքանչյուր հեղափոխություն անհրաժեշտաբար ընդունում էր

Զինված բանվորները նոր բանակի սաղմն էին, հասարակական նոր կարգի կազմակերպված բջիջը: Ճզմել այդ բջիջը, թույլ չտալ, վոր նա աճի—բուրժուազիայի առաջին պատվիրանն էր: Ամեն մի հաղթանակած հեղափոխության առաջին պատվիրանը—Մարքսն ու Ենգելսը բազմիցս ընդգծել են այդ—յեղել է՝ ջարդել հին բանակը, ցրել այն, փոխարինել այն նորով*: Հասարակական նոր դասակարգը դեպի տիրապետություն բարձրանալիս յերբեք չեր կարող

պրոլետարիատի ապստամբության բնույթ· իր արյունը վճարելով հաղթանակի համար, պրոլետարիատն անխուսափելիորեն նրանից հետո յելնում է սեփական պահանջներով: Այդ պահանջները սովորաբար լինում եյին անպարզ ու խառնաշփոթ՝ նայած Փարիզի բանվորների զարգացման աստիճանին, բայց նրանք բոլորն էլ վերջիվերջո հանգում եյին բնավորների և կապիտալիստների դասակարգային հակադրության վոչնչացման: Ինչպես պետք է դա տեղի ունենա, նրանք այդ չգիտեյին, բայց այդ պահանջն արդեն չնայած նրա անորոշության, իր մեջ վտանգ էր պարունակում գոյություն ունեցող հասարակակարգի համար. այդ պահանջներն առաջադրած բանվորները զինված եյին լինում, և նրանց զինաթափումը գլխավորագույն խնդիրն էր հանդիսանում կառավարող բուրժուազիայի համար»: К· Маркс. «Гражданска война во Франции (1870—1871)„. С пред. Ф. Энгельса, перевод с немецкого, под. ред. Н. Ленина. Изд· Соцэкгиз. 1931, էջ 2—3): Խմբ.:

* Գնահատելով Փարիզի Կոմունայի փորձը, Մարքսը գրում էր. «Փարիզը կարողանում էր դիմադրել Վերսալին միայն այն պատճառով, վոր պաշարումը նրան ազատեց բանակից, իսկ սրա տեղը բռնեց ազգային գվարդիան, վոր գլխավորապես բանվորներից էր համալրվում: Այս փաստը պետք էր դարձնել կայուն հաստատություն, ուստի և Կոմունայի առաջին դեկրետը կանոնավոր զորքի վերացման և այն զինված ժողովրդով փոխարինելու դեկրետն էր» (Маркс, «Гражданская война во Франции» Соцэкгиз, 1931, էջ 49): Խմբ.:

և այժմ չի կարող հասնել այդ տիրապետության ու ամրապնդել այն այլ կերպ, քան բոլորովին քայքայելով հին բանակը («կազմալուծում»,—ճչում են այս առթիվ ռեակցիոն կամ պարզապես վախկոտ քաղքենիները),—այլ կերպ, քան անցնելով դժվարագույն, ամենատանջալից մի շրջան առանց վորևե բանակի (այդ տանջալից շրջանն անցել է Ֆրանսական մեծ հեղափոխությունն էլ), այլ կերպ, քան աստիճանաբար, քաղաքացիական ծանր պատերազմի մեջ մշակելով նոր բանակ, նոր կարգապահություն, նոր դասակարգի ռազմական նոր կազմակերպություն: Պատմաբան Կաուցկին առաջ հասկանում էր այդ: Ռենեգատ Կաուցկին մոռացել է այդ:

Ին՞չ իրավունք ունի Կաուցկին «կառավարական սոցիալիստներ» անվանելու Շայդեմաններին, յեթե նա հավանություն է տալիս մենշևիկների տակտիկային ռուսական հեղափոխության մեջ: Կերենսկուն սատարելով, մտնելով նրա մինիստրության մեջ, մենշևիկները ճիշտ նույնպես կառավարական սոցիալիստներ եյին: Այդ յեզրակացությունից վոչ մի կերպ չի ճողոպրի Կաուցկին, յեթե միայն փորձ անի դնելու իմպերիալիստական պատերազմ մղող տիրապետող դասակարգի հարցը: Բայց Կաուցկին խուսափում է տիրապետող դասակարգի հարցը—մարքսիստի համար պարտադիր հարցը դնելուց, վորովհետև այդպիսի հարցի սոսկ դրումը կմերկացներ ռենեգատին:

Կաուցկիականները Գերմանիայում, լոնգետիստները Ֆրանսիայում, Տուրատին ու Ընկ. Իտալիայում դատում են այսպես. սոցիալիզմը յենթադրում է ազգերի հավասարությունն ու ազատությունը, նրանց ինքնորոշումը,—ուստի, յերբ հարձակվում են մեր յերկրի վրա,

կամ յերբ թշնամու զորքերը ներխուժել են մեր յերկիրը, սոցիալիստներն իրավունք ունեն և պարտավոր են պաշտպանել հայրենիքը։ Բայց այս դատողությունը, տեսականորեն, կամ բացարձակ ծաղր է սոցիալիզմի նկատմամբ, կամ խարդախչական խուսափանք, իսկ գործնականորեն-քաղաքականապես այդ դատողությունը համընկնում է այն բոլորովին խավար մուժիկի դատողության հետ, վորը չի կարողանում մտածել անգամ պատերազմի սոցիալական դասակարգային բնույթի և հեղափոխական կուսակցության՝ ռեակցիոն պատերազմի ժամանակ ունենալիք խնդիրների մասին։

Սոցիալիզմը դեմ է ազգերի վրա բռնություն գործ դնելուն։ Այդ անվիճելի յե։ Բայց սոցիալիզմն առհասարակ դեմ է մարդկանց վրա բռնություն գործադրելուն։ Սակայն վոչ վոք, բացի քրիստոնեյական անարխիստներից ու տոլստոյականներից, դեռևս այստեղից չի յեզրակացրել, թե սոցիալիզմը դեմ է հեղափոխական բռնության։ Ուրեմն խոսել «բռնության» մասին առհասարակ, առանց քննելու այն պայմանները, վորոնք տարբերում են ռեակցիոն և հեղափոխական բռնությունը, նշանակում է լինել քաղքենի, վորը հրաժարվում է հեղափոխությունից, կամ դա նշանակում է պարզապես սոփիստիկայով խաբել ինքն իրեն և ուրիշներին։

Նույնը վերաբերում է և ազգերի վրա գործադրվող բռնության։ Ամեն մի պատերազմ բռնություն է ազգերի վերաբերմամբ, բայց դա սոցիալիստներին չի խանգարում լինել կողմնակից հեղափոխական պատերազմի։ Պատերազմի դասակարգային բնույթը—ահա սոցիալիստի առաջ (յեթե նա ռենեգատ չե) ծառացած հիմնական հարցը։ 1914—1918 թվականների իմպերիալիստական պատերազմը պատերազմ է իմպերիալիստական բուրժուազիայի յերկու խմբերի միջև աշխարհի բաժանման համար, ավարի բաժանման համար, մանր ու թույլ ազգերին թալանելու ու խեղդելու համար։ Պատերազմի այդպիսի գնահատական տվեց 1912 թվականին Բազելի մանիֆեստը, այդպիսի գնահատականը հաստատեցին փաստերը։ Ով վոր պատերազմի նկատմամբ շեղվում է այս տեսակետից, նա սոցիալիստ չե։

Յեթե գերմանացին Վիլհելմի օրով կամ ֆրանսիացին Կլեմանսոյի օրով ասում են. յես իրավունք ունեմ և պարտավոր եմ, վորպես սոցիալիստ, պաշտպանելու հայրենիքը, յեթե թշնամին ներխուժել է իմ յերկիրը, ապա այդ դատողությունը վոչ թե սոցիալիստի, վոչ թե ինտերնացիոնալիստի, վոչ թե հեղափոխական պրոլետարի դատողություն է, այլ քաղքենի-նացիոնալիստի։ Վորովհետև այդ դատողության մեջ չքանում է բանվորի դասակարգային հեղափոխական պայքարն ընդդեմ կապիտալի, չքանում է ամբողջությամբ վերցրած բովանդակ պատերազմի գնահատականը՝ համաշխարհային բուրժուազիայի և համաշխարհային պրոլետարիատի տեսակետից, այսինքն չքանում է ինտերնացիոնալիզմը, մնում է վողորմելի, կորդացած նացիոնալիզմը։ Իմ յերկիրը նեղում են, յես գործ չունեմ դրանից ավելիի հետ, ահա թե ինչի յե հանգում այդ դատողությունը, ահա թե ինչի մեջ է նրա քաղքենիական-նացիոնալիստական անձկությունը։ Դա նույնն է թե մեկ անձի վերաբերմամբ գործադրելիք անհատական բռնության մասին վորևե մեկը դատեր՝ սոցիալիզմը դեմ է բռնության, այդ պատճառով ավելի լավ է յես մատնություն կատարեմ, քան թե բանտ նստեմ

Ֆրանսիացին, գերմանացին կամ իտալացին, որն ասում է՝ սոցիալիզմը դեմ է ազգերի վրա բռնություն գործադրելուն, ուստի ես պաշտպանվում եմ, երբ թշնամին ներխուժել է իմ երկիրը, դավաճանում է սոցիալիզմին ու ինտերնացիոնալիզմին։ Որովհետև այդպիսի մարդը տեսնում է միայն իր «երկիրը», ամենից բարձր է դասում «իր»... «բուրժուազիան», չմտածելով ինտերնացիոնալ կապերի մասին, որոնք իմպերիալիստական են դարձնում պատերազմը, նրա բուրժուազիային օղակ դարձնում իմպերիալիստական թալանի շղթայի մեջ։

Բոլոր քաղքենիներն ու բոլոր բութ ու խավար մուժիկները դատում են հենց այնպես, ինչպես դատում են ռենեգատներ կաուցկիականները, լոնգետիստները, Տուրատին և Ընկ.՝ թշնամին իմ երկրումն է, ուրիշ ոչ մի բանի հետ ես գործ չունեմ*։

Սոցիալիստը, հեղափոխական պրոլետարը, ինտերնացիոնալիստն այլ կերպ է դատում. պատերազմի

* Սոցիալ-շովինիստները (Շայդեմանները, Ռենոդելները, Հենդերսոնները, Գոմպերսները և Ընկ.) պատերազմի ժամանակ բոլորովին հրաժարվում են «Ինտերնացիոնալի» մասին խոսելուց։ Նրանք իրենց բուրժուազիայի թշնամիներին համարում են «դավաճաններ»... սոցիալիզմի հանդեպ։ Նրանք կողմնակից են իրենց բուրժուազիայի նվաճողական քաղաքականության։ Սոցիալ-պացիֆիստները (այսինքն խոսքով սոցիալիստները, գործով քաղքենիական պացիֆիստները) արտահայտում են ամեն տեսակ «ինտերնացիոնալիստական» զգացմունքներ, աննեքսիաների և այլնի դեմ ծառանում, բայց գործով շարունակում են պաշտպանել իրենց իմպերիալիստական բուրժուազիային։ Տարբերությունը երկու տիպերի միջև լուրջ չէ, նման այն տարբերության, որ կա բերանում չար ճառեր ունեցող կապիտալիստի և բարի ճառեր ունեցող կապիտալիստի միջև։

բնույթը (ռեակցիո՞ն է նա, թե հեղափոխական) կախված է ոչ թե նրանից, թե ով է հարձակվել և ում երկրումն է կանգնած «թշնամին», այլ նրանից, թե որ դասակարգն է պատերազմ մղում, որպիսի քաղաքականություն է շարունակվում տվյալ պատերազմով։ Եթե տվյալ պատերազմը ռեակցիոն իմպերիալիստական պատերազմ է, այսինքն մղվում է իմպերիալիստական, բռնի, թալանչիական ռեակցիոն բուրժուազիայի երկու համաշխարհային խմբերի միջև, ապա ամեն մի (անգամ փոքր երկրի) բուրժուազիան դառնում է թալանի մասնակիցը, և իմ խնդիրը, հեղափոխական պրոլետարիատի ներկայացուցչի խնդիրն է պատրաստել համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը, որպես միակ փրկությունը համաշխարհային պատերազմի սարսափներից։ Ես պետք է դատեմ ոչ թե «իմ» երկրի տեսակետից (որովհետև դա դատողությունն է ողորմելի բթամիտ նացիոնալիստ-քաղքենու, որը չի հասկանում, որ ինքը խաղալիք է իմպերիալիստական բուրժուազիայի ձեռքին), այլ համաշխարհային պրոլետարական հեղափոխության նախապատրաստմանը, պրոպագանդին, մոտեցնելուն իմ մասնակցելու տեսակետից։

Ահա թե ինչ է ինտերնացիոնալիզմը, ահա որն է ինտերնացիոնալիստի, հեղափոխական բանվորի, իսկական սոցիալիստի խնդիրը։ Ահա թե ինչպիսի այբուբենն է «մոռացել» ռենեգատ Կաուցկին։ Եվ նրա ռենեգատությունն էլ ավելի է ակնառու դառնում, երբ նա մանր-բուրժուական նացիոնալիստների (Ռուսաստանում մենշևիկների, Ֆրանսիայում լոնգետիստների, Իտալիայում Տուրատիի, Գերմանիայում Հաազեյի և Ընկ.) տակտիկային հավանություն տալուց հետո անցնում է

բոլշևիկյան տակտիկայի քննադատության։ Ահա այդ քննադատությունը.

«Բոլշևիկյան հեղափոխությունը կառուցված էր այն յենթադրության վրա, թե նա յելակետ կծառայի ընդհանրական յեվրոպական հեղափոխության համար,—որ Ռուսաստանի համարձակ նախաձեռնությունը կդրդի բարձրանալու ամբողջ Յեվրոպայի պրոլետարներին։

Այսպիսի յենթադրության պարագայում, հասկանալի յե, վոր մեկ էր, թե ինչ ձևեր կընդունի ռուսական անջատ հաշտությունը, ինչ ծանրություններ ու տերիտորիայի կորուստներ (բառացի՝ խեղանդամումներ կամ հաշմություններ, Verstümmelungen) կբերի նա ռուս ժողովրդին, ազգերի ինքնորոշման վորպիսի մեկնաբանություն կտա նա։ Այն ժամանակ նմանապես մեկ էր, ընդունակ է արդյոք Ռուսաստանը պաշտպանվելու, թե վոչ։ Ըստ այդ հայացքի՝ յեվրոպական հեղափոխությունը կազմում էր ռուսական հեղափոխության լավագույն պաշտպանությունը, նա պետք է բոլոր ժողովուրդներին բերեր ռուսաստանյան նախկին տերիտորիայի վրա լիակատար և իսկական ինքնորոշում։

Յեվրոպայի հեղափոխությունը, վոր այնտեղ սոցիալիզմ կբերեր և կամրապնդեր այն, պետք է նույնպես միջոց դառնար վերացնելու համար այն արգելքները, վորոնք Ռուսաստանում դըրվում էին սոցիալիստական արտադրության իրագործման առաջ յերկրի տնտեսական հետամնացությամբ։

Այս ամենը շատ տրամաբանորեն ու լավ հիմնավորված էր յեթե միայն թույլ տանք հիմնական յենթադրությունը՝ վոր ռուսական հեղափոխությունն անխուսափելիորեն պետք է սանձալույծ անի յեվրոպականը։ Իսկ ի՞նչպես պետք է լինի այն դեպքում, յեթե այդ չպատահի։

Մինչև այժմ այդ յենթադրությունը չարդարացավ։ Յեվ այժմ Յեվրոպայի պրոլետարներին մեղադրում են, թե նրանք լքել են ու մատնել ռուսական հեղափոխությունը։ Սա մեղադրանք է անհայտների դեմ, վորովհետև ո՞ւմ պատասխանատու դարձնենք յեվրոպական պրոլետարիատի վարքի համար» (էջ 28)։

Յեվ Կաուցկին լրացուցիչ կերպով ծամծմում է, թե Մարքսը, Էնգելսը, Բեբելը հաճախ են սխալվել իրենց

սպասած հեղափոխության գալու նկատմամբ, բայց վոր նրանք յերբեք իրենց տակտիկան չեն կառուցել «վորոշ ժամկետին» գալիք հեղափոխության սպասման վրա (էջ 29), մինչդեռ, իբր թե, բոլշևիկներն «ամեն ինչ կապում են յեվրոպական ընդհանրական հեղափոխության հետ»։

Մենք դիտմամբ քաղեցինք այսքան յերկար մեջբերումը, վորպեսզի ակնառու կերպով ցույց տանք ընթերցողին, թե վորքան «ճարպիկ» է Կաուցկին կեղծում մարքսիզմը, փոխարինելով այն գռեհիկ ու քաղքենիական ռեակցիոն հայացքով։

Նախ, հակառակորդին վերագրել ակներև հիմարություն և հետո հերքել այն — վոչ այնքան էլ խելոք մարդկանց վարվելակերպ է։ Յեթե բոլշևիկներն իրենց տակտիկան կառուցեյին այլ յերկրներում վորոշ ժամկետին գալիք հեղափոխության սպասման վրա, դա կլիներ անվիճելի հիմարություն։ Բայց բոլշևիկյան կուսակցությունը չի արել այդ հիմարությունը. ամերիկական բանվորներին գրած իմ նամակում (1918 թ. օգոստոսի 20-ին)* յես ուղղակի պատվարվում եմ այդ հիմարությունից, ասելով, վոր մենք հույս ունենք ամերիկական հեղափոխության վրա, բայց վոչ վորոշ ժամկետի։ Իմ բանակռվի մեջ ընդդեմ ձախ էսէռների և «ձախ կոմունիստների» (1918 թ. հունվար—մարտ)** յես բազմիցս զարգացրել եմ նույն այդ միտքը։ Կաուցկին կատարել է փոքրիկ ... բոլորովին փոքրիկ քաշկռտուկ, վորի վրա էլ կառուցել է բոլշևիզմի իր քննադատությունը։ Կաուցկին ի մի յե խառնել

* Տես Յերկերի XXIII հատոր (ռուս.), էջ 176—189 Խմբ.։
** Տես Յերկերի XXII հատոր։ Խմբ.։

այն տակտիկան, որը նկատի ունի եվրոպական հեղափոխությունն ավելի կամ պակաս մոտավոր, բայց ոչ որոշ ժամկետում, ու այն տակտիկան, որը նկատի ունի եվրոպական հեղափոխությունը որոշ ժամկետում։ Փոքրիկ կեղծիք, բոլորովին փոքրիկ։

Երկրորդ տակտիկան հիմարություն է։ Առաջինը պարտադիր է մարքսիստի համար, ամեն մի հեղափոխական պրոլետարի և ինտերնացիոնալիստի համար, — պարտադիր է, որովհետև միայն նա է մարքսիստորեն ճիշտ հաշվառում օբյեկտիվ դրությունը եվրոպական բոլոր երկրներում, որ ծնունդ է առնում պատերազմից, միայն նա է համապատասխանում պրոլետարիատի ինտերնացիոնալ խնդիրներին։

Առհասարակ հեղափոխական տակտիկայի հիմքերի խոշոր հարցը նենգափոխելով մանր հարցով այն սխալի մասին, որ կարող էին անել հեղափոխական-բոլշևիկները, բայց որ նրանք չեն արել, Կաուցկին բարեհաջող կերպով հրաժարվել է հեղափոխական տակտիկայից առհասարակ։

Քաղաքականության մեջ ռենեգատ՝ նա թեորիայում անգամ չի կարողանում դնել հեղափոխական տակտիկայի օբյեկտիվ նախադրյալների հարցը։

Եվ այստեղ մենք մոտեցանք երկրորդ կետին։

2-րդ։ Եվրոպական հեղափոխությունը նկատի առնելը պարտադիր է մարքսիստի համար, եթե հեղափոխական սիտուացիան առկա է։ Սա մարքսիզմի այբբենական ճշմարտություն է, որ սոցիալիստական պրոլետարիատի տակտիկան չի կարող միատեսակ լինել այն ժամանակ, երբ հեղափոխական սիտուացիան առկա է, և այն պարագայում, երբ նա չկա։

Եթե Կաուցկին դներ այս, մարքսիստի համար

պարտադիր, հարցը, նա կտեսներ, որ պատասխանն ստացվում է անպայման իր դեմ։ Պատերազմից շատ առաջ բոլոր մարքսիստները, բոլոր սոցիալիստները համաձայն էին այն բանում, որ եվրոպական պատերազմը կստեղծի հեղափոխական սիտուացիա։ Երբ որ Կաուցկին դեռևս ռենեգատ չէր, նա պարզ ու որոշակի ընդունում էր այդ — և՛ 1902 թվականին («Սոցիալական հեղափոխությունը»), և 1909 թվականին («Իշխանության ուղին»*)։ Բազելի մանիֆեստն ամբողջ II Ինտերնացիոնալի անունից ընդունեց այդ. իզուր չէ, որ բոլոր երկրների սոցիալ-շովինիստներն ու կաուցկիականները («կենտրոնայինները», մարդիկ, որոնք տատանվում են հեղափոխականների և օպորտունիստների միջև) Բազելի մանիֆեստի համապատասխան հայտարարություններից վախենում են՝ որպես կրակից!

Հետևաբար, Եվրոպայում հեղափոխական սիտուացիայի սպասումը ոչ թե բոլշևիկների հրապուրվելու արդյունքն էր, այլ մարքսիստների ընդհանուր կարծիքը։ Եթե Կաուցկին այս անվիճելի ճշմարտությունից

* Վլ. Ի. նկատի ունի Կաուցկու բրոշյուրի հետևյալ տեղերը. 1) «Մեզ անհրաժեշտ է հաշվի առնել պատերազմի հնարավորությունը ավելի կամ պակաս մոտավոր ապագայում, հետևաբար և քաղաքական այնպիսի ցնցումների հնարավորությունը, որոնք կամ ուղղակի կվերջանան պրոլետարական ապստամբություններով, կամ գոնե ճանապարհ կմաքրեն այդպիսիների համար». 2) «Պրոլետարիատն իր բոլոր ուժերով ատում է պատերազմը, նա բոլոր ջանքերը կթափի, որպեսզի արգելք լինի պատերազմական տրամադրության բարձրացման։ Սակայն, եթե չնայած դրան բռնկի պատերազմը, ապա պրոլետարիատը ներկայումս այն դասակարգն է հանդիսանում, որն ամենից մեծ հույսերով կարող է սպասել նրա ելքին» («Путь к власти». Гиз. 1923. էջ 92—93)։ Խմբ.։

ոճիք է պատում այնպիսի ֆրազներով, թե իբր բոլշևիկները «միշտ հավատացել են բռնության ու կամքի ամենազորությանը», ապա դա հենց դատարկահնչյուն ֆրազ է, վորը քողարկում է Կաուցկու փախուստը և խայտառակ փախուստը հեղափոխական սիտուացիայի հարցը դնելուց։

Այնուհետև։ Հեղափոխական սիտուացիան իրոք տեղի ունեցա՞վ, թե վոչ։ Այս հարցը ևս Կաուցկին չկարողացավ դնել։ Նրան պատասխանում են տնտեսական փաստերը. պատերազմի կողմից ամենուրեք ստեղծված սովն ու ավերումը նշանակում են հեղափոխական սիտուացիա։ Տվյալ հարցին պատասխանում են նույնպես քաղաքական փաստերը. արդեն 1915 թվականից բոլոր յերկրներում պարզ յերևան յեկավ հին, փտած սոցիալիստական կուսակցությունների պառակտման պրոցեսը, պրոլետարիատի մասսաների՝ սոցիալ-շովինիստական առաջնորդներից դեպի ձախ, դեպի հեղափոխական գաղափարներն ու տրամադրությունները, դեպի հեղափոխական առաջնորդները հեռանալու պրոցեսը։

1918 թ. օգոստոսի 5-ին, յերբ իր բրոշյուրն էր գրում Կաուցկին, չտեսնել այդ փաստերը կարող էր միայն մի մարդ, վորը վախենում է հեղափոխությունից, դավաճանում նրան։ Իսկ այժմ, 1918 թ. հոկտեմբերի վերջում, Յեվրոպայի մի շարք յերկրներում հեղափոխությունն աճում է բոլորի աչքի առաջ և խիստ արագ։ «Հեղափոխական» Կաուցկին, վորը ցանկանում է, վոր առաջվա նման իրեն համարեն մարքսիստ, այնպիսի կարճատես ֆիլիստեր դուրս յեկավ, վորը—1847 թվականի՝ Մարքսի կողմից ծաղրված ֆիլիստերների նման—չտեսավ մոտեցող հեղափոխությունը!!

Մենք մոտեցանք յերրորդ կետին։

3-րդ։ Վորո՞նք են հեղափոխական տակտիկայի առանձնահատկություններն այն պարագայում, յերբ առկա յե յեվրոպական հեղափոխական սիտուացիան։ Ռենեգատ դառնալով, Կաուցկին վախեցավ դնել մարքսիստի համար պարտադիր այդ հարցը։ Կաուցկին դատում է վորպես տիպիկ ֆիլիստեր-քաղքենի կամ խավար գյուղացի. վրա հասա՞վ «յեվրոպական ընդհանուր հեղափոխությունը», թե վոչ։ Յեթե վրա յե հասել, այն ժամանակ նա էլ պատրաստ է հեղափոխական դառնալու! Բայց այն ժամանակ — կնկատենք մենք, — ամեն մի թափթփուկ (նման այն սրիկաներին, վորոնք յերբեմն քսվում-մոտենում են այժմ հաղթանակած բոլշևիկներին) կսկսի իրեն հայտարարել հեղափոխական!

Յեթե վոչ, այն ժամանակ Կաուցկին յերես է դարձնում հեղափոխությունից! Կաուցկին չունի այն ճշմարտության ըմբռնման ստվերն իսկ, վոր հեղափոխական-մարքսիստին քաղքենուց տարբերում է խավար մասսաներին հասունացող հեղափոխության անհրաժեշտությունը քարոզելու, այդ հեղափոխության անխուսափելիությունն ապացուցելու, նրա օգուտը ժողովրդի համար պարզաբանելու, նրա համար պրոլետարիատին ու բոլոր աշխատավորական և շահագործվող մասսաներին պատրաստելու հմտությունը։

Կաուցկին անմտություն է վերագրել բոլշևիկներին իբր թե նրանց ամբողջ հույսն այն է յեղել, վոր յեվրոպական հեղափոխությունը վրա կհասնի վորոշ ժամկետում։ Այս անմտությունն ուղղվեց Կաուցկու դեմ, վորովհետև նրա մոտ հենց դուրս յեկավ՝ բոլշևիկների տակտիկան ճիշտ կլիներ, յեթե յեվրոպական հեղափոխությունը վրա հասներ 1918 թ. օգոստոսի 5-ին! Հենց

այդ թիվն է հիշատակում Կաուցկին վորպես իր բրոշյուրի գրության ժամանակը։ Յեվ յերբ վոր այդ օգոստոսի 5-ից միքանի շաբաթ անց պարզվեց, վոր մի շարք յեվրոպական յերկիրներում հեղափոխությունը տեղի չի ունենում, ապա Կաուցկու ամբողջ ռենեգատությունը, մարքսիզմի՝ նրա ամբողջ կեղծումը, հեղափոխականորեն դատելու և նույնիսկ հարցերը հեղափոխականորեն դնելու նրա ամբողջ անկարողությունը յերևան յեկավ իր բովանդակ հրապույրով։

Յերբ Յեվրոպայի պրոլետարներին մեղադրում են դավաճանության համար—գրում է Կաուցկին— ապա դա մեղադրանք է անհայտների դեմ։

Սխալվում եք, պարոն Կաուցկի!։ Նայեցեք հայելու մեջ և դուք կտեսնեք այն «անհայտներին», վորոնց դեմ ուղղված է այդ մեղադրանքը։ Կաուցկին պարզամիտ է ձևանում, այնպիսի է ցույց տալիս, թե չի հասկանում՝ **ո՞վ** է այդպիսի մեղադրանք ուղղել և **ի՞նչ իմաստ** ունի այն։ Իրոք Կաուցկին հիանալի գիտե, վոր այդ մեղադրանքն առաջադրում եյին և առաջադրում են գերմանական «ձախերը», սպարտակյանները, Լիբկնեխտն ու իր բարեկամները։ Այս մեղադրանքն արտահայտում է այն բանի **պարզ գիտակցությունը**, վոր գերմանական պրոլետարիատը ռուսական (և միջազգային) հեղափոխությանը դավաճանում եր, յերբ խեղդում եր Ֆինլանդիան, Ուկրաինան, Լատվիան, Եստլանդիան։ Այդ մեղադրանքն ամենից առաջ և ամենից ավելի ուղղվում է վոչ թե **մասսայի** դեմ, վորը միշտ ընկճված է, այլ այն **առաջնորդների** դեմ, վորոնք, Շայդեմանների և Կաուցկիների նման, չեյին **կատարում** մասսաների մեջ նրանց հետամնացության դեմ ուղղված հեղափոխական ագիտացիայի, հեղափոխական պրոպագանդայի, հեղա-

փոխական աշխատանքի իրենց պարտականությունը, վորոնք գործում եյին փաստորեն **հակառակ** այն հեղափոխական բնազդների ու ձգտումների, վորոնք միշտ անթեղված ծխում են ճնշված դասակարգի մասսայի խորքում։ Շայդեմաններն ուղղակի, կոպիտ կերպով, ցինիկորեն, մեծ մասամբ շահախնդրորեն մատնում եյին պրոլետարիատին և անցնում բուրժուազիայի կողմը։ Կաուցկիականներն ու լոնգետիստները նույն բանն եյին անում, տատանվելով, յերերալով, վախկոտ կերպով աչք հառելով նրանց վրա, ովքեր ուժեղ են տվյալ րոպեյին։ Կաուցկին իր բոլոր գրություններով պատերազմի ժամանակ **մարում էր** հեղափոխական վոգին, փոխանակ սատար լինելու նրան, զարգացնելու այն։

Դա գերմանական պաշտոնական սոցիալ-դեմոկրատիայի «միջին» առաջնորդի քաղքենիական բթացման ուղղակի պատմական կոթող կմնա, վոր Կաուցկին նույնիսկ չի հասկանում, թե վորպիսի վիթխարի **տեսական նշանակություն**, վորպիսի՛ ավելի ագիտացիոն ու պրոպագանդիստական նշանակություն ունի Յեվրոպայի պրոլետարների «մեղադրումն» այն բանի համար, վոր նրանք դավաճանեցի՛ն ռուսական հեղափոխությանը։ Կաուցկին չի՛ հասկանում, վոր այդ «մեղադրանքը»—գերմանական «կայսրության» գրաքննական պայմաններում—թերևս միակ ձևն է, վորով սոցիալիզմին չդավաճանած գերմանական սոցիալիստները՝ Լիբկնեխտն ու նրա բարեկամները, արտահայտում են **իրենց կոչը գերմանական բանվորներին**՝ վար նետելու Շայդեմաններին ու Կաուցկիներին, մի կողմ հրելու այդպիսի «առաջնորդներին», ազատվելու նրանց բթացնող ու գռեհկացնող քարոզից, **հակառակ** նրանց,

նրանց կողքով, նրանց վրայով, բարձրանալու դեպի հեղափոխություն, հեղափոխության:

Կաուցկին այդ չի հասկանում։ Եվ վորտեղից կարող ե նա հասկանալ բոլշևիկների տակտիկան։ Մի մարդուց, վորը հրաժարվում ե հեղափոխությունից առհասարակ, կարելի՞ յե արդյոք սպասել, վոր չափի-ձևի և գնահատի հեղափոխության զարգացման պայմանները ամենից ավելի «դժվար» դեպքերից մեկում։

Բոլշևիկների տակտիկան ճիշտ եր, միակ ինտերնացիոնալիստական տակտիկան եր, վորովհետև նա խարսխվում եր վոչ թե համաշխարհային հեղափոխության վախկոտ յերկյուղի վրա, վոչ թե քաղքենիական «անհավատության» վրա՝ այդ հեղափոխության նկատմամբ, վոչ թե «իրենց» հայրենիքը (իրենց բուրժուազիայի հայրենիքը) պաշտպանելու նեղ-նացիոնալիստական ցանկության վրա, իսկ մնացածի վրա «թքած»— նա հիմնված եր յեվրոպական հեղափոխական սիտուացիայի ճիշտ (մինչև պատերազմը, մինչև սոցիալ-շովինիստների և սոցիալ-պացիֆիստների ռենեգատությունը հանրաճանաչված) հաշվառքի վրա: Այդ տակտիկան միակ ինտերնացիոնալիստականն եր, վորովհետև անց եր կացնում մի յերկրում առավելագույն իրագործելին՝ զարգացնելու, հրահրելու համար հեղափոխությունը, նրան սատարելու համար բոլոր յերկիրներում: Այդ տակտիկան արդարացավ ահագին հաջողությամբ, վորովհետև բոլշևիզմը (ամենևին ել վոչ ռուսական բոլշևիկների վաստակների շնորհիվ, այլ շնորհիվ այն հանգամանքի, վոր մասսաներն ամենուրեք խորագույն համակրանք են տածում դեպի իրոք հեղափոխական տակտիկան) դարձավ համաշխարհային բոլշևիզմ, տվեց գաղափար, թեորիա, ծրագիր, տակտիկա, վոր կոնկրե-

տորեն, գործնականապես տարբերվում ե սոցիալ-շովինիզմից և սոցիալ-պացիֆիզմից։ Բոլշևիզմը ջախջախեց վերջ տվեց Շայդեմանների ու Կաուցկիների, Ռենոդելների ու Լոնգեների, Հենդերսոնների ու Մակդոնալդների հին, փտած Ինտերնացիոնալին, վորոնք այժմ իրար վոտքերի տակ կընկնեն, յերազելով «միասնականության» մասին և հարություն տալով դիակին։ Բոլշևիզմն ստեղծեց III Ինտերնացիոնալի գաղափարային ու տակտիկական հիմքերը, իրոք պրոլետարական ու կոմունիստական Ինտերնացիոնալի, վորը հաշվառում ե և՛ խաղաղ դարաշրջանի նվաճումները, և՛ հեղափոխությունների սկսված դարաշրջանի փորձը։

Բոլշևիզմը ամբողջ աշխարհովը մին ժողովրդականացրեց «պրոլետարիատի դիկտատուրայի» գաղափարը, այդ խոսքերը լատիներենից թարգմանեց նախ ռուսերեն, իսկ հետո աշխարհի բոլոր լեզուներով, խորհրդային իշխանության օրինակով ցույց տալով, վոր նույնիսկ հետամնաց յերկրի բանվորներն ու չքավորագույն գյուղացիները, նույնիսկ ամենից պակաս փորձվածները, կրթվածները, կազմակերպության սովորները ի վիճակի եյին մի ամբողջ տարի, վիթխարի դժվարությունների մեջ, շահագործողների դեմ ուղղված պայքարում (վորոնց սատարում եր ամբողջ աշխարհի բուրժուազիան) պահպանելու աշխատավորների իշխանությունը, ստեղծելու մի դեմոկրատիա, վորն անչափ ավելի բարձր ե և լայն, քան աշխարհի բոլոր նախկին դեմոկրատիաները, սկսելու տասնյակ միլիոնավոր բանվորների և գյուղացիների ստեղծագործությունը սոցիալիզմի պրակտիկ իրագործման համար։

Բոլշևիզմը գործով ոգնեց պրոլետարական հեղափոխության զարգացմանը Յեվրոպայում ու Ամերի-

կայում, այնպես ուժգին կերպով, ինչպես մինչև այժմ վոչ մի յերկրում վոչ մի կուսակցության չեր հաջողվել ոգնել։ Այն ժամանակ, յերբ ամբողջ աշխարհի բանվորների համար որավուր պարզվում ե, վոր Շայդեմանների ու Կաուցկիների տակտիկան չեր փրկում իմպերիալիստական պատերազմից ու իմպերիալիստական բուրժուազիայի համար գոյություն ունեցող վարձու ստրկությունից, վոր այդ տակտիկան վորպես տիպար անպետք ե բոլոր յերկրների համար,— այդ ժամանակ բոլոր յերկրների պրոլետարների մասսաների համար որավուր պարզվում ե, վոր բոլշևիզմը պատերազմի և իմպերիալիզմի սարսափներից փրկվելու ճիշտ ուղի յե նշել, վոր բոլշևիզմը պիտանի յե վորպես տակտիկայի տիպար բոլորի համար:

Վոչ միայն համայնվրոպական, այլև համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը հասունանում ե բոլորի աչքի առաջ, և նրան ոգնեց, սատարեց, այն արագացրեց պրոլետարիատի հաղթանակը Ռուսաստանում։ Այս ամենը քի՞չ ե սոցիալիզմի լիակատար հաղթանակի համար։ Իհարկե, քիչ ե։ Մեկ յերկիրն ավելին չի կարող անել։ Բայց այդ մեկ յերկիրը, շնորհիվ Խորհրդային իշխանության, այնուամենայնիվ, այնքան ե արել, վոր նույնիսկ, յեթե վաղը համաշխարհային իմպերիալիզմը ճզմի ռուսական Խորհրդային իշխանությունը, ասենք, գերմանական ու ֆրանս-անգլիական իմպերիալիզմի համաձայնության միջոցով, նույնիսկ այդ վատ դեպքերից վատթարագույն դեպքում բոլշևիկյան տակտիկան ահագին ոգուտ բերած կլինի սոցիալիզմին և սատարած համաշխարհային անհաղթելի հեղափոխության աճմանը։

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻՆ ԾԱՌԱՅԱՐԿԵԼԸ* «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ» ՊԱՏՐՎԱԿՈՎ

Ինչպես ասվեց արդեն, Կաուցկու գիրքը պետք ե անվանվեր — յեթե վերնագիրը ճիշտ տար բովանդակությունը — վոչ թե «Պրոլետարիատի դիկտատուրա», այլ «Բոլշևիկների դեմ ուղղված բուրժուական հարձակումների կրկներգը»։

Մենշևիկների հին «թեորիաները» ռուսական հեղափոխության բուրժուական բնույթի մասին, այսինքն մարքսիզմի մենշևիկյան հին խեղաթյուրումը (վոր 1905 թ. մերժվե՛ց Կաուցկու կողմից), այժմ նորից վերանորոգում ե մեր տեսաբանը։ Ստիպված պիտի լինեմ կանգ առնել այս հարցի վրա, վորքան ել նա ձանձրալի լինի ռուսական մարքսիստների համար։

Ռուսական հեղափոխությունը բուրժուական ե,— ասում եյին Ռուսաստանի բոլոր մարքսիստները 1905 թվականից առաջ։ Մարքսիզմը նենգափոխելով լիբերալիզմով, մենշևիկներն այստեղից յեզրակացնում եյին. հետևաբար, պրոլետարիատը չպետք ե բուրժուազիայի համար ընդունելիից առաջ գնա, նա պետք ե վարի բուրժուազիայի հետ համաձայնություն կնքելու քաղաքականություն։ Բոլշևիկներն ասում եյին, վոր դա լիբերալ-բուրժուական թեորիա յե։ Բուրժուազիան ձգտում ե պետության բարեփոխություն կատարելու բուրժուականորեն, ռեֆորմիստորեն, և վոչ թե հեղափոխականորեն, ըստ հնարավորության պահպանելով և՛ միապետությունը, և՛ կալվածատիրական հողատիրությունը և այլն։ Պրոլետարիատը պետք ե մինչև նրա վերջը հասցնի բուրժուական-դեմոկրատական հեղափո-

* Ձեռագրում՝ «պաշտպանելը»։ Խմբ.:

խությունը, չթողնելով, որ իրեն «կապեն» բուրժուազիայի ռեֆորմիզմով։ Բոլշևիկներն այսպես եյին ձևակերպում բուրժուական հեղափոխության ժամանակ ուժերի դասակարգային հարաբերակցությունը. իրեն միացնելով գյուղացիությունը, պրոլետարիատը չեզոքացնում է լիբերալ բուրժուազիային և մինչև վերջը կործանում միապետությունը, միջնադարականությունը, կալվածատիրական հողատիրությունը։

Պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի մեջ էլ առհասարակ յերևան է գալիս հեղափոխության բուրժուական բնույթը, վորովհետև գյուղացիությունն առհասարակ մանր արտադրողներն են, վորոնք կանգնած են ապրանքային արտադրության հողի վրա։ Այնուհետև, հենց այն ժամանակ ավելացնում եյին բոլշևիկները, պրոլետարիատն իրեն է միացնում ամբողջ կիսապրոլետարիատը (բոլոր շահագործվողներին ու աշխատավորներին), չեզոքացնում միջին գյուղացիությունը և տապալում բուրժուազիային. դրանում է կայանում սոցիալիստական հեղափոխությունն՝ ի տարբերություն բուրժուական-դեմոկրատականից։ (Տես 1905 թվականի իմ բրոշյուրը՝ «Երկու տակտիկա», վոր արտատպված է «За 12 лет» ժողովածվում, Պետերբուրգ, 1907 թ.*)։

Կաուցկին 1905 թ. անուղղակի մասնակցեց այդ վիճաբանությանը, արտահայտվելով ի պատասխան այն ժամանակվա մենշևիկ Պլեխանովի հարցման, ըստ բանի էյության, ընդդեմ Պլեխանովի, մի բան, վոր այն ժամանակ հարուցեց բոլշևիկյան մամուլի հատուկ ծաղ-

* Տես Երկերի VIII հատ. (ռուս.), էջ 27—126։ Խմբ.

րը։* Այժմ Կաուցկին մի պստիկ բառով էլ չի մտաբերում այդ ժամանակվա վիճաբանությունները (վախենում է մերկացումից՝ իր իսկ հայտարարություններով) և դրանով գերմանական ընթերցողին զրկում է բանի էյությունն ըմբռնելու ամեն մի հնարավորությունից։ Պարոն Կաուցկին չէր կարող գերմանական բանվորներին 1918 թ. պատմել այն մասին, թե ինչպես ինքը 1905 թվականին կողմնակից էր բանվորների՝ գյուղացիների և վոչ թե լիբերալ բուրժուազիայի հետ կընքելիք դաշինքի, և թե ինչ պայմաններով էր նա պաշտպանում այդ դաշինքը, ինչ ծրագիր նախագծում այդ դաշինքի համար։

Ընկրկելով, Կաուցկին «տնտեսական վերլուծության» պատրվակով, «պատմական մատերիալիզմի» մասին հպարտ ֆրազներով, այժմ պաշտպանում է բանվորների յենթարկումը բուրժուազիային, մենշևիկ Մասլովից վերցրած մեջբերումների օգնությամբ ծամծմելով մենշևիկների հին լիբերալ հայացքները,—ընդսմին մեջբերումներով ապացուցվում է Ռուսաստանի հետամնացության

* Վլ. Ի. նկատի ունի Կաուցկու «Ռուսական հեղափոխության շարժիչ ուժերն ու հեռանկարները» հոդվածը։ Կաուցկին այդտեղ գրում էր. «Բուրժուազիան Ռուսաստանում չի պատկանում արդի հեղափոխական շարժման շարժիչ ուժերի թվին, և այնչափով այդ շարժումը չի կարող կոչվել բուրժուական... Ուրեմն ինչ դասակարգի վրա կարող է հենվել իր հեղափոխական պայքարում ռուսական պրոլետարիատը... Հեղափոխական պայքարի ամբողջ շրջանում շահերի հաստատուն ընդհանրություն գոյություն ունի միայն պրոլետարիատի և գյուղացիության միջև։ Այդ էլ հենց պետք է հիմք դառնա սոցիալ-դեմոկրատիայի ամբողջ հեղափոխական տակտիկայի համար» (К. Каутский. «Движущие силы и перспективы русской революции». Под. ред. и с предисловием В. И. Ленина. Гиз. М.—Л., 1926, էջ 27—28)։ Խմբ.

խությունը, չթողնելով, որ իրեն «կապեն» բուրժուազիայի ռեֆորմիզմով։ Բոլշևիկներն այսպես էին ձևակերպում բուրժուական հեղափոխության ժամանակ ուժերի դասակարգային հարաբերակցությունը. իրեն միացնելով գյուղացիությունը, պրոլետարիատը չեզոքացնում է լիբերալ բուրժուազիային և մինչև վերջը կործանում միապետությունը, միջնադարականությունը, կալվածատիրական հողատիրությունը։

Պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի մեջ էլ առհասարակ յերևան է գալիս հեղափոխության բուրժուական բնույթը, վորովհետև գյուղացիությունն առհասարակ մանր արտադրողներն են, վորոնք կանգնած են ապրանքային արտադրության հողի վրա։ Այնուհետև, հենց այն ժամանակ ավելացնում էին բոլշևիկները, պրոլետարիատն իրեն է միացնում ամբողջ կիսապրոլետարիատը (բոլոր շահագործվողներին ու աշխատավորներին), չեզոքացնում միջին գյուղացիությունը և տապալում բուրժուազիային. դրանում է կայանում սոցիալիստական հեղափոխությունն՝ ի տարբերություն բուրժուական-դեմոկրատականից։ (Տես 1905 թվականի իմ բրոշյուրը՝ «Յերկու տակտիկա», վոր արտատպված է «За 12 лет» ժողովածվում, Պետերբուրգ, 1907 թ.*)։

Կաուցկին 1905 թ. անուղղակի մասնակցեց այդ վիճաբանությանը, արտահայտվելով ի պատասխան այն ժամանակվա մենշևիկ Պլեխանովի հարցման, ըստ բանի էության, ընդդեմ Պլեխանովի, մի բան, վոր այն ժամանակ հարուցեց բոլշևիկյան մամուլի հատուկ ծաղրը։* Այժմ Կաուցկին մի պստիկ բառով էլ չի մտաբերում այդ ժամանակվա վիճաբանությունները (վախենում է մերկացումից՝ իր իսկ հայտարարություններով) և դրանով գերմանական ընթերցողին զրկում է բանի էությունն ըմբռնելու ամեն մի հնարավորությունից։ Պարոն Կաուցկին չեր կարող գերմանական բանվորներին 1918 թ. պատմել այն մասին, թե ինչպես ինքը 1905 թվականին կողմնակից էր բանվորների՝ գյուղացիների և վոչ թե լիբերալ բուրժուազիայի հետ կընքելիք դաշինքի, և թե ինչ պայմաններով էր նա պաշտպանում այդ դաշինքը, ինչ ծրագիր նախագծում այդ դաշինքի համար։

Ընկրկելով, Կաուցկին «տնտեսական վերլուծության» պատրվակով, «պատմական մատերիալիզմի» մասին հպարտ ֆրազներով, այժմ պաշտպանում է բանվորների յենթարկումը բուրժուազիային, մենշևիկ Մասլովից վերցրած մեջբերումների ոգնությամբ ծամծմելով մենշևիկների հին լիբերալ հայացքները,—ընդսմին մեջբերումներով ապացուցվում է Ռուսաստանի հետամնացության

* Տես Յերկերի VIII հատ. (ռուս.), էջ 27—126։ Խմբ։

* Վլ. Ի. նկատի ունի Կաուցկու «Ռուսական հեղափոխության շարժիչ ուժերն ու հեռանկարները» հոդվածը։ Կաուցկին այդտեղ գրում էր. «Բուրժուազիան Ռուսաստանում չի պատկանում արդի հեղափոխական շարժման շարժիչ ուժերի թվին, և այնչափով այդ շարժումը չի կարող կոչվել բուրժուական... Ուրեմն ինչ դասակարգի վրա կարող է հենվել իր հեղափոխական պայքարում ռուսական պրոլետարիատը... Հեղափոխական պայքարի ամբողջ շրջանում շահերի հաստատուն ընդհանրություն գոյություն ունի միայն պրոլետարիատի և գյուղացիության միջև։ Այդ էլ հենց պետք է հիմք դառնա սոցիալ-դեմոկրատիայի ամբողջ հեղափոխական տակտիկայի համար» (К. Каутский. «Движущие силы и перспективы русской революции». Под. ред. и с предисловием В. И. Ленина. Гиз. М.—Л., 1926, էջ 27—28)։ Խմբ։

նոր միտքը, իսկ այդ նոր մտքից արվում է հին յեզրակացություն այն վոգով, թե երբ բուրժուական հեղափոխության ժամանակ չպետք է գնալ բուրժուազիայից առաջ: Յեվ դա հակառակ այն ամենի, ինչ վոր ասում եյին Մարքսն ու Ենգելսը, համեմատելով Ֆրանսիայի 1789—1793 թ. բուրժուական հեղափոխությունը Գերմանիայի 1848 թ. բուրժուական հեղափոխության հետ*:

Նախքան Կաուցկու գլխավոր «փաստարկին» ու «տնտեսական վերլուծության» գլխավոր բովանդակության անցնելը, նշենք, վոր առաջին իսկ նախադասու-

---

* Վլ. Ի. նկատի ունի Մարքսի առաջնորդող հոդվածը՝ «Պրուսական հեղափոխության հաշվեկշիռը» «Նոր Հռենոսյան Լրագրի» 1848 թ. դեկտեմբերի 11-ի համարում («Neue Rheinische Zeitung»)։ Մարքսը գրում եր. «Պրուսական մարտյան հեղափոխությունը չպետք է շփոթել վոչ 1648 թ. անգլիական հեղափոխության, վոչ 1789 թ. ֆրանսական հեղափոխության հետ: Այդ յերկու հեղափոխության մեջ ել բուրժուազիան իրոք մի դասակարգ եր, վորը շարժման գլուխ եր կանգնած։ Պրոլետարիատն ու քաղաքացիների այն ֆրակցիաները, վորոնք չեյին պատկանում բուրժուազիային, կամ դեռևս չունեյին բուրժուազիայի շահերի հետ չհամընկնող շահեր, կամ դեռևս չեյին զարգացել մինչ ինքնուրույն դասակարգերի կամ յենթադասակարգերի աստիճանը ... Գերմանական բուրժուազիան այնքան ծույլ, ծանրաշարժ ու դանդաղ եր զարգանում, վոր այն րոպեյին, յերբ նա ահարկու կերպով յելավ ընդդեմ ֆեոդալիզմի ու աբսոլյուտիզմի, նա ինքն ընդհարվեց ահարկու կերպով նրա դեմ յելած պրոլետարիատի և քաղաքացիների այն բոլոր ֆրակցիաների հետ, վորոնց շահերն ու գաղափարներն ազգակից եյին պրոլետարիատին ... Պրուսական բուրժուազիան 1789 թ. ֆրանսականի նման դասակարգ չեր, վորը հանդիսանում եր իրեն ժամանակակից ամբողջ հասարակության ներկայացուցիչը, հակակայելով հին հասարակության ներկայացուցիչներին, արքայական իշխանությանն ու ազնվականությանը» («К. Маркс и ф. Энгельс в эпоху немецкой революции (1848—1850)». Очерки и статьи, собранные Ф. Мерингом. М. Гиз, 1926, եջ 221—222)։ Խմբ.:

թյունները յերևան են բերում հեղինակի մտքերի տարորինակ շփոթությունը կամ մտքերի թերամտածվածությունը.

«Ռուսաստանի տնտեսական հիմք—ազդարարում է մեր «տեսաբանը»—մինչև այսօր հանդիսանում է գյուղատնտեսությունը և այն ել գյուղացիական մանր արտադրությունը։ Նրանով ապրում է բնակչության մոտ $^4/_5$, դուցե նույնիսկ $^5/_6$-ը» (եջ 45)։

Նախ, սիրալիր տնտեսաբան, մտածե՞լ եք արդյոք դուք, թե մանր արտադրողների այդ մասսայի մեջ վորքան շահագործող կարող է լինել: Իհարկե, նրանց թիվը $^1/_{10}$-ից վոչ ավելին, իսկ քաղաքներում ել ավելի պակաս, վորովհետև այնտեղ ավելի յե զարգացած խոշոր արտադրությունը: Վերցրեք նույնիսկ անհավանական բարձր թվանշան, յենթադրեցեք, վոր մանր արտադրողների $^1/_5$-ը շահագործողներ են, վորոնք կորցնում են ընտրական իրավունքը: Յեվ այն ժամանակ դուք կըստանաք, վոր Խորհուրդների V համագումարում 66% կազմող բոլշևիկները ներկայացնում եյին բնակչության մեծամասնությունը: Իսկ դրան պետք է նույնպես ավելացնել, վոր ձախ եսերների մեջ միշտ մի խոշոր մաս կողմնակից է յեղել Խորհրդային իշխանության, այսինքն սկզբունքով բոլոր ձախ եսերները կողմնակից եյին Խորհրդային իշխանության, իսկ յերբ ձախ եսերների մի մասը 1918 թ. հուլիսին դիմեց ապստամբության-ավանտյուրայի, նրանցից նրանց նախկին կուսակցությունից բաժանվեցին յերկու նոր կուսակցություն՝ «Նարոդնիկ կոմունիստների» և «հեղափոխական կոմունիստների» (ականավոր ձախ եսերներից, վորոնց դեռևս հին կուսակցությունն եր առաջ քաշում պետական կարևորագույն պոստերի համար,—առաջիններին պատկանում է, որինակ, Զաքսը, յերկրորդին՝ Կոլեգաևը): Հետևաբար, Կաուցկին ինքը—անակնկալ կերպով—հերքեց այն ծիծաղա-

շարժ հեքիաթը, թե իբր բոլշևիկների հետևը կանգնած է բնակչության փոքրամասնությունը։

2-րդ։ Սիրալիր տեսաբան, արդյոք մտածե՞լ եք դուք այն մասին, վոր գյուղացիական մանր արտադրողն անխուսափելիորեն տատանվում է պրոլետարիատի և բուրժուազիայի միջև։ Յեվրոպայի ամբողջ նորագույն պատմությամբ հաստատված այս մարքսիստական ճշմարտությունը Կաուցկին շատ ի դեպ է «մոռացել», վորովհետև նա ջարդուփշուր է անում Կաուցկու կողմից կրկնվող՝ մենշևիկյան ամբողջ «թեորիան»։ Յեթե Կաուցկին «չմոռանար» այդ, նա չեր կարողանա բացասել պրոլետարական դիկտատուրայի անհրաժեշտությունը մի յերկրում, վորտեղ գերակշռում են գյուղացիական մանր արտադրողները։

Քննարկենք մեր տեսաբանի «տնտեսական վերլուծության» գլխավոր բովանդակությունը։

Վոր Խորհրդային իշխանությունը դիկտատուրա յե, դա անվիճելի յե, ասում է Կաուցկին։

«Բայց արդյոք պրոլետարիատի՞ դիկտատուրա յե դա» (եջ 34)։

«Գյուղացիները, ըստ Խորհրդային սահմանադրության, կազմում են օրենսդրությանն ու կառավարմանը մասնակցելու իրավունք ունեցող բնակչության մեծամասնությունը։ Այն, ինչ վոր մեր առջև ցուցադրում են վորպես պրոլետարիատի դիկտատուրա, դուրս կգար, յեթե դա անցկացվեր հետևողականորեն և յեթե մի դասակարգ, առհասարակ ասած, կարողանար անմիջականորեն իրագործել դիկտատուրան, մի բան, վոր իրագործելի յե կուսակցության համար միայն,—դուրս կգար գյուղացիության դիկտատուրա» (եջ 35)։

Յեվ այսքան խորիմաստ ու սրամիտ դատողությունից խիստ գոհ Կաուցկին փորձ է անում սրախոսելու.

«Կարծես թե այնպես է դուրս գալիս, վոր սոցիալիզմի ամենից ավելի անցավազին իրագործումն ապահովված է այն ժամանակ, յերբ նա տրվում է գյուղացիների ձեռքը» (եջ 35)։

Մեր տեսաբանն ամենամանրամասն կերպով՝ կիսալիբերալ Մասլովից վերցրած մի շարք չափազանց գիտնական քաղվածքներով ապացուցում է նոր միտք այն մասին, վոր գյուղացիները շահագրգռված են հացի բարձր գների, քաղաքային բանվորների ցածր աշխատավարձի մեջ և այլն և այլն։ Այս նոր մտքերն, իդեպ ասած, այնքան ավելի ձանձրալի յեն շարադրված, վորքան պակաս է ուշադրություն դարձված հետպատերազմյան ժամանակի իրոք նոր յերևույթների վրա, օրինակ, այն բանի վրա, վոր գյուղացիները հացի դիմաց պահանջում են վոչ թե փող, այլ ապրանքներ, վոր գյուղացիներն այնպիսի գործիքների պակաս են զգում, վորոնք անհրաժեշտ թվով ճարել չի կարելի վոչ մի փողով։ Այս մասին դեռ հատուկ կխոսենք ստորև։

Այսպիսով, Կաուցկին մեղադրում է բոլշևիկներին, պրոլետարիատի կուսակցությանը նրա համար, վոր սա դիկտատուրան, սոցիալիզմն անցկացնելու գործը տվել է մանր-բուրժուական գյուղացիության ձեռքը։ Հիանալի՜ յե, պարոն Կաուցկի։ Ապա, ձեր լուսավորված կարծիքով, ի՞նչ հարաբերություններ պետք է լինեյին պրոլետարական կուսակցության ու մանր-բուրժուական գյուղացիության միջև։

Այդ մասին մեր տեսաբանը գերադասել է լռել,— յերևի, մտաբերելով առածը՝ «խոսքն արծաթ է, լռությունը՝ վոսկի»։ Բայց Կաուցկին իրեն մատնել է հետևյալ դատողությամբ.

«Խորհրդային հանրապետության սկզբում գյուղացիական Խորհուրդները ներկայացնում եյին առհասարակ գյուղացիության կազ-

մակերպությունները: Այժմ այդ հանրապետությունն ազդարարում ե, վոր Խորհուրդները ներկայացնում են պրոլետարների և չքավոր գյուղացիների կազմակերպությունները: Ունևորները կորցնում են Խորհուրդներ ընտրելու իրավունքը: Չքավոր գյուղացին այստեղ ճանաչվում ե սոցիալիստական ագրարային ռեֆորմի մշտական ու զանգվածային արդյունքը «պրոլետարիատի դիկտատուրայի» ոգով»)եջ 48):

Վորպիսի՜ սպանիչ հեգնանք: Ռուսաստանում այն լսել կարելի յե ամեն մի բուրժուայից. Նրանք բոլորն ել չարախնդում են ու ծիծաղում, վոր Խորհրդային հանրապետությունը բացահայտ կերպով խոստովանում ե չքավորագույն գյուղացիների գոյությունը: Նրանք ծիծաղում են սոցիալիզմի վրա: Դա նրանց իրավունքն ե: Բայց այն «սոցիալիստը», վորը ծիծաղում ե այն բանի վրա, վոր քառամյա ամենաավերիչ պատերազմից հետո մեզանում մնում են — և յերկար ժամանակ կմնան — չքավորագույն գյուղացիներ, այդպիսի «սոցիալիստը» կարող եր ծնվել միմիայն մասսայական ռենեգատության պայմաններում:

Շարունակությունը լսեցեք.

«... Խորհրդային հանրապետությունը միջամտում ե հարուստ և չքավոր գյուղացիների հարաբերություններին, բայց վոչ թե հողի նոր բաշխման միջոցով: Քաղաքացիների հացի կարիքը վերացնելու համար գյուղերն են ուղարկվում զինված բանվորների ջոկատներ, վորոնք հարուստ գյուղացիներից խլում են հացի ավելցուկները: Այդ հացի մի մասը տրվում ե քաղաքային բնակչությանը, մյուսը՝ չքավորագույն գյուղացիներին» (եջ 48):

Հասկանալի յե, սոցիալիստ և մարքսիստ Կաուցկին խորապես վրդովված ե այն մտքից, վոր այսպիսի միջոցը կարող ե տարածվել ավելի հեռու, քան մեծ քաղաքի շրջակայքներն են (իսկ մեզանում նա տարածվում ե ամբողջ յերկրով մին): Սոցիալիստ ու մարքսիստ

Կաուցկին խրատական շեշտով, ֆիլիստերի անման, անզուգական, սքանչելի սառնասրտությամբ (կամ բթամտությամբ) նկատում ե.

«... Նրանք (ունևոր գյուղացիների եքսպրոպրիացիաները) մտցնում են արտադրության պրոցեսի մեջ անհանգստության և քաղաքացիական պատերազմի նոր տարր» ... («արտադրության պրոցեսի մեջ» մտցվող քաղաքացիական պատերազմ, սա արդեն ինչ-վոր գերբնական բան ե) ... «վորպիսի պրոցեսն իր առողջացման համար անհրաժեշտաբար կարիք ունի հանգստության ու անվտանգության» (եջ 49):

Այո, այո, մարքսիստ և սոցիալիստ Կաուցկին, իհարկե, պետք ե հառաչի ու արցունք թափի չարաշահություն անող այն շահագործողների հանգստության ու անվտանգության համար, վորոնք թաքցնում են այդ հացի ավելցուկները, վիժեցնում հացի մոնոպոլիայի որենքը, սովի հասցնում քաղաքների բնակչությանը: Մենք բոլորս սոցիալիստներ ենք և մարքսիստներ ու ինտերնացիոնալիստներ — խմբով ճչում են պարոնայք Կաուցկիները, Հայնրիխ Վեբերները (Վիեննա), Լոնգեն (Փարիզ), Մակդոնալդը (Լոնդոն) և այլն — մենք բոլորս կողմնակիցներ ենք բանվոր դասակարգի հեղափոխության, միայն ... միայն այնպես, վոր չխախտենք հացով չարաշահություն անողների հանգիստն ու անվտանգությունը: Յեվ այս կեղտոտ ծառայարկումը կապիտալիստներին մենք քողարկում ենք «արտադրության պրոցեսի» «մարքսիստական» հիշատակումով ... Յեթե սա մարքսիզմ ե, ապա ել ի՞նչն ե կոչվում լաքեյություն բուրժուազիայի առաջ:

Տեսեք, թե ինչ ստացվեց մեր տեսաբանի մոտ: Նա բոլշևիկներին մեղադրում ե նրա համար, վոր նրանք գյուղացիության դիկտատուրան պրոլետարիատի դիկ-

տատուրայի տեղ են անցկացնում։ Յեվ միևնույն ժամանակ նա մեզ մեղադրում է նրա համար, վոր մենք քաղաքացիական պատերազմ ենք մտցնում գյուղը (դա մենք համարում ենք մեր վաստակը), վոր մենք զինված բանվորների ջոկատներ ենք ուղարկում գյուղ, և այդ բանվորները բացահայտ կերպով ազդարարում են, վոր իրագործում են «պրոլետարիատի և չքավորագույն գյուղացիության դիկտատուրան», ոգնում են այդ գյուղացիությանը, չարաշահներից, հարուստ գյուղացիներից եքսպրոպրիացիայի յեն յենթարկում հացի ավելցուկները, վոր նրանք թաքցնում են, խախտելով հացի մոնոպոլիայի որենքը։

Մի կողմից, մեր մարքսիստ-տեսաբանը կողմնակից է զուտ դեմոկրատիայի, վոր հեղափոխական դասակարգը՝ աշխատավորների և շահագործվողների առաջնորդը յենթարկվի բնակչության մեծամասնությանը (հետևաբար և շահագործողները ներառյալ)։ Մյուս կողմից, նա մեր դեմ պարզաբանում է հեղափոխության բուրժուական բնույթի անխուսափելիությունը, բուրժուական այն պատճառով, վոր գյուղացիությունն ամբողջովին վերցրած՝ կանգնած է բուրժուական հասարակական հարաբերությունների հողի վրա, և միևնույն ժամանակ հավակնություն ունի պրոլետարական, դասակարգային, մարքսիստական տեսակետի պաշտպանը լինելու։

«Տնտեսական վերլուծության» փոխարեն դա շիլափլավ է և առաջին տեսակի խառնաշփոթություն։ Մարքսիզմի փոխարեն դա լիբերալ ուսմունքների պատառիկներ են և բուրժուազիայի ու կուլակների հանդեպ լաքեյության քարոզ։

Կաուցկու խճճած հարցը բոլշևիկներն արդեն 1905 թ. պարզաբանել են լիովին։ Այո, մեր հեղափոխությունը բուրժուական է, քանի վոր մենք գյուղացիության, իբրև ամբողջի, հետ միասին ենք գնում։ Դա մենք պարզից պարզ ենք գիտակցել, 1905 թվականից սկսած հարյուրավոր ու հազարավոր անգամներ ասել ենք, յերբեք չենք փորձել պատմական պրոցեսի այդ անհրաժեշտ աստիճանի վրայով ցատկել, վոչ էլ դեկրետներով վերացնել այն։ Մեզ այս կետում «մերկացնելու» Կաուցկու ճիգերը մերկացնում են միայն նրա հայացքների խառնաշփոթությունը ու նրա վախը՝ մտաբերելու այն, ինչ վոր նա գրում էր 1905 թ., յերբ դեռևս ռենեգատ չէր։

Բայց 1917 թվականին ապրիլ ամսից սկսած, Հոկտեմբերյան հեղափոխությունից շատ առաջ, մինչև մեր իշխանության վերցնելը, մենք բացահայտորեն ասում եյինք ու պարզաբանում ժողովրդին. հեղափոխությունը սրա վրա այժմ չի կարողանա կանգ առնել, վորովհետև յերկիրն առաջ է գնացել, կապիտալիզմը քայլել է դեպի առաջ, ավերումը հասել է չտեսնված չափերի, վորը կպահանջի (կամենում է արդյոք դա վորևէ մեկը, թե վոչ), կպահանջի քայլեր դեպի առաջ, դեպի սոցիալիզմ։ Վորովհետև այլ կերպ չի կարելի առաջ գնալ, պատերազմից խոշտանգված յերկիրը փրկել, աշխատավորների և շահագործվողների տանջանքները թեթևացնել։

Ստացվեց հենց այնպես, ինչպես մենք եյինք ասում։ Հեղափոխության ընթացքը հաստատեց մեր դատողության ճշտությունը։ Նախ, «ամբողջ» գյուղացիության հետ միասին ընդդեմ միապետության, ընդդեմ կալվածատերերի, ընդդեմ միջնադարականության (և այդ չափով հեղափոխությունը մնում է բուրժուական, բուր-

ժուական-դեմոկրատական): Այնուհետև, չքավորագույն գյուղացիության հետ միասին, կիսապրոլետարիատի հետ միասին, բոլոր շահագործվողների հետ միասին ընդդեմ կապիտալիզմի, այդ թվում ընդդեմ գյուղական հարուստների, կուլակների, չարաշահների, և այդ չափով հեղափոխությունը դառնում է սոցիալիստական: Փորձել մեկի և մյուսի միջև արհեստական չինական պատ դնել, նրանց միմյանցից բաժանել որևէ այլ բանով, բացի պրոլետարիատի նախապատրաստության աստիճանից և գյուղացիական չքավորության հետ նրա միավորման աստիճանից՝ մարքսիզմի մեծագույն խեղաթյուրումն է, նրա գռեհկացումը, փոխարինումը լիբերալիզմով: Դա կնշանակեր միջնադարականության նկատմամբ բուրժուազիայի առաջադիմականության իբր-գիտնական հիշատակումով անցկացնել սոցիալիստական պրոլետարիատի նկատմամբ ռեակցիոն պաշտպանությունը բուրժուազիայի:

Խորհուրդները, ի միջի այլոց, հենց այն պատճառով են ներկայացնում դեմոկրատիայի անչափ ավելի բարձր ձևն ու տիպը, որ միավորելով ու քաղաքականության մեջ քաշելով բանվորների և գյուղացիների մասսան, նրանք տալիս են «ժողովրդին» ամենից մոտիկ (այն իմաստով, ինչ իմաստով Մարքսը 1871 թվականին խոսում էր իրոք ժողովրդական հեղափոխության մասին)*, ամենազգայուն ծանրաչափը մասսաների քաղաքական, դասակարգային հասունության զարգացման ու աճման: Խորհրդային սահմանադրությունը չի գրվել որևէ «պլանով», չի կազմվել առանձնասենյակներում, չի փաթաթվել բուրժուական իրավաբանների կողմից աշխատավորների շլնքին: Ո՛չ, այդ սահմանադրությունն աճել է դասակարգային պայքարի զարգացման ընթացքից՝ դասակարգային հակասությունների հասունացման զուգընթաց: Այդ ապացուցում են հենց այն փաստերը, որոնք հարկադրված է ընդունել Կաուցկին:

Խորհուրդներն սկզբում միավորում էին գյուղացիությունն ամբողջությամբ վերցրած: Հենց չքավորագույն գյուղացիների անզարգացածությունը, հետամնացությունը, մթությունը կուլակների, հարուստների, կապիտալիստների, մանր բուրժուազիայի, մանր-բուրժուական մտավորականների ձեռքն էին տալիս ղեկավարությունը: Դա մանր բուրժուազիայի, մենշևիկների և սոցիալիստ-հեղափոխականների տիրապետության ժամանակն էր (սոցիալիստներ համարել դրանց կարող են կամ հիմարները, կամ Կաուցկու նման ռենեգատները): Մանր բուրժուազիան անհրաժեշտորեն, անխուսափելիորեն տատանվում էր բուրժուազիայի դիկտատուրայի (Կերենսկի, Կոռնիլով, Սավինկով) և պրոլետարիատի դիկտատուրայի միջև, որովհետև մանր բուրժուազիան իր տնտեսական դրության արմատական հատկություններով որևէ ինքնուրույն բանի

* Վլ. Ի. նկատի ունի Կուգելմանին 1871 թ. ապրիլի 12-ին գրած՝ Մարքսի նամակի հետևյալ տեղը. «Յեթե դու նայես «Բրյումերի 18-ի» վերջին գլուխը, ապա կտեսնես, որ, իմ կարծիքով, Ֆրանսիական հեղափոխության մերձավորագույն փորձը կլինի մի փորձ ոչ թե բյուրոկրատական-ռազմական մեքենան մեկ ձեռքից մյուսը տալու, ինչպես այդ յեղել է մինչև այժմ, այլ կոտրելու այդ մեքենան: Հենց այսպիսին է ամեն մի իրոք ժողովըրդական հեղափոխության նախնական պայմանը մայր ցամաքում: Այդպիսին է հենց մեր հերոսական փարիզյան ընկերների փորձը» (К. Маркс. Письма к Л. Кугельману. Перевод с немецкого М. Ильиной, под редакцией и с предисловием Н. Ленина Изд. «Новая Дума», Петербург, 1907. էջ 88): Խմբ.:

ընդունակ չէ։ Ի դեպ ասած, Կաուցկին լիովին հրաժարվում է մարքսիզմից, ռուսական հեղափոխության վերլուծության ժամանակ ոձիք թափելով «դեմոկրատիա» իրավաբանական, ձևական, բուրժուազիային սրա տիրապետության քողարկման և մասսաների խաբեության համար ծառայող հասկացողությամբ և մոռանալով այն, վոր «դեմոկրատիան» իրոք յերբեմն արտահայտում է բուրժուազիայի դեմոկրատիան, յերբեմն այդ դիկտատուրային յենթարկվող քաղքենիության անզոր ռեֆորմիզմը և այլն։ Կաուցկու մոտ այնպես է դուրս գալիս, վոր կապիտալիստական յերկրում կային բուրժուական կուսակցություններ, կար պրոլետարիատը, վոր իր հետևից տանում էր պրոլետարիատի մեծամասնությունը, նրա մասսային (բոլշևիկներ), բայց չե՞ն յեղել մանր-բուրժուական կուսակցություններ։ Մենշևիկներն ու էսէռները չե՞ն ունեցել դասակարգային արմատներ, մանր-բուրժուական արմատներ։

Մանր բուրժուազիայի, մենշևիկների և էսէռների տատանումները լուսավորեցին մասսաներին և այդպիսի «առաջնորդներից» վանեցին այդ մասսաների ահագին մեծամասնությունը, բոլոր «ներքնախավերը», բոլոր պրոլետարներին ու կիսապրոլետարներին։

Խորհուրդներում գերակշռություն ստացան (Պետերբուրգում և Մոսկվայում 1917 թ. հոկտեմբերի նախօրյակին) բոլշևիկները, էսէռների և մենշևիկների մեջ ուժեղացավ պառակտումը։

Հաղթանակած բոլշևիկյան հեղափոխությունը նշանակում էր տատանումների վերջ, նշանակում էր լիակատար կործանում միապետության և կալվածատիրական հողատիրության (նա մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը կործանված չէր)։ Մենք մինչև վերջը

հասցրինք բուրժուական հեղափոխությունը։ Գյուղացիությունն ամբողջությամբ վերցրած գնում էր մեր հետևից։ Նրա հակամարտությունը սոցիալիստական պրոլետարիատի նկատմամբ չէր կարող յերևան գալ մի վայրկյանում։ Խորհուրդները միավորում էին գյուղացիությունն առհասարակ։ Դասակարգային բաժանումը գյուղացիության ներսում դեռևս չէր հասունացել, դեռևս չէր դրսևորվել։

Այդ պրոցեսը զարգացավ 1918 թվականի ամառն ու աշնանը։ Չեխո-սլովակյան հակահեղափոխական ապստամբությունն արթնացրեց կուլակներին։ Ռուսաստանով անցավ կուլակային ապստամբությունների ալիքը։ Չքավորագույն գյուղացիությունը վոչ թե գրքերից, վոչ թե լրագրերից, այլ կյանքից էր սովորում իր և կուլակների, գյուղական հարուստների, գյուղական բուրժուազիայի շահերի անհաշտելիությունը։ «Ձախ էսէռները», վորպես ամեն մի մանր-բուրժուական կուսակցություն, արտացոլում էին մասսաների տատանումները, և նրանք հենց 1918 թ. ամառը պառակտվեցին. մի մասը գնաց չեխո-սլովակների հետ միասին (ապստամբությունը Մոսկվայում, յերբ Պռոշյանը, գրավելով հեռագրատունը—մի ժամով-ծանուցում էր Ռուսաստանին բոլշևիկների տապալման մասին, այնուհետև չեխո-սլովակների դեմ գործող բանակի հրամանատար Մուրավյովի դավաճանությունը և այլն),— վերն անվանված մասը մնաց բոլշևիկների հետ։

Պարենային կարիքի սրումը քաղաքներում ավելի ու ավելի կտրուկ էր դնում հացի մոնոպոլիայի հարցը (այդ մասին «մոռացել» է տեսաբան Կաուցկին իր տնտեսական վերլուծության մեջ, վորը կրկնում է տա-

սը տարի առաջ Մասլովի մոտ կարդացած հին մտքերը)։

Հին, կալվածատիրական ու բուրժուական, նույնիսկ դեմոկրատական-հանրապետական պետությունը գյուղ եր ուղարկում զինված ջոկատներ, վորոնք փաստորեն գտնվում եյին բուրժուազիայի տրամադրության տակ։ Պարոն Կաուցկին այդ չգիտե։ Դրանում նա չի տեսնում «Բուրժուազիայի դիկտատուրա», քավ լիցի։ Դա «զուտ դեմոկրատիա» յե, մանավանդ յեթե դա ստանար բուրժուական պառլամենտի հավանությունը։ Կաուցկին «չի լսել», նա լռում ե այն մասին, թե ինչպես Ավքսենտյեվն ու Ս. Մասլովը Կերենսկիների, Ծերեթելիների և այլ եսերների ու մենշևիկների ընկերակցությամբ 1917 թ. ամառն ու աշնանը ձերբակալում եյին հողային կոմիտեների անդամներին։

Ամբողջ բանն այն ե, վոր դեմոկրատական հանրապետության միջոցով բուրժուազիայի դիկտատուրան իրագործող բուրժուական պետությունը չի կարող ժողովրդի առաջ խոստովանել, վոր ինքը ծառայում ե բուրժուազիային, չի կարող ասել ճշմարտությունը, ստիպված ե կեղծավորել։

Իսկ կոմունայի տիպի պետությունը, խորհրդային պետությունը, ուղղակի և բացահայտ կերպով ժողովրդին ասում ե ճշմարտությունը, հայտարարելով, վոր ինքը պրոլետարիատի և չքավորագույն գյուղացիության դիկտատուրան ե, հենց այս ճշմարտությամբ դեպի ինքը քաշելով տասնյակ ու տասնյակ միլիոնավոր նոր քաղաքացիներ, վորոնք ամեն մի դեմոկրատական հանրապետության որով ընկճված են, վորոնք ներգրավվում են քաղաքականության մեջ, դեմոկրատիայի մեջ, Խորհուրդների կողմից կառավարվող պետու-

թյան գործերի մեջ։ Խորհրդային իշխանությունը գյուղերն ե ուղարկում զինված բանվորների ջոկատներ,—առաջին հերթին ավելի առաջավորներին, մայրաքաղաքներից։ Այդ բանվորները սոցիալիզմ են տանում գյուղը, իրենց կողմը գրավում չքավորներին, կազմակերպում են ու լուսավորում նրանց, օգնում են նրանց ճնշելու բուրժուազիայի դիմադրությունը։

Բոլոր գործը գիտցողներն ու գյուղում յեղածներն ասում են, վոր մեր գյուղը միայն 1918 թ. ամառն ու աշնանն ե ինքը ապրում «Հոկտեմբերյան» (այսինքն պրոլետարական) «հեղափոխություն»։ Վրա յե հասնում բեկումը։ Կուլակային ապստամբությունների ալիքին փոխարինում են չքավորների վերելքը, «չքավորության կոմիտեների» աճումը։ Բանակի մեջ աճում ե կոմիսար-բանվորների, բանվոր-սպաների, դիվիզիաների և բանակների բանվոր-հրամանատարների թիվը։ Այն ժամանակ, յերբ * Կաուցկին հուլիսյան (1918 թ.) ճգնաժամից ու բուրժուազիայի կականից վախեցած լաքեյի նման վազում ե բուրժուազիայի հետևից և գրում ե մի ամբողջ բրոշյուր, վոր տոգորված ե այն համոզմունքով, թե բոլշևիկները գտնվում են իրենց տապալման նախորեյին՝ գյուղացիության կողմից, այն ժամանակ, յերբ Կաուցկին ** ձախ եսերների բաժանվելու մեջ տեսնում ե բոլշևիկներին սատարողների շրջանի «նեղացում» (եջ 37),—այդ ժամանակ բոլշևիզմի կողմնակիցների իրական շրջանն աճում ե անըրնդգրկելիորեն, վորովհետև ինքնուրույն քաղաքական կյանքի համար արթնանում են տասնյակ

* Ձեռագրում այնուհետև գրված ե. «հիմար»։ Խմբ.:

** Ձեռագրում. «այդ հիմարը»։ Խմբ.:

ու տասնյակ միլիոնավոր գյուղական չքավորներ, ազատվելով կուլակների ու գյուղական բուրժուազիայի խնամակալությունից և ազդեցությունից։

Մենք կորցրինք հարյուրավոր ձախ էսէռներ, կամազուրկ մտավորականներ ու գյուղացի կուլակներ, մենք ձեռք բերինք չքավորության միլիոնավոր ներկայացուցիչներ *)։

Մայրաքաղաքներում տեղի ունեցած պրոլետարական հեղափոխությունից մի տարի անց, նրա ազդեցության տակ ու նրա օգնությամբ սկսվեց պրոլետարական հեղափոխությունը գյուղական խուլ ծայրամասերում, որը վերջնականապես ամրացրեց Խորհրդային իշխանությունն ու բոլշևիզմը, վերջնականապես ապացուցեց, որ երկրի ներսում չկան ուժեր նրա դեմ։

Ավարտելով բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունն առհասարակ գյուղացիության հետ միասին, Ռուսաստանի պրոլետարիատը վերջնականապես անցավ սոցիալիստական հեղափոխության, երբ նրան հաջողվեց պառակտել գյուղը, իրեն միացնել նրա պրոլետարներին ու կիսապրոլետարներին, միավորել նրանց ընդդեմ կուլակների և բուրժուազիայի, այդ թվում գյուղացիական բուրժուազիայի։

Այ, եթե մայրաքաղաքների ու արդյունաբերական խոշոր կենտրոնների բոլշևիկյան պրոլետարիատը չկարողանար իր շուրջը միավորել գյուղական չքավորու-

* Խորհուրդների VI համագումարում (1918 թ. նոյեմբերի 7—9) վճռական ձայնով 967 պատգամավոր էր, որոնցից 950 բոլշևիկ, խորհրդակցական ձայնով էլ՝ 351, որոնցից 335-ը բոլշևիկ։ Ընդամենը 97 % բոլշևիկ։ (Այս ծանոթությունը ձեռագրում չկա։ Խմբ.)։

թյունն ընդդեմ հարուստ գյուղացիության, այն ժամանակ դրանով ապացուցված կլիներ Ռուսաստանի «անհասունությունը» սոցիալիստական հեղափոխության համար, այն ժամանակ գյուղացիությունը կմնար «ամբողջական», այսինքն կմնար կուլակների, գյուղի հարուստների, բուրժուազիայի տնտեսական, քաղաքական և հոգևոր ղեկավարության տակ, այն ժամանակ հեղափոխությունը չէր դուրս գա բուրժուական-դեմոկրատական հեղափոխության սահմաններից։ (Բայց դրանով էլ, փակագծերում ասած, ապացուցված չէր լինի, թե պրոլետարիատը չպետք է իշխանությունը վերցներ, որովհետև միայն պրոլետարիատը իրոք մինչև վերջը հասցրեց բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը, միայն պրոլետարիատը որոշ լուրջ բան արեց՝ մոտեցնելու համար համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը, միայն պրոլետարիատն ստեղծեց խորհրդային պետությունը, որ Կոմունայից հետո երկրորդ քայլն է սոցիալիստական պետության ուղղությամբ)։

Մյուս կողմից, եթե բոլշևիկյան պրոլետարիատը փորձեր մեկեն, 1917 թ. հոկտեմբեր—նոյեմբերին, չկարողանալով սպասել գյուղի դասակարգային խավավորման, չկարողանալով նախապատրաստել ու անցկացնել այն, փորձեր «դեկրետել» քաղաքացիական պատերազմը կամ «սոցիալիզմ մտցնելը» գյուղում, փորձեր յոլա գնալ առանց առհասարակ գյուղացիության հետ կնքած բլոկի (դաշինքի), առանց միջին գյուղացիությանն արված մի շարք զիջումների և այլն,— այն ժամանակ դա կլիներ մարքսիզմի բլանկիստական խեղաթյուրում, այն ժամանակ դա կլիներ մի փորձ՝ փոքրամասնության կողմից իր կամքը փաթա-

թելու մեծամասնության շնչքին, այն ժամանակ դա կլիներ տեսական անհեթեթություն, չըմբռնելն այն բանի, որ ընդհանուր-գյուղացիական հեղափոխությունը դեռևս բուրժուական հեղափոխություն է և վոր հետամնաց յերկրում սոցիալիստական դարձնել այն չի կարելի առանց մի շարք անցումների, փոխանցական աստիճանների:

Կաուցկին ամեն ինչ շփոթել է տեսական և քաղաքական կարևորագույն հարցում և գործնականում դուրս յեկել պարզապես բուրժուազիային ծառայորկող մի գրող, վորը ճչում է ընդդեմ պրոլետարիատի դիկտատուրայի:

* * *

Նույնպիսի, յեթե վոչ ավելի մեծ շփոթություն է մտցրել Կաուցկին մյուս հետաքրքրականագույն ու կարևորագույն հարցի մեջ, այն է՝ արդյոք սկզբունքորեն ճիշտ եր դրված, իսկ հետո նպատակահարմա՞ր եր անցկացված Խորհրդային հանրապետության օրենսդրական գործունեյությունը ագրարային բարեփոխության, այդ դժվարագույն ու միևնույն ժամանակ կարևորագույն սոցիալիստական բարեփոխության մեջ: Մենք անասելի շնորհակալ կլինեյինք ամեն մի արևմտայեվրոպական մարքսիստից, յեթե նա, ծանոթանալով գոնե կարևորագույն փաստաթղթերին, տար մեր քաղաքականության քննադատությունը, վորովհետև նա դրանով կոգներ մեզ մեծապես, կոգներ նաև ամբողջ աշխարհում հասունացող հեղափոխությանը: Բայց քննադատության փոխարեն Կաուցկին տալիս է տեսական աններելի խառնաշփոթություն, վոր մարքսիզմը փոխարկում է լիբերալիզմի, իսկ գործ-

նականում դատարկ, չարաշունչ, քաղքենիական վոտնձգություններ ընդդեմ բոլշևիկների: Թող ընթերցողը դատի.

«Խոշոր հողատիրությունը պահել չեր կարելի: Դա արեց հեղափոխությունը: Դա իսկույն ևեթ պարզ դարձավ: Չեր կարելի գյուղացիական բնակչությանը չտալ այն...»: (Ճիշտ չե, պարոն Կաուցկի, դուք ձեզ համար «պարզը» դնում եք հարցի նկատմամբ տարբեր դասակարգերի ունեցած վերաբերմունքի տեղը.—հեղափխության պատմությունն ապացուցել է, վոր բուրժուայի ու մանր բուրժուայի՝ մենշևիկների և եսերների կոալիցիոն կառավարությունը վարում եր խոշոր հողատիրությունը պահպանելու քաղաքականություն: Այդ առանձնապես ապացուցեցին Ս. Մասլովի օրենքը* և հողային կոմիտեների անդամների ձերբակալությունները: «Գյուղացիական բնակչությունն» առանց պրոլետարիատի դիկտատուրայի չեր հաղթի կապիտալիստի հետ միավորված կալվածատիրոջը):

«...Սակայն միասնականություն չկար այն նկատմամբ, թե ինչ ձևերով պետք է դա տեղի ունենա: Մտածելի յեն տարբեր լուծումներ...» (Կաուցկուն ամենից ավելի մտահոգություն է պատճառում «սոցիալիստների» «միասնականությունը», ով ել վոր իրեն այդպես անվանելիս լինի: Նա մոռանում է այն մասին, վոր կապիտալիստական հասարակության հիմնական դասակարգերը պետք է գան տարբեր լուծումների):...«Սոցիալիստական տեսակետից ամենառացիոնալը կլիներ խոշոր ձեռնարկությունները տա պետությանն ի սեփականություն և խոշոր կալվածները հատկացնել այն գյուղացիներին, վորոնք մինչև այժմ զբաղված եյին

* Վլ. Ի. նկատի ունի եսերական այն օրինագիծը գյուղատնտեսական օգտագործման հողերը հողային կոմիտեների տնօրինությանը հանձնելու մասին, վոր հողագործության նախարար Ս. Լ. Մասլովը մտցրեց Հոկտեմբերյան հեղափոխությունից միքանի օր առաջ ժամանակավոր կառավարության քննությանը: Օրինագիծն այնպես ել օրենք չդարձավ: Լենինն ավելի մանրամասն բնութագրել է Մասլովի օրինագիծը «Գյուղացիների նոր խաբեյությունը եսերների կուսակցության կողմից» հոդվածում (տես Յերկերի XXI հատ. (ռուս.), եջ 357—361): Խմբ.:

նրանց մեջ վորպես վարձու բանվորներ՝ ընկերության ձևերով մշակելու համար։ Բայց այս լուծումը յենթադրում է գյուղական այնպիսի բանվորներ, վորոնք Ռուսաստանում չկան։ Մյուս լուծումը կարող է լինել խոշոր հողատիրության հանձնումը պետությանն ի սեփականություն և այդ հողատիրության բաժանումը մանր հողամասերի, վորոնք վարձակալությամբ են տրվում սակավահող գյուղացիներին։ Այն ժամանակ սոցիալիզմից վորևէ բան ելի իրագործված կլիներ...»։

Կաուցկին, ինչպես միշտ, ոձիք է աղատում հուշակավոր՝ մի կողմից, չի կարելի չխոստովանել, մյուս կողմից, պետք է ընդունել՝ գրույթով։ Նա իրար կողքի յե դնում տարբեր լուծումներ, կանգ չառնելով այն մտքի վրա—միակ ռեալ, միակ մարքսիստական մտքի— թե այսինչ հատուկ պայմաններում վորպիսիք պետք է լինեն փոխանցումները կապիտալիզմից դեպի կոմունիզմ։ Ռուսաստանում կան գյուղական վարձու բանվորներ, բայց նրանք քիչ են, և Խորհրդային իշխանության կողմից տրված հարցն այն մասին, թե ինչպես պետք է անցնեն հողի կոմունալ ու ընկերական մշակման, Կաուցկին չի շոշափել։ Ամենից տարօրինակն այն է, սակայն, վոր Կաուցկին կամենում է «սոցիալիզմից վորևէ բան» տեսնել մանր հողամասերը վարձակալությամբ բաժանելու մեջ։ Իրոք դա մանր-բուրժուական լոզունգ է, և այստեղ «սոցիալիզմից» վոչինչ չկա։ Յեթե հողը վարձակալությամբ տվող «պետությունը» չլինի Կոմունայի տիպի պետություն, այլ լինի բուրժուական պառլամենտար հանրապետություն (հենց այդպիսին է Կաուցկու մշտական յենթադրությունը), ապա հողի հանձնումը մանր մասերով կլինի տիպիկ լիբերալ ռեֆորմ։

Կաուցկին լռում է այն մասին, վոր Խորհրդային իշխանությունը վերացրել է հողի ամեն մի սեփակա-

նությունը։ Ավելի վատը։ Նա կատարում է աներևակայելի գիտակցական խառնակում և այնպես է քաղում Խորհրդային իշխանության դեկրետները, վոր ամենից եյականը բաց է թողնվում։

Հայտարարելով, վոր «մանր արտադրությունը ձգտում է արտադրության միջոցների վերաբերմամբ լիակատար մասնավոր սեփականության», վոր Ուչրեդիլկան կլիներ բաժանքը խանգարելու ընդունակ «միակ հեղինակությունը» (մի պնդում, վորը հռհռոց առաջ կբերի Ռուսաստանում, վորովհետև բոլորը գիտեն, վոր բանվորներն ու գյուղացիները հեղինակավոր համարում են միայն Խորհուրդները, իսկ Ուչրեդիլկան դարձել է չեխո-սլովակների և կալվածատերերի լոզունգ),— Կաուցկին շարունակում է.

«Խորհրդային կառավարության առաջին դեկրետներից մեկը վորոշեց. 1. Հողի կալվածատիրական սեփականությունը վերացվում է անհապաղ առանց վորևէ փրկանքի։ 2. Կալվածատիրական կալքերը, ինչպես և կայսերական տոհմին պատկանող, վանքապատկան, յեկեղեցական բոլոր հողերը իրենց ամբողջ կենդանի ու մեռյալ ինվենտարով, ագարակային շինվածքներով ու բոլոր պարագաներով հանդերձ անցնում են գավառակային հողային կոմիտեների և գյուղական պատգամավորների գավառական Խորհուրդների տրամադրության տակ՝ մինչև հողի հարցի լուծումը Սահմանադիր ժողովի կողմից»։

Բաց թողնելով այս յերկու կետը միայն, Կաուցկին յեզրակացնում է.

«Սահմանադիր ժողովի ակոչումը մնաց մեռյալ տառ։ Առանձին գավառակների գյուղացիները փաստորեն կարող էյին հողի հետ վարվել ինչպես կամենում էյին» (47)։

Ահա Կաուցկու «քննադատության» նմուշները։ Ահա մի «գիտնական» աշխատություն, վոր ամենից

ավելի նման է կեղծիքի։ Գերմանական ընթերցողին ներշնչվում է, վոր բոլշևիկները հողի մասնավոր սեփականության հարցում անձնատուր յեղան գյուղացիությանը, վոր բոլշևիկները գյուղացիներին իրավունք տվին անջատ («առանձին գավառակներին») անելու, ինչ վոր կամենում են։

Իսկ իրոք Կաուցկու կողմից քաղվող դեկրետը — առաջին դեկրետը, վոր հրատարակված է 1917 թ. նոյեմբերի 8-ին (հոկտեմբերի 26-ին)*,—բաղկացած է վոչ թե 2, այլ 5 հոդվածից՝ պլուս «հրահանգի» ութ հոդվածը, ընդամենը հրահանգի մասին ասված է, վոր նա «պետք է ծառայի ղեկավարության համար»։

Դեկրետի 3-րդ հոդվածում ասվում է, վոր տնտեսությունն անցնում է «ժողովրդին», վոր «ամբողջ գրավվող գույքի ճշգրիտ ցուցակագրությունը» կազմելը և «հեղափոխական խստագույն պահպանությունը» պարտադիր են։ Իսկ հրահանգում ասվում է, վոր «հողի մասնավոր սեփականության իրավունքն ընդմիշտ վերացվում է», վոր «բարձր-կուլտուրական տնտեսություններ ունեցող հողամասերը» «բաժանման յենթակա չեն», վոր «գրավված հողերի տնտեսական ամբողջ ինվենտարը՝ կենդանի և մեռյալ՝ անցնում է պետության կամ համայնքի բացառիկ ոգտագործման, նայած նրանց մեծությանն ու նշանակությանը,—առանց փրկանքի», վոր «ամբողջ հողը մտնում է համաժողովրդական հողային ֆոնդի մեջ»։

Այնուհետև, Սահմանադիր ժողովի ցրման հետ միաժամանակ (1918 թ. հունվարի 18 (5) Խորհուրդների III համագումարի կողմից ընդունված է «աշխատավոր

* Տես Յերկերի XXII հատ., էջ 20—23։ Խմբ.

և շահագործվող բնակչության իրավունքների դեկլարացիան»*, վորն այժմ մտել է Խորհրդային հանրապետության հիմնական որենքի մեջ։ Այդ դեկլարացիայի մեջ II, 1 հոդվածն ասում է, վոր «հողի մասնավոր սեփականությունը վերացվում է» և վոր «որինակելի կալվածներն ու գյուղատնտեսական ձեռնարկությունները հայտարարվում են ազգային սեփականություն»։

Հետևաբար, Սահմանադիր ժողովի առկոչումը չմնաց մեռյալ տառ, վորովհետև համաժողովրդական մի ուրիշ ներկայացուցչական հաստատություն, վոր անչափ ավելի հեղինակավոր է գյուղացիների աչքում, իր վրա վերցրեց ագրարային հարցի լուծումը։

Այնուհետև, 1918 թ. փետրվարի 19 (6)-ին հրատարակված է հողի սոցիալիզացիայի որենքը, վոր մի անգամ ևս հաստատում է հողի վորևէ սեփականության վերացումը, հողի և մասնատիրական ամբողջ ինվենտարի տնօրինումը հանձնում է Խորհրդային իշխանություններին խորհրդային ֆեդերալ իշխանության վերահսկողության տակ. հողի տնօրինման խնդիրների մեջ դնում է

«կոլեկտիվ տնտեսության զարգացումը հողագործության մեջ, վորպես աշխատանքի և արդյունքների տնտեսման իմաստով ավելի ձեռնտու տնտեսության, ի հաշիվ միանձնյա տնտեսությունների՝ սոցիալիստական տնտեսությանն անցնելու նպատակով» (էջ 11, կետ դ.)։

Հավասարար հողոգտագործում մտցնելով, այդ որենքը «Ո՞վ իրավունք ունի ոգտվելու հողից» հիմնական հարցին պատասխանում է.

«Հոդվ. 20։ Հողի մակերևույթի առանձին մասերից Ռուսա-

* Տես Յերկերի XXII հատ. (ռուս.), էջ 174-178։ Խմբ.

տանյան խորհրդային ֆեդերատիվ հանրապետության սահմաններում հասարակական և անձնական պետքերի համար օգտվել կարող են. Ա) Կուլտուր-կրթական նպատակներով. 1) Պետությունը ի դեմս խորհրդային (ֆեդերալ, մարզային, նահանգական, գավառական, գավառակային և գյուղական) իշխանության օրգանների 2) Հասարակական կազմակերպությունները (տեղական խորհրդային իշխանության թույլտվությամբ ու վերահսկողության տակ)։ Բ) Գյուղատնտեսությամբ պարապելու համար. 3) Գյուղատնտեսական կոմունաները։ 4) Գյուղատնտեսական ընկերությունները։ 5) Գյուղական հասարակությունները։ 6) Առանձին ընտանիքներն ու անձերը...»։

Ընթերցողը տեսնում է, վոր Կաուցկին բոլորովին աղավաղել է բանը և գերմանական ընթերցողին բացարձակապես կեղծ կերպարանքով ներկայացրել Ռուսաստանի պրոլետարական պետության ագրարային քաղաքականությունն ու ագրարային օրենսդրությունը։

Տեսականորեն կարևոր, հիմնական հարցերը Կաուցկին նույնիսկ դնել չկարողացավ։

Այդ հարցերը հետևյալներն են.

1) Հողօգտագործման հավասարարում և

2) Հողի ազգայնացում,—մեկ թե մյուս միջոցի հարաբերումը սոցիալիզմին առհասարակ և կապիտալիզմից դեպի կոմունիզմ կատարվող փոխանցմանը մասնավորապես։

3) Հողի հասարակական մշակումը, վորպես անցում մանրատված մանր հողագործությունից դեպի հասարակական խոշոր հողագործությունը. բավարարո՞ւմ է արդյոք սոցիալիզմի պահանջներին այս հարցի դրումը խորհրդային օրենսդրության մեջ։

Առաջին հարցի վերաբերմամբ անհրաժեշտ է սահմանել նախ և առաջ յերկու հետևյալ հիմնական փաստերը. ա) բոլշևիկները 1905 թ. փորձը հաշվառելիս էլ (հիշատակեմ, օրինակ, իմ աշխատությունը՝ «Ագրարային հարցը ռուսական առաջին հեղափոխության մեջ»)* նշում էին հավասարարման լոզունգի դեմոկրատական-առաջադեմ, դեմոկրատական-հեղափոխական նշանակությունը և 1917 թվականին, մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը, միանգամայն վորոշակի խոսում էին այդ մասին։ բ) Հողի սոցիալիզացիայի օրենքն անցկացնելով,—մի օրենք, վորի «հոգին» հանդիսանում է հավասարար հողօգտագործման լոզունգը,—բոլշևիկներն ամենայն ճշգրտությամբ ու վորոշակիությամբ հայտարարեցին. այդ գաղափարը մերը չէ, մենք համաձայն չենք այդ լոզունգին, մենք մեր պարտքն ենք համարում անցկացնել այն, վորովհետև, այդպես է գյուղացիների ճնշող մեծամասնության պահանջը։ Իսկ աշխատավորների մեծամասնության գաղափարն ու պահանջները նրանք իրենք պետք է հաղթահարեն,—այդպիսի պահանջները վոչ կարելի յե «վերացնել», վոչ նրանց վրայով «ցատկել»։ Մենք, բոլշևիկներս, կօգնենք գյուղացիությանը՝ հաղթահարելու մանրբուրժուական լոզունգները, վորքան կարելի յե արագ և վորքան կարելի յե հեշտ անցնելու նրանցից սոցիալիստականներին։

Տեսաբան-մարքսիստը, վոր կկամենար իր գիտական վերլուծությամբ օգնել բանվորական հեղափոխությանը, պետք է պատասխաներ, նախ. ճի՞շտ է արդյոք վոր հողօգտագործման հավասարարման գաղափարն ունի դեմոկրատական-հեղափոխական նշանակություն, բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը մինչև

* Տե՛ս Յերկերի XI հատորը։ Խմբ.։

վերջը հասցնելու նշանակություն: Յերկրորդ, արդյոք ճի՞շտ վարվեցին բոլշևիկները, իրենց ձայներով անցկացնելով (և ամենալոյալ կերպով պահելով) մանր-բուրժուական որենքը հավասարարման մասին:

Կաուցկին նույնիսկ նկատե՛լ չկարողացավ, թե տեսականորեն ինչն է կազմում հարցի եյությունը:

Կաուցկուն յերբեք չեր հաջողվի հերքել այն, վոր հավասարարման գաղափարն առաջադիմական և հեղափոխական նշանակություն ունի բուրժուական-դեմոկրատական հեղաշրջման մեջ: Ավելի հեռուն գնալ չի կարող այդ հեղաշրջումը: Մինչև վերջը հասնելով, նա դրանով իսկ ավելի պարզ, ավելի արագ, ավելի հեշտ է յերևան բերում մասսաների առաջ բուրժուական-դեմոկրատական լուծումների անբավարար լինելը, նրանց շրջանակներից դուրս գալու, սոցիալիզմին անցնելու անհրաժեշտությունը:

Ցարիզմը և կալվածատերերին վար նետած գյուղացիությունը յերազում է հավասարարման մասին, և վոչ մի ուժ չեր կարողանա խանգարել գյուղացիներին, վորոնք ազատվել եյին և՛ կալվածատերերից, և՛ բուրժուական-պառլամենտար, հանրապետական պետությունից: Պրոլետարներն ասում են գյուղացիներին. մենք կօգնենք ձեզ հասնելու «իդեալական» կապիտալիզմին, վորովհետև հողօգտագործման հավասարումը կապիտալիզմի իդեալականացումն է մանր արտադրողի տեսակետից: Յեվ միևնույն ժամանակ մենք ցույց կտանք դրա անբավարարությունը, հողի հասարակական մշակմանն անցնելու անհրաժեշտությունը:

Հետաքրքրական կլիներ տեսնել, թե ինչպես Կաուցկին կփորձեր հերքել գյուղացիական պայքարի

պրոլետարիատի կողմից կիրառվող այսպիսի ղեկավարության ճշտությունը:

Կաուցկին գերադասել է հարցից խուսափել...

Այնուհետև, Կաուցկին ուղղակի խաբել է գերմանական ընթերցողներին, թաքցնելով նրանցից, վոր հողի օրենքի մեջ Խորհրդային իշխանությունն ուղղակի առավելություն է տվել կոմունաներին ու ընկերություններին, առաջին տեղը դնելով դրանք:

Գյուղացիության հետ մինչև բուրժուական-դեմոկրատական հեղափոխության վերջը,—գյուղացիության չքավորագույն, պրոլետարական ու կիսապրոլետարական մասի հետ հառաջ դեպի սոցիալիստական հեղափոխությունը: Այս եր բոլշևիկների քաղաքականությունը, և դա միակ մարքսիստական քաղաքականությունն եր:

Իսկ Կաուցկին խառնաշփոթության մեջ է ընկնում, չկարողանալով դնել վո՛չ մի հարց: Մի կողմից, նա չի համարձակվում ասել, թե պրոլետարները պետք է տարամիտեյին գյուղացիության հետ հավասարարման հարցում, վորովհետև նա զգում է նման տարամիտման անհեթեթությունը (բացի դրանից 1905 թ., յերբ Կաուցկին դեռևս ռենեգատ չեր, նա պարզ և ուղղակի պաշտպանում եր բանվորների և գյուղացիների դաշինքը, վորպես հեղափոխության հաղթանակի պայման): Մյուս կողմից, Կաուցկին համակրանքով քաղում է այն մենշևիկ Մասլովի լիբերալ գռեհկաբանությունները, վորն «ապացուցում է» մանր-բուրժուական հավասարության ուտոպիականությունն ու ռեակցիոնությունը սոցիալիզմի տեսակետից և լռության է տալիս այն հանգամանքը, վոր բուրժուական-դեմոկրատական հեղափոխության տեսակետից հավասարության, հավասարարման

համար մղվող մանր-բուրժուական պայքարն առաջադիմական է և հեղափոխական։

Կաուցկու մոտ ստացվում է անվերջ խառնաշփոթություն. նկատեցեք, վոր (1918 թ.) Կաուցկին պնդում է ռուսական հեղափոխության բուրժուական բնույթի վրա։ (1918 թվականին) Կաուցկին պահանջում է. դուրս մի՛ յելեք այդ շրջանակներից։ Յեվ նույն Կաուցկին մանր-բուրժուական ռեֆորմի մեջ, մանր հողամասերն աղքատ գյուղացիներին տալու մեջ (այսինքն հավասարարմանը մոտենալու մեջ) տեսնում է «սոցիալիզմից վորևէ բա՛ն» (բուրժուական հեղափոխության համար)։

Թող հասկանա՛, ով վոր կարող է։

Բացի դրանից Կաուցկին յերևան է բերում ֆիլիստերական անկարողություն հաշվի նստելու վորոշ կուսակցության իրական քաղաքականության հետ։ Նա քաղում է մենշևիկ Մասլովի ֆրազները, չցանկանալով տեսնել մենշևիկների կուսակցության իրական քաղաքականությունը 1917 թվականին, յերբ վոր նա-կալվածատերերի և կադետների հետ «կոալիցիա» կազմած՝ պաշտպանում եր փաստորեն լիբերալ ագրարային ռեֆորմը և համաձայնությունը կալվածատերերի հետ (ապացույց. հողային կոմիտեների անդամների ձերբակալություններն ու Ս. Մասլովի որինագիծը)։

Կաուցկին չի նկատել, վոր Պ. Մասլովի ֆրազները մանր-բուրժուական հավասարության ռեակցիոնության ու ուտոպիականության մասին իրոք քողարկում են գյուղացիների և կալվածատերերի համաձայնության (այսինքն կալվածատերերի կողմից գյուղացիներին խաբելու) մենշևիկյան քաղաքականությունը, փոխանակ առաջադրելու գյուղացիների ձեռքով կալվածա-

տերերին հեղափոխական ճանապարհով տապալելու պահանջը։

Ի՞նչ «մարքսիստ» է Կաուցկին։

Հենց բոլշևիկներն են խստորեն հաշվառել բուրժուական-դեմոկրատական ու սոցիալիստական հեղափոխության տարբերությունը. մինչև վերջը հասցնելով առաջինը, նրանք դուռ եյին բաց անում յերկրորդին անցնելու համար։ Դա միակ հեղափոխական ու միակ մարքսիստական քաղաքականությունն է։

Յեվ իզուր է Կաուցկին կրկնում անատամ լիբերալ սրախոսությունները.

«Դեռևս վոչ մի տեղ և յերբեք մանր գյուղացիները տեսական ամոզումների ազդեցության տակ չեն անցել կոլեկտիվ արտադրության» (եջ 50)։

Շա՜տ սրամիտ է։

Վոչ մի տեղ և յերբեք մեծ յերկրի մանր գյուղացիները չեն յեղել պրոլետարական պետության ազդեցության տակ։

Վոչ մի տեղ և յերբեք մանր գյուղացիները չեն յեկել չքավորագույն և հարուստ գյուղացիների բացահայտ դասակարգային պայքարի—մինչ նրանց միջև բռնկած քաղաքացիական պատերազմը՝ պրոլետարական պետական իշխանության կողմից չքավորագույններին ցույց տրվող պրոպագանդիստական, քաղաքական, տնտեսական և ռազմական սատարման պայմաններում։

Վոչ մի տեղ և յերբեք չի յեղել չարաշահների և հարուստ գյուղացիների այնպիսի հարստացում պատերազմից, գյուղացիների մասսայի այնպիսի ավերման ժամանակ։

Կաուցկին հնոտի բաներ է կրկնում, ծամծմում է

հին ծամոնը, վախենալով մտածել անգամ պրոլետարական դիկտատուրայի նոր խնդիրների մասին։

Իսկ ինչ է դա, սիրելի Կաուցկի, «տեսական համոզում» արդյոք, յեթե գյուղացիների մոտ պահպանում են գործիքները մանր արտադրության համար, իսկ պրոլետարական պետությունն օգնում է նրանց մեքենաներ ճարելու՝ հողի կոլեկտիվ մշակման համար։

Անցնենք հողի ռացիոնալիզացիայի հարցին։ Մեր նարոդնիկները, այդ թվում բոլոր ձախ եսերները, բացասում են, վոր մեզանում անցկացված միջոցը հողի նացիոնալիզացիա յե։ Նրանք տեսականորեն անիրավացի յեն։ Վորչափով վոր մենք մնում ենք ապրանքային արտադրության ու կապիտալիզմի շրջանակներում, այդ չափով հողի մասնավոր սեփականության վերացումը հողի նացիոնալիզացիա յե։ «Սոցիալիզացիա» խոսքն արտահայտում է սոսկ սոցիալիզմին անցնելու տենդենց, ցանկություն, նախապատրաստում։

Իսկ ինչպիսի վերաբերմունք պետք է ունենան մարքսիստները դեպի հողի նացիոնալիզացիան։

Կաուցկին այստեղ էլ չի կարողանում նույնիսկ դնել տեսական հարցը կամ—վոր ել ավելի վատ է—դիտավորյալ կերպով մի կողմ է թողնում հարցը, թեև ռուսաց գրականությունից հայտնի յե, վոր Կաուցկին գիտե այն վաղեմի վեճերի մասին, վոր յեղել են ռուսական մարքսիստների մեջ հողի նացիոնալիզացիայի, մունիցիպալիզացիայի (խոշոր կալվածների հանձնումը տեղական ինքնավարություններին), բաժանման հարցի շուրջը։

Ուղղակի ծաղր է հանդիսանում մարքսիզմի վերաբերմամբ Կաուցկու այն պնդումը, թե խոշոր կալվածների հանձնումը պետությանը և դրանք մանր հողա-

մասերով վարձակալությամբ սակավահող գյուղացիներին տրամադրելը կիրագործեր «ինչ-վոր բան սոցիալիզմից»։ Մենք նշեցինք արդեն, վոր այստեղ չկա վորևե սոցիալիզմ։ Բայց դա քիչ է. այստեղ չկա նաև մինչև վերջը հասցրած բուրժուական-դեմոկրատական հեղափոխություն։

Կաուցկուն մեծ դժբախտություն է պատահել, վոր նա վստահացել է մենշևիկներին։ Դրանից կուրյոզ է առաջացել. մեր հեղափոխության բուրժուական բնույթը պաշտպանող Կաուցկին, վոր բոլշևիկներին մեղադրում է դեպի սոցիալիզմ գնալու միտքը հղանալու համար, ինքը լիբերալ ռեֆորմ է տալիս սոցիալիզմի անվան տակ, այդ ռեֆորմը չհասցնելով մինչ լիակատար մաքրումն ամբողջ այն միջնադարականության, վոր կա հողատիրության հարաբերությունների մեջ։ Կաուցկու մոտ, ինչպես և նրա խորհրդատու-մենշևիկների մոտ, ստացվեց հեղափոխությունից վախեցող բուրժուազիայի լիբերալ պաշտպանությունը, փոխանակ հետևողական բուրժուական-դեմոկրատական հեղափոխության պաշտպանության։

Իսկապես։ Ինչու՞ պետք է պետական սեփականություն դարձնել խոշոր կալվածները միայն և վոչ թե բոլոր հողերը։ Դրանով լիբերալ բուրժուազիան հասնում է հնության առավելագույն պահպանման (այսինքն հեղափոխության մեջ նվազագույն հետևողականության) և հնին վերադառնալու առավելագույն հեշտության։ Ռադիկալ, այսինքն բուրժուական հետևողականության մինչև վերջը հասցնող բուրժուազիան առաջադրում է հողի նացիոնալիզացիայի լոզունգը։

Կաուցկին, վոր շատ ու շատ վաղ ժամանակներում, գրեթե 20 տարի սրանից առաջ, մարքսիստականհիա-

նալի աշխատությունն է գրել ագրարային հարցի մասին, չի կարող չգիտենալ Մարքսի նշումներն այն մասին, վոր հողի նացիոնալիզացիան հանդիսանում է հենց բուրժուազիայի հետևողական լոզունգը*: Կաուցկին չի կարող չգիտենալ Մարքսի բանակռիվը Ռոդբերտուսի հետ և Մարքսի յերևելի պարզաբանումները «Հավելյալ արժեքի թեորիաները» աշխատության մեջ, վորտեղ առանձնապես ակնառու կերպով ցույց է տրված

* Վ. Ի., ըստ յերևույթին, նկատի ունի «Հավելյալ արժեքի թեորիաների» II հատ. I մասի «Հողային ռենտան և Ռոդբերտուսը» գլուխը, վորի մեջ Մարքսը գրում եր. «Արտադրության կապիտալիստական յեղանակ յենթադրելիս կապիտալիստը հանդիսանում է արտադրության վոչ միայն անհրաժեշտ, այլև տիրապետող գործակալը: Հողատերն, ընդհակառակը, արտադրության այդ յեղանակի պարագայում միանգամայն ավելորդ է հանդիսանում: Արտադրության կապիտալիստական յեղանակի համար միայն հարկավոր է, վոր հողը չլինի ընդհանուր սեփականություն, վորպեսզի նա հակակայի բանվոր դասակարգին, վորպես նրան չպատկանող՝ արտադրության միջոց, իսկ այդ նպատակն իրագործվում է միանգամայն, յեթե հողը դառնում է պետական սեփականություն և, հետևաբար, պետությունն է ստանում հողային ռենտան: Հողատերը, վոր արտադրության այնքան կարևոր գործակալն եր հին ու միջնադարյան աշխարհում, արդյունաբերական աշխարհում ներկայացնում է անոգուտ կոշկոռ (нарост): Ուստի ռադիկալ բուրժուան, զգուշակի դիմելով բոլոր մյուս հարկերի վոչնչացման, տեսականորեն գալիս է հողային մասնավոր սեփականության բացասման, վորպիսի սեփականությունը նա կցանկանար պետական սեփականության ձևով դարձնել բուրժուազիայի դասակարգի, կապիտալի սեփականություն: Սակայն գործնականում նրան պակասում է համարձակությունը, վորովհետև հարձակումը սեփականության մեկ ձևի — աշխատանքի պայմանների մասնավոր սեփականության ձևի — վրա վտանգավոր կլիներ մյուս ձևի համար ել: Բացի դրանից բուրժուան ինքն ել է հող ձեռք բերել»: К. Маркс. „Теории прибавочной стоимости", т. II, ч. I, стр. 142: М.—Лнгр. Соцэкгиз. 1931г. Խմբ.:

և հողի նացիոնալիզացիայի հեղափոխական նշանակությունը բուրժուական-դեմոկրատական իմաստով:

Մենշևիկ Պ. Մասլովը, վորին Կաուցկին այնպես անհաջող կերպով խորհրդատու յե ընտրել իր համար, բացառում եր, վոր ռուս գյուղացիները կկարողանան համաձայնել ամբողջ (այդ թվում և գյուղացիական) հողի նացիոնալիզացիային: Մասլովի այս հայացքը վորոշ չափով կարող եր կապ ունենալ նրա «որիգինալ» թեորիայի հետ (վոր կրկնում է Մարքսի բուրժուական քննադատներին), այն է՝ բացարձակ ռենտայի բացասման ու «հողի նվազող պտղաբերության» «որենքի» (կամ, ինչպես Մասլովն եր արտահայտվում, «փաստի») ճանաչման հետ:

Իրոք 1905 թվականի հեղափոխության մեջ արդեն յերևան յեկավ, վոր Ռուսաստանի գյուղացիների — և՛ համայնականների, և՛ առանձնատնտեսատերերի — ահագին մեծամասնությունը կողմնակից է ամբողջ հողի նացիոնալիզացիայի: 1917 թ. հեղափոխությունը հաստատեց այդ և իշխանությունը պրոլետարիատին անցնելուց հետո իրագործեց: Բոլշևիկները հավատարիմ մնացին մարքսիզմին, չփորձելով (հակառակ Կաուցկու, վորը մեզ մեղադրում է դրա համար՝ բացարձակապես առանց ապացույցների) «ցատկել» բուրժուական-դեմոկրատական հեղափոխության վրայով: Բոլշևիկները նախ և առաջ ոգնեցին գյուղացիության բուրժուական-դեմոկրատական գաղափարախոսներից ամենաարմատական, ամենահեղափոխական, պրոլետարիատին ամենից մոտ գտնվողներին, այն է՝ ձախ եսերներին, անցկացնելու այն, ինչ վոր փաստորեն հանդիսացավ հողի նացիոնալիզացիա: Ռուսաստանում 1917 թ. նոյեմբերի 8-ից (հոկտեմբերի 26-ից), այսինքն պրոլետարական, սո-

ցիալիստական հեղափոխության առաջին օրվանից, հողի մասնավոր սեփականությունը վերացված է։

Դրանով ստեղծված է մի հիմք, որն ամենից կատարյալն է կապիտալիզմի զարգացման տեսակետից (իր կապերը չխզելով Մարքսի հետ, Կաուցկին չի կարողանա բացասել այդ), և միևնույն ժամանակ ստեղծված է մի հողային կարգ, որն ամենից ճկունն է սոցիալիզմին անցնելու իմաստով։ Բուրժուական-դեմոկրատական տեսակետից Ռուսաստանում հեղափոխական գյուղացիությունն այլևս առաջ գնալու տեղ չունի. այս տեսակետից ավելի «իդեալական» բան, ավելի «արմատական» բան (նույն տեսակետից), քան հողի նացիոնալիզացիան է ու հողօգտագործման հավասարությունը՝ լինել չի կարող։ Հենց բոլշևիկները, միայն բոլշևիկները, միայն պրոլետարական հեղափոխության հաղթանակի շնորհիվ օգնեցին գյուղացիությանը իրոք մինչև վերջը հասցնելու բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը։ Եվ դրանով միայն նրանք մաքսիմումն արին՝ հեշտացնելու և արագացնելու համար սոցիալիստական հեղափոխությանն անցնելը։

Սրանով դատել կարելի յե, թե որպիսի խառնաշփոթություն է հրամցնում ընթերցողին Կաուցկին, որը բոլշևիկներին մեղադրում է հեղափոխության բուրժուական բնույթը չըմբռնելու համար և որն ինքն է յերևան բերում այնպիսի նահանջ մարքսիզմից, որ լռում է հողի նացիոնալիզացիայի մասին և առաջադրում (բուրժուական տեսակետից) ամենից պակաս հեղափոխական, լիբերալ ագրարային ռեֆորմ, որպես «ինչ-որ բան սոցիալիզմից»— —։

Մենք այստեղ մոտեցանք վերը դրված հարցերից յերրորդին, այն հարցին, թե որքան է Ռուսաստա-

նում պրոլետարական դիկտատուրան հաշվառել հողի հասարակական մշակմանն անցնելու անհրաժեշտությունը։ Կաուցկին այստեղ կատարում է դարձյալ կեղծիքին շատ նման մի բան. նա մեջբերում է միայն մեկ բոլշևիկի «թեզիսները», որոնք խոսում են հողի կոլեկտիվ մշակմանն անցնելու խնդրի մասին։ Մեջբերելով այդ թեզիսներից մեկը, մեր «տեսաբանը» հաղթականորեն բացականչում է.

«Դրանով, որ որոշ բան հայտարարվում է խնդիր, խնդիրը, դժբախտաբար, չի լուծվում։ Կոլեկտիվ գյուղատնտեսությունը Ռուսաստանում առայժմ դատապարտված է թղթի վրա մնալու. Դեռևս ոչ մի տեղ և յերբեք մանր գյուղացիները կոլեկտիվ արտադրության չեն անցել տեսական համոզումների հիման վրա» (էջ 50)։

Դեռևս ոչ մի տեղ և յերբեք չի յեղել այնպիսի գրական խարդախչություն, մինչև որը իջել է Կաուցկին։ Նա քաղում է «թեզիսները», լռության տալով Խորհրդային իշխանության օրենքը։ Նա խոսում է «տեսական համոզման» մասին, լռության տալով պրոլետարական պետական իշխանությունը, որն իր ձեռքում ունի և՛ գործարաններ, և՛ ապրանքներ։ Այն ամենն, ինչ որ գրում էր մարքսիստ Կաուցկին 1899 թ. «Ագրարային հարց»-ում այն միջոցների մասին, որ կան պրոլետարական պետության ձեռքում՝ մանր գյուղացիներին աստիճանաբար դեպի սոցիալիզմ տանելու համար, այդ ամենը 1918 թ. մոռացված է ռենեգատ Կաուցկու կողմից։

Իհարկե, պետության սատարումը վայելող միքանի հարյուր գյուղատնտեսական կոմունաներ ու խորհրդային տնտեսություններ (այսինքն խոշոր տնտեսություններ, որոնք պետության հաշվով մշակվում են

ցիալիստական հեղափոխության առաջին օրվանից, հողի մասնավոր սեփականությունը վերացված է։

Դրանով ստեղծված է մի հիմք, որն ամենից կատարյալ է կապիտալիզմի զարգացման տեսակետից (իր կարծիքը չխզելով Մարքսի հետ, Կաուցկին չի կարողանա բացասել այդ), և միևնույն ժամանակ ստեղծված է մի հողային կարգ, որն ամենից ճկունն է սոցիալիզմին անցնելու իմաստով։ Բուրժուական-դեմոկրատական տեսակետից Ռուսաստանում հեղափոխական գյուղացիությունն այլևս առաջ գնալու տեղ չունի. այս տեսակետից ավելի «իդեալական» բան, ավելի «արմատական» բան (նույն տեսակետից), քան հողի նացիոնալիզացիան է ու հողօգտագործման հավասարությունը՝ լինել չի կարող։ Հենց բոլշևիկները, միայն բոլշևիկները, միայն պրոլետարական հեղափոխության հաղթանակի շնորհիվ օգնեցին գյուղացիությանը իրոք մինչև վերջը հասցնելու բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը։ Եվ դրանով միայն նրանք մաքսիմում արին՝ հեշտացնելու և արագացնելու համար սոցիալիստական հեղափոխության անցնելը։

Սրանով դատել կարելի յե, թե որպիսի խառնաշփոթություն է հրամցնում ընթերցողին Կաուցկին, որը բոլշևիկներին մեղադրում է հեղափոխության բուրժուական բնույթը չըմբռնելու համար և որն ինքն է յերևան բերում այնպիսի նահանջ մարքսիզմից, որ լռում է հողի նացիոնալիզացիայի մասին և առաջադրում (բուրժուական տեսակետից) ամենից պակաս հեղափոխական, լիբերալ ագրարային ռեֆորմ, որպես «ինչ-որ բան սոցիալիզմից»— —։

Մենք այստեղ մոտեցանք վերը դրված հարցերից յերրորդին, այն հարցին, թե որքան է Ռուսաստա-

նում պրոլետարական դիկտատուրան հաշվառել հողի հասարակական մշակմանն անցնելու անհրաժեշտությունը։ Կաուցկին այստեղ կատարում է դարձյալ կեղծիքին շատ նման մի բան. նա մեջբերում է միայն մեկ բոլշևիկի «թեզիսները», որոնք խոսում են հողի կոլեկտիվ մշակմանն անցնելու խնդրի մասին։ Մեջբերելով այդ թեզիսներից մեկը, մեր «տեսաբանը» հաղթականորեն բացականչում է.

«Դրանով, որ որոշ բան հայտարարվում է խնդիր, խնդիրը, դժբախտաբար, չի լուծվում։ Կոլեկտիվ գյուղատնտեսությունը Ռուսաստանում առայժմ դատապարտված է թղթի վրա մնալու. Դեռևս ոչ մի տեղ և յերբեք մանր գյուղացիները կոլեկտիվ արտադրության չեն անցել տեսական համոզումների հիման վրա» (եջ 50)։

Դեռևս ոչ մի տեղ և յերբեք չի յեղել այնպիսի գրական խարդախչություն, մինչև որը իջել է Կաուցկին։ Նա քաղում է «թեզիսները», լռության տալով Խորհրդային իշխանության դեկրետը։ Նա խոսում է «տեսական համոզման» մասին, լռության տալով պրոլետարական պետական իշխանությունը, որն իր ձեռքում ունի և՛ գործարաններ, և՛ ապրանքներ։ Այն ամենն, ինչ որ գրում էր մարքսիստ Կաուցկին 1899 թ. «Ագրարային հարց»-ում այն միջոցների մասին, որ կան պրոլետարական պետության ձեռքում՝ մանր գյուղացիներին աստիճանաբար դեպի սոցիալիզմ տանելու համար, այդ ամենը 1918 թ. մոռացված է ռենեգատ Կաուցկու կողմից։

Իհարկե, պետության սատարումը վայելող միքանի հարյուր գյուղատնտեսական կոմունաներ ու խորհրդային տնտեսություններ (այսինքն խոշոր տնտեսություններ, որոնք պետության հաշվով մշակվում են

բանվորների ընկերությունների կողմից),—դա շատ քիչ է։ Բայց մի՞թե կարելի չէ «քննադատություն» անվանել այս փաստի անտեսումը Կաուցկու կողմից։

Պրոլետարական դիկտատուրայի կողմից Ռուսաստանում անցկացված հողի նացիոնալիզացիան ամենից ավելի ապահովեց բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը,—նույնիսկ նկատի առած այն պարագան, որ հակահեղափոխության հաղթանակը նացիոնալիզացիայից կշրջեր հետ դեպի բաժանքը (այս դեպքը հատկապես քննության է առնված իմ կողմից այն գրքույկում, որ նվիրված է մարքսիստների ագրարային ծրագրին՝ 1905 թվականի հեղափոխության մեջ)։ Իսկ բացի դրանից, հողի նացիոնալիզացիան պրոլետարական պետությանը տվեց ամենից մեծ հնարավորություններ սոցիալիզմին անցնելու հողագործության մեջ։

Հանրագումարը. Կաուցկին մեզ տվել է, տեսականորեն, աներևակայելի շիլափլավ՝ լիակատար հրաժարումը մարքսիզմից, իսկ գործնականում՝ լաքեյություն բուրժուազիայի և նրա ռեֆորմիզմի առաջ։ Ի՞նչ ասել կուզի, լավ քննադատություն է։

* * *

Կաուցկու մոտ արդյունաբերության «տնտեսական վերլուծությունն» սկսվում է հետևյալ հոյակապ դատողությամբ.

Ռուսաստանում կա կապիտալիստական խոշոր արդյունաբերություն։ Չի՞ կարելի արդյոք այդ հիմքի վրա կառուցել սոցիալիստական արտադրություն։

«Այդպես կարելի կլիներ կարծել, եթե սոցիալիզմը կայանար նրանում, որ առանձին ֆաբրիկաների և հանքերի բանվորները

սեփականեյին դրանք, որպեսզի յուրաքանչյուր ֆաբրիկայում առանձին վարեն տնտեսությունը» (էջ 52)։ «Հենց այսօր, օգոստոսի 5-ին, երբ որ ես գրում եմ այս տողերը,—ավելացնում է Կաուցկին,—Մոսկվայից հաղորդում են Լենինի՝ օգոստոսի 2 ի մեկ ճառի մասին *, որի մեջ նա, ինչպես հաղորդում են, ասել է. «Բանվորներն ամուր պահում են իրենց ձեռքում ֆաբրիկաները, իսկ գյուղացիները կալվածատերերին չեն տա հողը»։ «Ֆաբրիկան՝ բանվորներին, հողը՝ գյուղացիներին» նշանաբանը մինչև այժմ չեղել է ոչ թե սոցիալ-դեմոկրատական, այլ անարխո-սինդիկալիստական» (էջ 52—53)։

Մենք ամբողջությամբ քաղեցինք այս դատողությունը, որպեսզի ռուս բանվորները, որոնք առաջ հարգում էին Կաուցկուն, և հարգում էին իրավացիորեն, իրենք տեսնեն բուրժուազիայի կողմն անցած փախստակի վարվելաձևը։

Մտածեցեք միայն. օգոստոսի 5-ին, երբ արդեն բազմաթիվ դեկրետներ կային ֆաբրիկաների նացիոնալիզացիայի մասին Ռուսաստանում, ընդսմին ոչ մի ֆաբրիկա չէր «սեփականվել» բանվորների կողմից, այլ բոլորը հանձնվում էին ի սեփականություն հանրապետությանը, օգոստոսի 5-ին Կաուցկին, իմ ճառի մի նախադասության ակներևորեն խարդախչական մեկնաբանության հիման վրա, գերմանական ընթերցողներին ներշնչում է այն միտքը, թե Ռուսաստանում ֆաբրիկաները հանձնվում են առանձին բանվորներին։ Յեվ սրանից հետո Կաուցկին տասնյակ ու տասնյակ տողերի երկարությամբ ծամում է ծամում այն մասին, թե ֆաբրիկաները ջոկ-ջոկ չի կարելի տալ բանվորներին։

---

* «Ճառ Բուտիրսկի շրջանում 1918 թվի օգոստոսի 2-ին», տես Երկերի XXIII հատ. (ռուս.), էջ 169—170։ Խմբ.:

Սա քննադատություն չէ, այլ բուրժուազիայի այն լաքեյի վարվելաձևը, որը վարձված է կապիտալիստների կողմից, որպեսզի զրպարտի բանվորական հեղափոխությունը։

Ֆաբրիկաները պետք է հանձնել պետությանը, կամ համայնքին, կամ սպառողական ընկերություններին—գրում է մեկ էլ ու մեկ էլ Կաուցկին ու վերջապես ավելացնում.

«Այս ուղին էլ այժմ փորձել են բռնել Ռուսաստանում...»։

Ա՜յժմ, այսինքն սա ի՞նչ է նշանակում,—ոգոստոսի՞ն։ Մի՞թե Կաուցկին չէր կարող պատվիրել իր Շտեյններին, Աքսելրոդին կամ ռուսական բուրժուազիայի մյուս բարեկամներին՝ ֆաբրիկաներին վերաբերող թեկուզ մեկ դեկրետի թարգմանությունը։

«...Թե որքան հեռու յե գնացել այդ, դեռևս չի յերևում։ Խորհրդային հանրապետության այդ կողմը համենայն դեպս մեզ համար ներկայացնում է ամենից ավելի մեծ հետաքրքրություն, բայց նա դեռևս ամբողջովին մնում է խավարի մեջ։ Դեկրետների պակասություն չկա...» (Այդ պատճառով Կաուցկին անգիտանում է նրանց բովանդակությունը կամ թաքցնում իր ընթերցողներից), «բայց այդ դեկրետների գործողության մասին հուսալի տեղեկություններ չկան։ Սոցիալիստական արտադրությունն անհնարին է առանց ամենակողմանի, մանրամասն, հուսալի և արագ իրազեկ դարձնող վիճակագրության։ Խորհրդային հանրապետությունը մինչև այժմ չէր կարող ստեղծել այդպիսին։ Այն, ինչ որ մենք իմանում ենք նրա տնտեսական գործողությունների մասին, ծայրահեղորեն հակասական է և չի յենթարկվում որևէ ստուգման։ Դա նույնպես դիկտատուրայի և դեմոկրատիայի ճնշման արդյունքներից մեկն է։ Չկա մամուլի և խոսքի ազատություն» (եջ 53)։

Ահա թե ինչպես է գրվում պատմությունը։ Կապիտալիստների և դուտովականների «ազատ» մամուլից

Կաուցկին տեղեկություններ կստանար բանվորներին անցնող ֆաբրիկաների մասին...։ Ճշմարտապես հոյակապ է այս վերադասակարգային «լուրջ գիտնականը»։ Վոչ մեկը այն անվերջ քանակի փաստերից, վորոնք վկայում են, վոր ֆաբրիկաները հանձնվում են միայն հանրապետությանը, վոր նրանց տնօրինությունը պատկանում է Խորհրդային իշխանության մի որգանի՝ ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհրդին, վոր կազմված է արհեստակցական միություններից ընտրված բանվորների գերակշիռ մասնակցությամբ,—այդպիսի փաստերից և վոչ մեկը Կաուցկին չի ցանկանում շոշափել։ Նա համառորեն, պատենավոր մարդու կամակորությամբ պնդում է մի բան. տվեք ինձ խաղաղ դեմոկրատիա, առանց քաղաքացիական պատերազմի, առանց դիկտատուրայի, լավ վիճակագրությամբ (Խորհրդային հանրապետությունն ստեղծել է վիճակագրական հաստատություններ և գրավել Ռուսաստանի բոլոր լավագույն վիճակագրական ուժերը, բայց, իհարկե, չի կարելի շուտով ստանալ իդեալական վիճակագրություն)։ Մի խոսքով, հեղափոխություն առանց հեղափոխության, առանց կատաղի պայքարի, առանց բռնությունների,—ահա թե ինչ է պահանջում Կաուցկին։ Դա մեկ է, թե պահանջեք գործադուլներ առանց բանվորների և տերերի ուժգին կրքոտության։ Ապա տարբերեցե՛ք նմանորինակ «սոցիալիստին» սովորական լիբերալ աստիճանավորից։

Յեվ հենվելով այսպիսի «փաստական նյութի» վրա, այսինքն դիտավորյալ կերպով լիակատար արհամարհանքով անտեսելով բազմաթիվ փաստերը, Կաուցկին «յեզրափակում է»։

«Հասկանալի չե, արդյոք Խորհրդային հանրապետության մեջ ավելի չե ստացել ռուսական պրոլետարիատը իրական պրակտիկ նվաճումներ, վոչ դեկրետների իմաստով, քան թե կստանար նա Սահմանադիր ժողովից, վորի մեջ, ճիշտ նույնպես, ինչպես և Խորհուրդներում, գերակշռում եյին սոցիալիստները՝ թեպետև ուրիշ յերանգի» (եջ 58)։

Գոհար ե, չե՞։ Մենք խորհուրդ ենք տալիս Կաուցկու հարգողներին այս իմաստախոսությունը ըստ հնարավորության ավելի լայն տարածել ռուս բանվորների մեջ, վորովհետև ավելի լավ նյութ իր քաղաքական անկման գնահատականի համար Կաուցկին տալ չեր կարող։ Կերենսկին նույնպես «սոցիալիստ» եր, ընկեր բանվորներ, միայն «ուրիշ յերանգի»։ Պատմաբան Կաուցկին բավականանում ե այն մականունով, կոչմամբ, վոր «յուրացրել են» աջ եսերներն ու մենշևիկները։ Պատմաբան Կաուցկին լսել անգամ չի կամենում այն փաստի մասին, վորոնք ասում են, վոր Կերենսկու որով մենշևիկներն ու աջ եսերները սատարում եյին իմպերիալիստական քաղաքականությանը և բուրժուազիայի հինահարությանը (мародерство), նա համեստորեն լռություն ե տալիս այն, վոր Սահմանադիր ժողովը մեծամասնություն տալիս եր իմպերիալիստական պատերազմի և բուրժուական դիկտատուրայի հենց այդ հերոսներին։ Յեվ սա կոչվում ե «տնտեսական վերլուծություն»...։

Վորպես յեզրափակում՝ «տնտեսական վերլուծության» մի նմուշ ևս.

«...Իր գոյության ինն ամսից հետո Խորհրդային հանրապետությունը, փոխանակ ընդհանրական բարեկեցություն տարածելու, հարկադրված եր բացատրել, թե ինչից ե ծագում ընդհանրական կարիքը» (եջ 41)։

Կադետները վարժեցրել են մեզ այսպիսի դատողությունների։ Ռուսաստանում բուրժուազիայի բոլոր ծառայարկուներն այդպես են դատում. ապա տվեք ինն ամսից հետո ընդհանրական բարեկեցություն — 4-ամյա ավերիչ պատերազմից հետո, այն ժամանակ, յերբ ոտարերկրյա կապիտալն ամենակողմանի ոգնություն ե ցույց տալիս Ռուսաստանում բուրժուազիայի սաբոտաժին ու ապստամբություններին։ Իրոք վճռականորեն վոչ մի տարբերություն, տարբերության վոչ մի ստվեր չմնաց Կաուցկու և հակահեղափոխական բուրժուազիայի միջև։ «Սոցիալիզմի վոգով» կեղծած քաղցրիկ ճառերը կրկնում են այն, ինչ վոր կոպիտ կերպով, առանց այլևայլության, առանց զարդարանքների ասում են Ռուսաստանում կոռնիլովականները և դուտովականներն ու կրասնովականները։

* * *

Նախորդ տողերը գրված են 1918 թ. նոյեմբերի 9-ին։ 9-ից 10-ի գիշերը տեղեկություններ են ստացված Գերմանիայից՝ սկսված հաղթական հեղափոխության մասին նախ Կիլում և հյուսիսային ու ծովափնյա այլ քաղաքներում, վորտեղ իշխանությունն անցել ե Բանվորական և զինվորական պատգամավորների խորհուրդների ձեռքը, հետո Բեռլինում, վորտեղ իշխանությունը նույնպես անցել ե Խորհրդի ձեռքը։

Այն յեզրափակումը, վոր մնում եր ինձ գրել Կաուցկու և պրոլետարական հեղափոխությանը նվիրված բրոշյուրումս, դառնում ե ավելորդ։

1918 թ. նոյեմբերի 23 (10)։

Գրված է 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբերին։
Տպագրված է 1918 թ. առանձին գրքով։
«Կոմունիստ» հրատարակչ., Մոսկվա։

Տպագրվում է ըստ Երկերի 2-րդ և 3-րդ հրատ. բնագրի, հատ. XXIII, էջ 331—406։

Гос. Публ. Библиотека

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

Առաջաբան - - - - - - - - - - - - - - - - - - 3

Թե ինչպես Կաուցկին սովորական լիբերալ դարձրեց Մարքսին - - - - - - - - - - - - - - 8

Բուրժուական և պրոլետարական դեմոկրատիա - - - - - 27

Կարո՞ղ է արդյոք հավասարություն լինել շահագործվողի և շահագործողի մեջ - - - - - - - - - 41

Խորհուրդները չհամարձակվեն դառնալ պետական կազմակերպություններ - - - - - - - - - 53

Սահմանադիր ժողովը և խորհրդային հանրապետությունը - - - - - - - - - - - - - - 64

Խորհրդային սահմանադրությունը - - - - - - - - - 78

Ի՞նչ է ինտերնացիոնալիզմը - - - - - - - - - - - 94

Բուրժուազիային ծառայարկելը «տնտեսական վերլուծության» պատրվակով - - - - - - - - - - - - 117

Առաջա
Թ. Ե
»
Բ

ՀՀ Ազգային գրադարան
NL0179857

Գինը 1 ռ.
կազմը 65 կ.

ЦЕНА 1 Р
ПЕРЕПЛ. 65 К

В. И. ЛЕНИН

ПРОЛЕТАРСКАЯ РЕВОЛЮЦИЯ
И РЕНЕГАТ КАУТСКИЙ

Армпартиздат, Эривань 1935 г.